





832

L. II. 5









Մ Ո Ւ Ր Ձ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 7—8 1891

ՅՈՒՆԻՍ—ՕԳՈՍՏՈՍ

1891 № 7—8

ԵՐՐՈՐԿ ՏԱՐԻ

Թ Ի Յ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Գ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

1891

Доволено цензурою, Тифлисъ, 21 Юня 1891 г.

Типографія М. Д. Ротиніанца, на Голов. просп. соб. д. № 41.

Հ Ե Ղ Ի Ն Է

Վ Է Պ

Տ-ին Մ. ՄԱՐԻՍԵԱՆԻ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

(Նարունակութիւն 1)

XII

Աննա Գուրգէնեանը նկատում էր, որ Թոմասի գնալուց յետոյ Միհրանովան սկսել է իրան մտերմաբար վերաբերել: Թոմասի բացակայութիւնը մի կողմից, Հեղինէի հիւանդութիւնը միւս կողմից, շատ զգալի էին Գուրգէնեանի համար. նրանց առաջ նա կարող էր բանալ իւր սիրտը, նրանցից նա կարող էր լսել անկեղծ բարեկամական խօսք. իսկ այժմ զրկւած է այդ բազմաւորութիւնից, — Թոմասը հեռու է, իսկ Հեղինէն հիւանդ, շուտ-շուտ չի կարելի տեսնել: Այդ մէնակութեան զգացմունքը և բարեկամական չարաբերութեան կարօտութիւնը աւելի ևս սաստկացաւ, երբ որ Հեղինէն էլ գնաց Պետտիգօրսի: Այդ ժամանակ Միհրանովան սկսեց աւելի մտերմութիւն ցոյց տալ դէպի Աննան, — նա շուտ-շուտ ուղարկում էր նորա մօտ իւր աղջիկներին, կանչում էր նրան իւր մօտ: Այդպէս տանկբերելով իւր մօտ, սէր ու հոգատարութիւն ցոյց տալով, նա վերջապէս այնտեղը հասցրեց, որ Աննան ոչ միայն մոռացաւ իւր առաջ-

1) Տե՛ս «Մուրճ»- 1891 № 1, 2, 4, և 5:

ւան ատելութիւնը դէպի նա, այլ մինչև անգամ սխեց սիրել նրան:

— Աննա ջան, ինձ որ լսես՝ կը թողնես վարժուհու թիւնդ: Չահելութեանդ ծաղիկ օրերը ինչու ես սևացնում ուսումնարանի չորս պատի մեջ: Բացի անսխորժութիւնից ու մշտական անբաւականութիւններից՝ ինչ պէտք է տայ քեզ վարժուհութիւնը: Հաւատա իմ փորձառութեանս, այդտեղ սիրադ էլ կը փչանայ, խելքդ էլ: Բացի այդ՝ քո ընդունակութիւնների տէր մարդը ինչու պէտք է չը շարունակի ուսումը, փառք Աստուծո՛ւ տարիքդ էլ՝ ի՛նչ ուսում առնելու տարիք է:

Ամեն անգամ պատահելիս Միհրանովան այսպէս աւետարան էր կարդում Աննայի գլխին և Աննան հետզհետէ համոզուում էր որ նա ճիշտ է ասում:

— Աննա ջան, արի փոխիր մեր սուն, մեզ մօտ կաց. աղջիկներս քեզ այնպէս են սիրում, որ էլ ասել չի լինիլ, առաջարկեց մի օր Միհրանովան և սխեց համոզել որ Աննան անպատճառ փոխւի իրանց մօտ: Հազիր հիմայ ինձ էլ վարժուհի է պէտք փոքր աղջիկներին համար. նրանց հետ օրը որ մէկ-երկու ժամ պարապես՝ բաւական է, մնացած ժամանակը բոլորովին ազատ կը լինես ու երաժշտութեամբ կը պարապես. քո պէս հիանալի ածողը չը պէտք է անմշակ թողնի իւր տաղանդը: Վարձատրութեան կողմից էլ կարող ես ապահով լինել, հիմիկան ստացածիցդ աւելի կը ստանաս:

Աննան զգացւեց և ուզում էր պատասխանել, որ ինքը չի համաձայնիլ աւելի վերցնել, բայց Միհրանովան չը թողեց որ խօսի:

— Ինչու, հողիս, աշխատանքը պէտք է վարձատրւի: Դէ, վճուիր, հաւատա որ շես զղջալ:

Գուրգէնեանը երախտազխտութեամբ լի հայեացք զցելով իւր բարերարուհու վրայ, ինզրեց որ մի քիչ ժամանակ տայ մտածելու:

— Ձեմ խմանում, խաչը, մօրաքոյրերս ինչպէս կը վերաբերեն այդ բանին:

— Օ՛, այդ կողմից ապահով եղիր, նրանք ինձ շատ են սիրում: Ես մինչև անգամ կարող եմ յանձն առնել ձեզ հեշտացնել: Գու լաւ սիրո՞ւ ունիս, խոստովանիր, որ դարդ ես անում, որ նրանք քեզնից ատճոհ են:

— Ի հարկէ:

Մէնակ մնալով Աննան սկսեց մտածել, թէ ինչ անի՝ համաձայնի թէ ոչ, և երկար ժամանակ նա այնքան չէր զգացել իւր մտերիմ բարեկամների բացակայութիւնը և իւր կամքի թուլութիւնը որքան այժմ: Զրկւած նրանց համակրութեան արտայայտութիւնից ու քաջալերանքներից՝ նա օրէցօր աւելի ու աւելի վհատուում էր, չէր կարողանում կուել պատահած արգելքների ու անյաջողութիւնների դէմ: Թոմսուն ու Հեղինէն, չափազանցնելով Աննայի արժանաւորութիւնները, չէին նկատում, որ նա իւր լաւ կողմերով մեծ մասամբ պարտական է իրանց ազդեցութեանը: Նրանք չէին իմանում, որ Աննան պատկանում է այն մարդկանց թւին, որոնց համար ամենքի հետ հաշտ ու համաձայն ապրելու բախտաւորութեան ամենաանհրաժեշտ պայմաններից մէկն է:

Աննայի տատանելը շատ չը տւեց. վերջ ի վերջոյ նա վճռեց ընդունել Միհրանովայի առաջարկութիւնը և մի քանի օրից յետոյ փոխեց նրանց մօտ: Մի ներքին ձայն նրան ասում էր, որ նրա արածը չէր դուր գալ ոչ Թոմսուին, ոչ էլ Հեղինէին. բայց նա այնքան կամքի ոյժ չունէր, որ յաղթէր մորաքոյրերի հետ հաշտելու ցանկութեանը:

Աննայի՝ Միհրանովենց տունը փոխելու հետեւեալ օրը Պետերբուրգից եկաւ Միհրանովայի որդին—երիտասարդ գւարդխական, որին մայրը վաղուց սպասում էր, իսկ մի քանի օրից յետոյ նրանք անով գնացին Մանզլիս:

Ելիզաւետա Բողդանովնան շատ նկատումներով այդ տարի չէր ուզում ամարանոց գնալ. բայց քանի գնում շոքը գոռում էր, իսկ շոքի սաստկանալու հետ աւելի ու աւելի շուտ-շուտ էին զլխացաւ ընկնում թէ ինքը թէ իւր սիրելի Նադիան:

—Աչինչ, երբ ուզեմ կ'երթամ քաղաքը, մխիթարում էր նա ինքն իրան. մանաւանդ որ կտակը արդէն կազմւած է, իսկ պէտք եղած ձեւական պահանջներն էլ դժւար չէ կատարել. հէնց որ հիւանդը մի քիչ թեթեւութիւն զգայ, այդ էլ անել կը տանք: Մի բան է վատ, որ Ուրարովը վերջին հարւածից յետոյ թեթեւանալու նշան սկի ցօյց չի տալիս: Այդ անիծած քրոջ-աղջիկները որ չը լինէին՝ բանը պրծած էր, ինչ անես, որ չեն հեռանում: Մյ, այն եփեմիան, շատ չեմ եկածն է, սատանային թարս կը նայի, նրան

խաբել շատ դժւար է: Կարելի էր Պետրոսեանցին մէջ գցել, բայց նա շատ մօտ է Քոմանին ու դուցէ զլիսի ընկնի թէ բանն ինչու մն է: Ասենք այդ բոլորը իսկապէս դատարկ բաներ են. եթէ այս գործում մի ուրիշը խառը լինէր և ոչ թէ Ամիրանովը... սկի ուշադրութիւն չէի դարձնիլ, ձեռաց բանը զլուխ կը բերէի: Միխայիլ Պետրովիչի հետ այդպէս վարւել չի կարելի, պէտք է զգոյշ լինել, կոմսը նրան շատ է սիրում և աս հասարակ նա շատ կապեր ունի: Նա ինձնից ու մարդիցս աւելի ճարպիկ դուրս եկաւ, մեր առաջը տուեց, մենք էլ նրան պէտք չենք, նա էլ մեզ սկի մարդի տեղ չի դնում. ասենք այդ շատ բնական է: Տեսնենք ինչպէս կը վերջանայ այս գործը, առայժմ աւելի հաւանական է, որ Գուրգէնեանը ստանայ: Տայ Ատուած, որ Ուբարովը լաւանայ:

Այսպիսի մտածմունքներով ու հոգսերով էր զբաղւած Միհրանովան: Իսկ նրա աղջիկներն ու տղան Աննայի հետ ուրախ ժամանակ էին անցկացնում, մասնակցելով բոլոր պիկնիկներում, ձիով զբոսանքներում և առհասարակ ամարային բոլոր զւարճութիւններում: Սոֆիան նոր ուղղութեան օրիորդի հստակ ստանալով և երիտասարդութեան որոշ շրջանում համարմունք ձեռք բերելով, միւս կողմից հեռու չէր մնում և այն կեանքից, որով ապրում էր նրա միւս քոյրը, և որը իսկապէս նրան շատ էր դուր զալիս. ամարանոցում նա աւելի ևս անձնատուր եղաւ այդ կեանքին, — «հօ չի կարելի միշտ լուրջ բաներով զբաղւել, պէտք է մի քիչ հանգստանալ, ոչժ հաւաքել», արդարացնում էր նա ինքն իրան:

Վասիան (այդպէս էր Միհրանովայի տղայի անունը) շատ բարի, խելօք ու գեղեցիկ երիտասարդ է, օրը հազար անգամ կրկնում էին քոյրերը: Աննան, անդադար լսելով այդ նախադասութիւնը, վերջ ի վերջոյ ինքն էլ համոզուեց, որ երիտասարդ Միհրանովը գեղեցիկ, բարի ու խելօք է, մանաւանդ որ նա իւր բարեկրթութեամբ շատ բարձր էր Մանգլիսում բանակ զբաժնեւն երեւանեան գնդի բոլոր օֆիցերներին:

Աննան չիչեց, որ ինքն ու Միհրանովը, նրա անցեալ անգամ արձակուրդի եկած ժամանակը, մի քանի անգամ իրար պատահել էին և նա այն ժամանակն էլ իւր վրայ լաւ տպաւորութիւն էր գործում՝ թէ իւր գործիկան կերպարանքով թէ՛ ոգևորւած խօսակցութեամբ:

Այդ սպաւորութիւնը այժմ օրէցոր սաստկանում էր: Չիով ման գալը սկսել էր սաստիկ դուր գալ Աննային, Միհրանովը նրան սովորեցնում էր ձի նստել և միշտ ուղեկցում էր նրան զբօսանքների ժամանակ: Այդ բոլորը աչքի առաջ ունենալով զարմանալի չը պէտք է թւի, որ Աննան սկսեց գրաւուել քսան եօթ տարեկան բարձրահասակ ու գեղեցիկ զինւորականով: Միհրանովին էլ զւարճութիւն էր պատճառում սիրունատես Աննայի հետ ժամանակ անցկացնելը:

Ելիզաւետա Բոգդանովնային ուրախացնում էր նրանց մտերմութիւնը. նա ինքն իրան մտածում էր՝

Եթէ բան է յանկարծ Աննան ժառանգութիւնը չը ստանայ, Վասիաս այնքան խելօք է, որ ձեռք կը քաշի նրանից հասկանալով, որ անփող աղջիկը նրան հարկաւոր չէ: Նա կարող է այն ժամանակ մեզ մօտ մնալ իբրև վարժուհի, մանաւանդ որ դժւար է նրանից աւելի բարեխիղճ պարապող գտնել այժմ: Բացի այդ՝ Աննան շատ համեստ, քշով գոհ մնացող աղջիկ է, մի խօսքով մեզ համար գոնովի գանձ է:

Ամառուայ օրերն անցնում էին, իրար չտուկից բերելով Միհրանովների ու Աննայի համար նոր-նոր զւարճութիւններ՝ չը հաշուելով ամէնօրեայ զբօսանքները: Մի օր նրանք խմբով վերադառնում էին իրանց սովորական զբօսանքից շատ ուրախ տրամադրութեան մէջ: Կիսաճանապարհին Սոֆիան մօտեցաւ Աննային, թիւր անցրեց նրա թիւին ու յայտնեց իբրև ուրախ լուր, որ շուտով պիկնիկ պէտք է սարքեն ու կարգադրիչը իւր եղբայրը պէտք է լինի:

— Ուրեմն առաջուց կարելի է ասել, որ պիկնիկը հիանալի կը լինի, ոգևորւած նկատեց Գուրգէնեանը:

Միհրանովը երախտագիտութեամբ սեղմ.ց նորա ձեռքը ու սկսեց նրանց պատմել Պետերբուրգի կեանքից: Օրիորդները ուշադրութեամբ ականջ էին զնում: Այդ ժամանակ հեռուից նրանց առաջը դուրս եկան երկու ձիաւոր, որոնց մասին դժւար էր ասել թէ շատ շնորհքով էին նստած ձիու վրայ: Միհրանովներին էլ այդ էր պէտք. ծաղրի առարկայ դուրս. Վասիլը իւր սրախօսութիւնների տուրախը բաց արեց և օրիորդները սկսեցին քրքշալ:

Նրբ որ ձիաւորները այնքան մօտեցան, որ կարելի էր նրանց ճանաչել, և Աննան տեսաւ, որ նրանցից մէկը Պետրոսեանցն է, նա

կարմրեց, յիշեց Քոմաւէին և ամաշեց, թէ և այդ բոպէին երևի ինքն էլ չէր կարող բացատրել թէ ինչու: Այդպէս շփոթւած նա ձեռք տւեց Պետրոսեանցին, երբ որ նա իջաւ ձիուց ու մօտեցաւ նրան:

—Այս ուղքեր են, բաւական բարձրաձայն հարցրեց Միհրանովը՝ արհամարհական հայեացք գցելով Պետրոսեանցի վրայ:

Թէ և Աննան բարեկամական սէր էր զգում դէպի Պետրոսեանցը, բայց ամաչում էր Միհրանովների ներկայութեամբ նրան մտերմութիւն ցոյց տալ: Նա սկի մտքովն էլ չէր անցկացնում, որ Պետրոսեանցը իւր խաթրու է եկել, որ նա իրան հարազատ հօր նման է վերաբերում:

Պետրոսեանցը, կտարւելով Աննայի սառը ընդունելութիւններից, մի քանի խօսք արտասանեց քթի տակին, հեռացաւ ու անշտրհք կերպով թուաւ նստեց ձիու վրայ, որով նորից բարձրաձայն քրքիջ բարձրացրեց Միհրանովների խմբում:

—Ափսոս որ այդ համեստ աղջիկը այդպիսի անզգամների շրջանումն է գտնուում: Պէտք է աշխատել ազատել նրան այդ ճահճից: Այդպէս մտքի հետ ընկած նա մօտեցաւ իւր ծանօթ օֆիցէրի բնակարանին:

Միւս օրը համարեա ամբողջապէս Պետրոսեանցը անցկացրեց անտառում և այնտեղ մի քանի անգամ պատահեց Գուրգէնեանին, որ զբօսնում էր Միհրանովների հետ: Այդ օրն էլ պատահելիս Պետրոսեանցը նոյն տպաւորութիւնն էր ստանում ինչ որ առաջի օրը և նորա պլիտում նոյն մտքերն էին զարթնում: Վերջապէս նա վճռեց ուղղակի ասել Գուրգէնեանին, որ, եթէ նա սլաակի Քոմաւի հետ, աշխարհիս ամենաբախտաւոր կինը կը լինի, որ ոչ Միհրանովը, ոչ ուրիշ մէկը, ով էլ լինի, չի կարող նրան այնպէս սիրել ինչպէս Քոմաւէն է սիրում, որ Միհրանովները իրանց շահը ունին աչքի առաջ ու դորա համար են նրան սիրում—փայփայում, որ պէտք է առհասարակ զգուշանալ և այլն: Այդ բոլորը և շատ ուրիշ բաներ ունէր ասելու նա Աննային, բայց ամեն անգամ պատահելիս՝ Աննան այն աստիճանի անտարբերութեամբ էր վերաբերում նրան, որ նա չէր վստահանում իրագործել իւր վճիռը: Վերջապէս երկու օր անցած, երբ որ Պետրոսեանցը պէտք է գնար Մանգլիսից, նա կարողացաւ տեսնել Աննային մէնակ առանց Միհրանովների: Աննան նստած ան-

տառում ինչ-որ մի վէպ էր կարդում, իսկ մի քիչ հեռու Միհրանու վայրի փոքր աղջիկները խաղում էին կանաչի վրայ:

—Ախ, Տիգրան Աւետիչ, դուք դեռ այտոեղ էք, ասաց նա, աչքը գրգռեցը բարձրացրացնելով ու կարմրելով:

—Տեսնում էք՝ այտոեղ եմ:

—Իսկ ես կարծում էի, թէ գնացել էք:

Պետրոսեանցը նստեց նորա կողքին: Աննան շփոթւած չորս կողմը նայեց, կարծես ամաչելով այդ բանից: Պետրոսեանցը այդ նկատեց, բայց լռեց: Երկուսն էլ իրանց վառ էին զգում:

—Տեղեկութիւն ունէք Ղաւթ Սերամիչի մասին, վերջապէս հարցրեց Աննան, բայց երևում էր, որ նա այդ հարցը տւեց ոչ այնքան թոմաւելի մասին մի բան լսելու սաստիկ փափագից, որքան մի բան ասելու համար:

—Ի հարկէ, նա ինձ շուտ-շուտ նամակ է գրում: Նա ողջ-առողջ է և ձեզ բարևներ է ուղարկում:

—Չարմանալի է՝ նա ինձ ոչ մի նամակ չը գրեց:

Եւ չիշեց Աննան, որ սկզբում այդ իրան անհանդատացնում էր քանի որ դեռ ինքը չէր մոռացել թոմաւելին:

—Ես չեմ ուզում նրան արդարացնել, որովհետեւ նա իսկապէս մեղաւոր չէ. բայց միթէ դուք ինքներդ չէք հասկանում, որ նա ձեր օգուտը աչքի առաջ ունենալով է այդպէս վարւում:

—Ես միշտ հաւատացած եմ եղել, որ այդ է նորա լուծեան պատճառը:

—Որ այդպէս է՝ թոյլ տւէք ինձ, իբրև ձեր ընտանիքի ու Ղաւթի բարեկամին, ձեզ... մի քանի անկեղծ խօսք ասել:

Պետրոսեանցի ձայնում այն աստիճանի քնքշութիւն ու քաղցրութիւն էր հնչում, նորա՝ սովորաբար մուսլ՝ դէմքը այնպիսի ջերմ կարեկցութիւն էր արտայայտում, որ Աննան սկզբում շատ զարմացաւ, իսկ յետոյ սաստիկ զգացւեց:

Եղբայրը քրոջը չի կարող այնպէս սիրել... բայց այդ... չէ, աւելորդ է դորա մասին խօսել, յուզւած շարունակեց նա, քանի որ դուք ինձ չէք հաւատում:

—Ոչ, ոչ, ես ձեզ հաւատում եմ և երբէք սրտումս կասկած չի զարթել ձեր անկեղծութեան վերաբերմամբ:

—Ահա կարդացէք Դաւթի նամակը, որ աւելի ձեզ է վերաբերում քան ինձ: Փարսի նման կարծեմ թողել եմ տանը նամակը, ասաց նա քրքրելով զրպանները: Ափսոս մօտս չէ: Գրում է, որ իրան լաւ տեղ են խոստացել, որ սաստիկ կարօտով սպասում է այն օրին, երբ նորից կը տեսնուի ձեզ հետ և յոյս ունի որ շուտով կը կարողանայ իւր բախտը միացնել ձեր բախտի հետ: Ասէք, օրիորդ Աննա, համաձայն էք նորա կինը լինել, աղաչելով հարցրեց Պետրոսեանցը:

Օրիորդը սկզբում ոչինչ չը պատասխանեց. նա սաստիկ շփոթւեց ու մէկ՝ կարմրում էր, մէկ՝ գեղնում: Պետրոսեանցը հասկացաւ, որ իւր կողմից անտեղի բան էր այդպիսի հարց առաջարկելը, ուզողաց:

— Խաչը, չեմ իմանում, սկսեց մի փոքր լռութիւնից յետոյ Աննան... մօրաքոյրերս չեն համաձայնիլ... դուք չը գիտէք, թէ որքան դժւար բան է բոլորի կամքին հակառակ վարել...

Այդ ժամանակ մի ոտնաձայն լսեց: Աննան շփոթւեց ու նայեց չորս կողմը, կարծելով որ այդ Նաղիայի կամ նորա եղբօր ոտի ձայնն էր: Պետրոսեանցը այդ նկատեց:

— Արքան փոխել էք դուք, օրիորդ, ասաց նա դառնութեամբ: Դուք մի ժամանակ քաջ էիք, իսկ այժմ՝ վախենում էք թեթեամիտ մարդկանց չիմար ծաղրից: Աննան սաստիկ կտրուեց և պատասխանեց՝

— Սխալւում էք, ես չեմ փոխել, այդ ձեզ է այդպէս թւում: Այդ ասելով նա վեր կացաւ նստարանից ու գնաց դէպի Միհրանովը, որ գալիս էր նրանց կողմը:

— Ես ձեզ չէի ասում, Աննա Արտեմիեւնա, որ ինձ համար անկարելի բան չը կայ. միտքս դրեցի, որ ձեզ վաղւան համար մի լաւ ձի գտնեմ ու ձեռաց գտայ. մի հիանալի ձի է:

— Ճիշտ, ոգևորած բացականչեց Աննան ու շնորհակալութեան զգացմունքով սեղմեց Միհրանովի ձեռքը, իսկ մի քիչ յետոյ չիչելով, որ Պետրոսեանցից հեռացաւ առանց մնաս բարև ասելու, վերադարձաւ նորա մօտ:

— Մենք, Տիգրան Աւետիշ, վաղը գնում ենք կանաչ վանքը. չէք գալ միասին գնանք, կմկմալով առաջարկեց նա: Ինձ համար աշխարհքումս ձիով ման գալուց բարձր զւարճութիւն չը կայ:

—Ձէ, շատ շնորհակալ եմ, հազիւ լսելի ձայնով ու ահաճութեամբ արտասանեց Պետրոսեանցը:

—Էհ, մնաք բարև, ինձ սպասում են, ասաց Աննան ուրախ-ուրախ և, ձեռք տալով Պետրոսեանցին, ուզում էր հեռանալ, բայց նա չը թողեց:

—Օրիորդ, ներեցէք այսօրուայ անտեղի անկեղծութեանս հումար:

—Ես տո՞գոհ չեմ եղել ձեզանից որ ներեմ, ասաց Աննան, մտերմաբար նայելով նրան:

—Որ այդպէս է, կարո՞ղ եմ ես մի բան էլ ասել:

—Ատէք, ես լսում եմ, մոքամոլոր կերպով պատասխանեց Աննան նայելով օրիորդ Միհրանույններին ու նրանց ուղեկցող կաւայերներին, որոնք գալիս էին իրանց կողմը:

—Մի մոռանաք, օրիորդ, որ ամեն փայլուն բան ոսկի չէ: Ձեր նկատմամբ զանազան ակնկալութիւններ ունին, ձեզ ուզում են թաւարդել, զգոյշ կացէք: Թոմասից ազնիւ բարեկամ զուք երբէք չէք գտնիլ:

Աննան սաստիկ կարմրեց ու գլուխը քաշ գցելով կամաց ձայնով արտասանեց.

—Ձեմ հասկանում, թէ ինչու էք ասում:

Նա մասամբ հասկանում էր պատճառը, բայց ինքն իրան ուզում էր խաբել թէ չի հասկանում:

Պետրոսեանցի վերջին խօսքերը նորա վերայ սաստիկ ազդեցին: Նրան չանկարծ սկսեց տարօրինակ թւալ թէ Պետրոսեանցի իւր գործերում խառնւելը, թէ նորա գալը, և թէ մանաւանդ նորա շարագուշակ մարգարէութիւնը, որով, ինչպէս ինքը կարծում էր, նա աշխատում էր խանգարել իւր անդորրութիւնն ու ուրախութիւնը:

Այդպիսի տո՞գոհութիւն զարթեցրին Աննայի սրտում Պետրոսեանցի բարեկամական խօսքերը. բայց այդ զգացմունքը երկար չը տևեց. նա իսկոյն զղջաց, որ այդպէս ապերախտութեամբ է վերաբերւում Պետրոսեանցին, որը զէպի ինքը միշտ բարի է եղել և իւր վրայ շատ երախտիք ունի: Կարծես մի տեսակ զգալով Պետրոսեանցի նախազգուշացնող խօսքերի ճշմարտութիւնը, նա ուզում էր արգարացնել իրան նորա առաջ, բայց չանկարծ նկատեց, որ Պետրոսեանցը չը կայ:

Պետրոսեանցը, սաստիկ վրդովելով իւր տեսածից ու լսածից ու չը կարողանալով այլ ևս դիմանալ, նկատելով, թէ ինչ տպաւորութիւն գործեցին իւր վերջին խօսքերը Աննայի վրայ, համարեա փախաւ նրանից առանց մնաս բարև ասելու ու հէնց նոյն օրը գնաց Թիֆլիս:

Նորա գնալուց յետոյ Աննայի մէջ մի փոփոխութիւն էր նկատուում. երևում էր, որ պատճառը ինչ-որ մի մտածմունք է, որ նրան շատ զբաղեցնում, երբեմն և տանջում էր: Բայց շրջապատող քէֆ ու ուրախութիւնը շատ անգամ ցրւում էին Աննայի տխուր մտածմունքները, նորա տրամադրութիւնը փոխուում էր և նա ուրախանում էր առաջւայ պէս:

XIII

Սահառունու գնալուց մի շաբաթ անցած, Շակունին ու Հեղինէն էլ հեռացան Պետտիգորսկից: Հեղինէն երեք շաբաթ ծծմբային ջրերով բժշկելուց յետոյ, բժիշկների պատուէրով պէտք է գնար Կիսլովոդսկ, ուր սովորաբար սէզոնի վերջին հաւաքուում են հիւանդները՝ կազդուրւելու, իսկ առողջները՝ ուրախ ժամանակ անցկացնելու ու թարմ օդ ծծելու համար:

Սահառունին դեռ Կիսլովոդսկումն էր: Ակզբում, այդտեղ գալու հէնց միւս օրը, նա սկսեց մի մեծ յօդւած գրել, բայց լուրջ կերպով պարապել չէր կարողանում: Նա զարմանում էր համոզելով, որ զգացմունքը իւր վրայ կարող է այն աստիճան իշխել, որ վործից յետ գցի, զարմանում էր և սաստիկ դժգոհ էր իրանից. բայց ինչ պէտք է անէր, վերջ ի վերջոյ ստիպւած թողեց ու պարապ սպասում էր մինչև որ քրոջ գործը վերջացնի Պետտիգորսկում այն մարդը, որին ինքը յանձնել էր, իսկ ինքը աշխատում էր օրը մի կերպ մթնացնել չափչփելով Կիսլովոդսկի զանազան հետաքրքրական ու անհետաքրքիր անձիւնները:

Մի օր այդպէս դուրս էր եկել Սահառունին զբօսնելու ու անցնում էր մի խուլ ծառուղիով: Յանկարծ նա լսեց իշխան Շակունու ձայնը:

— Գէորգի Սլեքսանդրովիչ, ես էլ ասում եմ որտեղ էք, դուք

այստեղ էք եղեղ հա՞, ուրախ-ուրախ ու բարձրաձայն բացականչելով բարևեց նրան Շահունին:

Շահունին մէնակ չէր. նորա հետ էր Հեղինէն: Սահառունին ցնցւեց և սպրտեց: Նա մասների ծայրերով ձեռք տւեց Հեղինէին, կարծես ձեռքը սաստիկ սառն էր ու մի քիչ գողում էր:

Շահունին սկսեց պատմել իւր վերջին որսի մասին: Սահառունին մտքամոլոր լսում էր, իսկ Հեղինէն լուռ զնում էր նրանց յետևից մեծ դժւարութեամբ փոխելով քայլերը:

Իշխանին մօտէցան երկու հողի, որոնք նորա հին ծանօթներն էին և մի կողմ տարան խօսելու:

— Հեղիկ, ձայն տւեց նա հեռւից, ես զնում եմ ժողովարանը. դու Գէորգի Ալեքսանդրովիչի հետ ման արի ու խնդրիր որ այսօր մեզ հետ ծաշի:

Տեսէք, անպատճառ զաք, դարձաւ նա Սահառունուն. քանի մենք այստեղ ենք, դուք մեր մշտական հիւրն էք: Հեղինէն ուզում էր գնալ քեռու յետևից ու թողնել Սահառունուն, բայց մնաց մեխուած կանգնած տեղում, կարծես մի անդիմադրելի ոյժ պահում էր նրան:

Նա մնաց մենակ Սահառունու հետ: Երկուսն էլ սաստիկ յուզուած էին և կանգնած իրար դէմ ոչինչ չէին խօսում: Այդ անախորժ զրութիւնից զուրս գալու համար նրանք սկսեցին ման գալ և սկզբում լուռ ու այնպէս արագ, որ կարծես ուզում էին քայլած քիտ արագութեամբ չափաւորել իրանց խռովութիւնն ու վրդովմունքը: Երբ որ նրանք այդպիսով հասան ծառաստանի ամենաբարձր տեղը, ուր ոչ ոք չը կար, Հեղինէն շնչասպառ նստեց խոտի վրայ: Դարձեալ լուռ թիւն: Չէին իմանում ինչ անեն, ինչով սկսեն խօսակցութիւնը:

— Երբ էք եկել, յանկարծ հարցրեց Սահառունին:

— Երեկ չէ մէկ էլ օրը երեկոյեան:

Նորից տիրեց առաջնայ լուռ թիւնը:

Հեղինէն տանջւում էր անվճռական զրութեան մէջ, դարձնելով իւր մտքամոլոր ու շփոթուած հայեացքը երբեմն դէպի երկինք: Սահառունին զգում էր, որ նորա հայեացքը, երբեմն կանդ առնելով իւր վրայ, կարծես ինչ-որ խնդրում էր, ինչ-որ խոստովանութիւն էր արտայայտում: Լուռ էր Սահառունին և նորա լուռ թիւնը տւելի ևս սաստիկացնում էր Հեղինէի շփոթութիւնը. լսում էր նոյնպէս և նա.

նորա զլխում այդ ժամանակ հազար ու մի միաք էր ծագում, մտքերը խառնում էին իրար, շփոթւում, և բերանը խօսք չէր գալիս:

Վերջապէս լուռութիւնը անտանելի դարձաւ. երևում էր, որ հասել է վճռական բացատրութեան րոպէն: Սահառունին սկսեց խօսել, բայց Հեղինէն տեսնում էր, որ նա աշխատում է անտանելի լուռութեանը վերջ տալ խօսակցութեամբ, կամաւ ընտրելով այդ խօսակցութեան համար բոլորովին կողմնակի նիւթեր, որոնք ոչինչ կապ չունէին երկուսին էլ այդ րոպէին յուզող մտքերի ու զգացմունքների հետ: Իսկ ինքը Հեղինէն զգում էր, որ հետզհետէ կորցնում է կամքի ոյժը: Նա կարծես մոռացել էր, որ վճռել էր հաւատարիմ մնալ իւր պարտականութեանը և մնաձում էր միայն մի բանի մասին — իւր սէրի մասին. նա այդ րոպէին բոլորովին անձնատուր էր եղել այդ մտածմունքին: Վերջապէս նա, չը կարողանալով այլ ևս զսպել իրան, զղջաբար բռնեց Սահառունու ձեռները:

— Գէորգ, ես քեզ սիրում եմ... ոչ ոքի մինչև այժմ այնպէս չեմ սիրել, ինչպէս քեզ եմ սիրում...

Նրա ձայնը յուզմունքից կորուեց, նա աչքերը կախ զցեց ու գլուխը դրեց Սահառունու կրծքին: Սահառունին անզխակցաբար նրան զրկեց. առաջին րոպէին նրա աչքերը շաղկեցին, նա կարծես ուրախութիւնից իրան կորցրեց: Մի րոպէից յետոյ նա մի բանից վախւորածի պէս նրան յանկարծ բաց թողեց իւր զրկից:

— Ախ, Հեղինէ ջան, երջանիկ րոպէներ են այս րոպէները ինձ համար, բայց...

— Ախր, Գէորգ, ոգևորած ընդհատեց նրա խօսքը Հեղինէն, ձեռքը դնելով բերանին: Գիտեմ, թէ ինչ է անցնում մտքովդ, աւելցրեց նա մի քիչ յետոյ. բայց իմացած կաց, սիրելիս... որ ես ինձ երբէք այնպէս բախտաւոր չեմ զգացել, ինչպէս այժմ, երբ մենք երկուսով միասին նստած ենք այս հրաշալի ծառի տակ:

Նա բռնեց Սահառունու ձեռքը, որ երկար ժամանակ բաց չէր թողնում:

Երբէք աշխարհքը նրանց այնքան հրաշալի էր թւացել, երբէք բնութիւնը — այնքան սքանչելի, որքան այդ երջանիկ րոպէներին: Նրանց շուրջը կատարող ամենասովորական, աննկատելի երևոյթները, նրանց այժմ այդ ժամանակ մի առանձին նշանակութիւն և գե-

դեցկուծիւն էին ստանում, նրանց առաջ կարծէք նոր-նոր աշխարհ-ներ էին բացւում, հրապուրիչ, լուսաւոր աշխարհներ, որոնք նրանց քաշում, գրաւում էին դէպ իրանց...

Բայց ահա ինչ-որ խշխշոց բարձրացաւ թփերի մէջ և մի քիչ յետոյ լուեցին խօսակցութեան ձայներ: Սահառունին ու Հեղինէն ցնցեցին ու վեր թռան նստած տեղներիցը: Զորս կողմը նայելուց յետոյ, նրանք թւ թւի անցրին ու սկսեցին կամաց-կամաց իջնել ներքև: Նրանց դէմքերից ուրախութիւնը թափում էր:

— Հը, ուրախացել ես, որ վազվզելու ընկեր ես գտել, բարևեց քեռին Հեղինէին, երբ որ նա վազ տալով բարձրացաւ պատշգամբը:

Հեղինէն մի տեսակ տարօրինակ կերպով ծիծաղեց ու, համբուրելով քեռու ճակատը, շտապեց դէպի իւր սենեակը:

Միւս օրը Շակունին զնաց, Սահառունուն բերեց իրանց մօտ ճաշի: Դրանից յետոյ Սահառունին ամեն օր լինում էր նրանց տանը. բայց, ինչպէս երևում էր, աշխատում էր մէնակ չը պատահել և չը մնալ Հեղինէի հետ: Այդպէս անցաւ մօտ մի շաբաթ:

— Այս ինչու սկի չես երևում այստեղարենք, Գէորգ, մի քիչ յանդիմանօրէն ասաց Հեղինէն Սահառունուն, պատահելով մի անգամ ծառաստանում զբօնելիս:

— Աշխատում եմ շուտով վերջացնել յօդաձագ: Շատ հարկաւոր է:

-- Ինչու ես այսօր այդպէս գոչնդ զգած:

— Ինչպէս երևում է՝ բարկացած ես ինձ վրայ, Հեղինէ:

— Զէ, չէ, ես ընդհակառակը շատ ուրախ եմ, որ յօդաձագ գրում ես. ջանիս այն է դարդ դարձել, որ դու երեկոները մեզ մօտ երկար նստելով շատ ժամանակ ես կորցնում, որ յետոյ քնիցդ ես կտրում:

— Այդ ով է քեզ ասել:

— Տանտիկինդ, որ մեզ միշտ կանաչի ու կաթ է բերում: Զը գիտեմ ինչու, բայց ես շատ բան եմ սպասում քո գրածից, զգաց-լաճ ասաց Հեղինէն:

Սահառունին ժպտաց ու սինդ սեղմեց նրա ձեռքը:

— Ախ, Գէորգ ջան, ասաց Հեղինէն մի քիչ լուելուց յետոյ. երևիսայիս որ ինձ տային, էլ որ ամբողջ աշխարհքը հաւաքւէր՝ ինձ քեզանից չէր կարող բաժանել:

Երկուսն էլ սկսեցին մտածել երկխաչի մասին և տխրեցին, բայց

սէրը շուտ է փարատում տխրութիւնը. նրանք մօտեցան Շակունու բնակարանին առաջւայ ուրախ տրամադրութեամբ:

— Ինչ լաւ ես արել, Գէորգ, այսօր դուրս գալով ման գալու, թէ չէ սկի մէնակ խօսելու ժամանակ չենք ունենում, ասաց Հեղինէն իրանց տան մօտ:

Քեռին, հեռուից նկատելով նրանց, դուրս եկաւ նրանց առաջը և, ուրախութեամբ նայելով Հեղինէի ժպտած ժիծաղ դէմքին, համբուրեց նրա ճակատը:

Հեղինէի տրամադրութեան հետ առողջութիւնն էլ օրէցօր լաւանում էր. մարմինը առաջւայ պէս լցեց, դէմքը ստացաւ իւր առողջ ժամանակւայ թարմութիւնը ու կարմրութիւնը, աչքերի փայլը նորից վերադարձաւ:

Քեռին զարմանում էր, նկատելով այդ փոփոխութիւնը, որ նա վերագրում էր ջրերին ու կլիմային:

— Տեսէք՝ ինչպէս է լաւացել Հեղինէն, ասաց նա Սահառունուն մի օր ճաշից յետոյ: Գիտէք, Գէորգի Ալէքսանդրովիչ, վաս չէր լինել եթէ դուք էլ այստեղի ջրերում լողանայիք. միաքս գալիս է, որ դուք մի ժամանակ ասում էիք թէ ոսկրացաւ ունէք:

Հեղինէն շնորհակալութեան զգացմունքով նայեց քեռուն, յետոյ մեքենայաբար բաց արեց դաշնամուրը ու սկսեց օծել:

— Գիտէք, Գէորգի Ալէքսանդրովիչ, քեռու ասածը ճիշտ է, յանկարծ ասաց նա ու նայեց Սահառունուն մասամբ քաղցր, մասամբ խորամանկ հայեացքով, որը նա յետոյ դարձրեց քեռու վրայ:

Քեռուն այդպէս նայելիս Հեղինէն մի տեսակ եղաւ, կարծես ամաչում էր. նա յանկարծ զգաց, որ ինքը մեղաւոր է քեռու առաջ և նրա խիղճը սկսեց տանջել, որ քեռու հետ անկեղծ չի վարւում:

Սահառունին նկատեց Հեղինէի այլալուծիւնը և տխրեց: Իւր տխրութիւնը Հեղինէից ծածկելու համար՝ նա երեսը շուռ տւեց նրանից և սկսեց պատուհանից նայել վարար անձրևից յետոյ՝ սարերից թափւող հեղեղատների վրայ:

Նայում էր Սահառունին հեղեղատներին, բաց ուրիշ բանի վրայ էր մտածում. նրա զլխիցը չէր դուրս գալիս Շակունու առաջարկութիւնը, որ նրա սրտովն էր: Մի քանի օր էր, որ նա լուր էր ստացել թէ այն գործը, որի համար ինքն եկել էր, քրոջ օգտին են

վճռել, և ուրեմն նա այժմ ազատ էր ու կարող էր գնալ իւր գործին, բայց չէր կարողանում իրան յաղթել ու հեռանալ Հեղինէից և մի առիթ էր փնտրում կիսլովոզսկում մնալու համար: Հասկանալի է, թէ ինչու Նակունու խօսքերը նրան մտածելու նիւթ տւեցին: Կրանից էլ լաւ պատրւա՛կ:

Երգիծական մի ժպիտ ծամածուեց Սահառունու դէմքը և նա տհաճութեամբ մտածեց, թէ որքան ծիծաղելի և զզուելի է երբեմն մարդը, որ մինչև անգամ ինքն իրան խաբում է, ինքն իւր վերաբերմամբ քաղաքագիտութիւն է բանեցնում:

Ձէ, վաղը լոյսը բացւելուն պէս ճանապարհ կ'ընկնեմ դէպի Թ-ա: Ուղղակի արտասահման կ'երթայի, բայց տժբախտաբար պէտք է այդ մի քանի ամիս էլ յետաձգեմ: Մի քանի գործ կայ, պէտք է անպատճառ վերջացնել, բացի այդ՝ պէտք է փող ձարել, զոնէ այնքան, որ կարողանամ մի տարի ու կէս արտասահմանում զուլս պահել: Բայց այդ դեռ յետօվւայ բան է, դեռ մի այտտեղից հեռանամ: Աիրսա չի տալիս, բայց ինչ արած, պէտք է գնալ: Մենք անպատճառ պէտք է իրարից հեռանանք: Այտուհետև մեզ համար դժուար է բարեկամական շարաքերութիւնների սահմանից չ'անցնել, իսկ սիրոյ զգացմունքին անձնատուր լինելով՝ մենք ստիպւած պէտք է լինենք ծածկւել, թագնւել, կեղծել, խաբել և ուրեմն պէտք է շարունակ մտատանջութեան ու խղճահարութեան գոհ լինենք:

Ձէ, չէ, ինձ համար շատ թանկ է Հեղինէի հանգստութիւնն ու անունը: Իս' այդ նորա կեանքը դժոխք կը դարձնի: Աւրեմն, բարի ճանապարհ ինձ, համարեա լսելի ձայնով արտասանեց Սահառունին:

Այդ բոլորին Հեղինէն մօտեցաւ նրան. Հեղինէի շորերի խշխշոցը սթափեցրեց նրան մտախոհութիւնից:

—Ար մնաս, հա՛, կամաց ձայնով հարցրեց նա, նայելով նրան աղաչող լի հայեացքով:

Սահառունին կարգաց նորա հայեացքում այդ աղաչանքը ու բացասական պատասխան ստանալու երկիւղը, և աւելի սաստիկ գունաթափւեց: Նա ոչինչ չը պատասխանեց ու գնաց գլխարկը վերցնելու: Իշխան Նակունին, որ նստած բազկաթոռում ննջում էր այն սեղանի կողքին, որի վրայ դրած էր գլխարկը, սթափւեց Սահառունու մօտենալուց:

—Ո՞ւր, ո՞ւր, մի քիչ էլ նստէք, կը խօսէք Հեղինէի հետ, իսկ ես գնամ գլուխս դնեմ բարձին. այսօր շատ ման եկաց, յոգնել եմ:

Այդ ասելով Նահունին գնաց իւր սենեակը:

Հեղինէն, Սահառունու ձեռքից գրիարկը խլելով, նրան տարաւ պատշգամբը:

—Գէորգ, զուշակում եմ, որ ուզում ես այստեղից հեռանալ: Նա հաղիւ նկատելի կերպով գլխով արեց:

—Ասա, ինչո՞ւ ես գնում:

Սահառունին խորը-խորը նայեց Հեղինէին. կարծես ուզում էր, որ նա ինքը պատասխանի իւր հարցին:

—Զարմանում եմ, որ հարցնում ես թէ ինչու եմ գնում:

Մի րոպէ Սահառունին կանգ առաւ, կարծես աշխատելով սրտապնդել, յետոյ յուզւած շարունակեց.

—Էլ իրարից գաղտնիք պահելը զուր է մեզ համար, պարզ խօսենք: Կարծում ես՝ ես չը նկատեցի թէ ինչ էիր զգում զու մի քիչ առաջ քեռուդ նայելիս: Ինչ որ այն ժամանակն էիր զգում, այսուհետեւ ամեն րոպէ կը զգաս և օրէցօր աւելի սաստիկ, մանաւանդ երբոր մարդը վերադառնայ, ուզում էր աւելցնել Սահառունին, բայց իրան զսպեց: Ինքդ ասա, լաւ կը լինի որ ես մնամ ու տեսնեմ ամեն օր զաղտնի տանջանքները և զգամ, որ ես եմ այդ բոլորի պատճառը:

Ձէ, Հեղինէ, զու չես կարող կեղծել, քո պէս մաքուր հրեշտակի համար խօսքելու դերը անտանելի կը լինի:

Հեղինէն բռնեց Սահառունու ձեռքը և երկար ժամանակ լուռ նայում էր նրան, վերջապէս խորը հոգոց քաշեց:

—Շատ կարելի է, ճիշտ ես ասում, Գէորգ, դժւարութեամբ արտասանեց նա, ու աչքերը արտասուակալեցին:

Ուրեմն մենք պէտք է բաժանուենք, հեռանանք իրարից, ես այդ պէտք է առաջուց իմանայի: Դորա համար էր, որ դու փախչում էիր, չէիր ուզում ինձ հետ պատահել: Վաղը ուղիղ երկու շաբաթ կը լինի Պետտիգորսկից մեր դուրս գալու օրից: Կեանքիս առաջին ու կատարեալ երջանկութեան րոպէները, — այո, առաջին և կատարեալ երջանկութեան, որովհետեւ ես առաջ չը զիտէի թէ ինչ է իսկական սէրը և երկու սրտերի կատարեալ ներդաշնակութիւնը, —

ինձ մոռացնել տեցին, որ այդ երջանկութիւնը երկարատե չի կարող լինել, որ շուտով սկսելու է իմ առաջւայ անտանելի կեանքս, բերելով իւր հետ դարձեալ նոյն դժոխքը. մի կողմից օրինաւոր ամուսինս իւր եսական պահանջներով, միւս կողմից մինչև ուղուծուծը կեղծաւորութեամբ վարակեած հասարակութիւնը:

Քանի իստում էր Հեղինէն, այնքան սաստկանում էր նորա յուզմունքը. կուրծքը սաստիկ բարձրանում— իջնում էր:

Յանկարծ դուռը ճրուռաց: Հեղինէի սիրտը վկայում էր որ լաւ բան չի լինելու. նա մնաց սառած, աչքերը շարեցին և նա միայն ձեռով կարողացաւ նշան անել Սահառունուն, որ տեսնի թէ ով է:

— Հեռագիր է: Կարդացէք տեսնենք ինչ է, ասաց Սահառունին, աշխատելով ցոյց չը տալ իւր վրդովմունքը:

Հեղինէն ջղաձգաբար բաց արեց հեռագիրը ու կարդաց. «Այսօր ճանապարհ եմ ընկնում Պետերբուրգից Ք-ս: Փասանգութիւն եմ ստացել քեռուց: Մէկ-երկու շաբաթից յետոյ կը գամ այգտեղ: Համբուրում եմ քեզ ու Գէորգիկիս: Ամիրանով»:

Հեղինէի ձեռքերը թուլացան, կախ ընկան, աչքերը սառեցին. նա լուռ ընկաւ բազկաթուռի վրայ ու գլուխը քաշ գցեց: Սահառունու սիրտը կսկծից այրում էր նրան նայելիս. նա տեսնում էր, թէ ինչ բարոյական տանջանքներ է զգում խեղճ կինը, և, սեղմելով նորա սառը ձեռքը իւր կրծքին, աշխատում էր հանգստացնել նրան ու աղաչող ձայնով ասում.

— Ինչ եղաւ քեզ, հոգիս, ինչու ես քեզ տանջում... տեսնենք, կարելի է մի բան պատրաստ եմ անել քեզ համար:

— Գիտեմ, Գէորգ ջան, որ դու ինձ համար ոչինչ չես խնայիլ, բայց դժբախտաբար դու ոչինչ չես կարող անել: Ուզում էիր գնալ, հէնց այսօր գնա: Մենք պէտք է աշխատենք որքան հնարաւոր է չը պատահել իրար, — այդ է, ինչպէս երևում է, մեր ճակատագիրը: Լաւ մխիթարութիւն է, չէ՞: Ախ, Սառուած, ինչ է լինելու իմ օրը, բողբոլին անտանելի է այդ մարդը ինձ համար: Ես չեմ կարողանում տանել նրան, իսկ պարտական եմ տանել, Գէորգ, նա իմ երեխայիս հայրն է, երեխայիս, որին ես պաշտում եմ և որի համար ամեն բան պատրաստ եմ անել:

— Լեղինէ, ներիր, որ անգթաբար խռովեցի հոգուդ անդորրութիւնը:

— Անդորրութիւնս առանց քեզ էլ վաղուց խանգարած էր: Զուր էիր աշխատում փախչել ինձանից. հաւատացած կաց, ուր որ լինէիր, ես կը գտնէի քեզ ու կ'ասէի, որ դու իմն ես, բացականչեց Լեղինէն ջղալին զողով բռնելով նրա ձեռքը:

— Մեր սէրը, հոգիս, մեզ համար ամենալաւ նեցուկը կը լինի կեանքի բոլոր ծանր րոպէներում, ոգևորած ասաց Սահառունին:

Գնանք, մի քիչ ման գանք ծառաստանում, այնտեղ տիրութիւնդ մի քիչ կ'անցնի, առաջարկեց նա մի քիչ յետոյ:

Հիանալի երեկոյ էր: Մասատանում տիրում էր խորին լուսութիւն, որ խանգարում էր միայն մեծ ու տերեւախիտ ծառերի միջով հոտոյ լեռնային գետակի խշխշոցը:

Սահառունին ամեն միջոց զործ էր դնում Լեղինէին հանգստացնելու համար: Փամը իննին մօտ էր, երբ նա, Լեղինէին տուն հասցնելով, վերադարձաւ իւր սենեակը ու սկսեց ճանապարհի պատրաստութիւն տեսնել: Իսկ Լեղինէն վազէվազ գնաց իւր սենեակը, ընկաւ երկխալի մահճակալի վրայ ու սկսեց պաշպչել նրան՝ կարծես զրանից պէտք է իւր բարոյական ոյժը աւելանար:

— Աչքդ լոյս, Լեղինէ, մարդդ այս քանի օրս կը գայ, ասաց քեռին հեռագիրը ձեռքին մտնելով սենեակը: Հը, ուրախութիւնիցդ լաց ես լինում: Ե՛լ, լաշակաւորներ, ոչ ուրախութեանն էք կարողանում զիմանալ, ոչ դարդին, ու դեռ ուզում էք տղամարդկանց հաւատարեւել:

Լեղինէն ծիծաղեց դառն ծիծաղով: Քեռին որ սենեակից դուրս եկաւ, նա ընկաւ խորը մտածմունքի մէջ: Այդ րոպէին միայն նա բոլորովին պարզ զգաց, թէ ինչ սե օր է լինելու իւր օրը:

Միւս օրը առաւօտեան Սահառունին եկաւ Լեղինէի հետ ֆնաս բարև անելու: Եակունին տանը չէր: Լեղինէն տխուր ու գունաթափ դուրս եկաւ նրա առաջը նախասենեակում:

— Ախ, հոգիս, կրկին ներսդութիւն եմ ինդրում այն բոլոր տանջանքների համար, որ ես քեզ պատճառեցի:

— Ինչպէս ես խօսում, Գէորդ, շատ վատս է թւում, որ դու ինձ այդպիսի բաներ ես ասում: Ես զիտեմ քո բնաւորութեան հաս-

տատութիւնը, դու կը մեռնէիր ու իմ հանգստութիւնս չէիր լսանգարիլ. ե՛ս... ե՛ս թոյլ եմ, չը կարողացայ զիմանալ ու շարունակել այդ տանջող լուութիւնը: Բայց կը հաւատա՞ս, ես ուրախ եմ որ այդպէս եղաւ:

Սահառունին բռնեց նորա ձեռքը և զգացած սեղմեց իւր շրթունքներին:

— Լսիր, Գէորգ, իմ ինքնասիրութիւնս չի վերցնում, որ ես չը սիրելով մարդուս, նորա հաշտօնն եմ ապրում. ինձ համար, խնդրեմ, մի պարապմունք գտիր: Վաղուց է ծագել այդ միտքը իմ մէջ:

— Լա՛ւ, բայց ինչ տեսակ պարապմունք ես ուզում որ գտնեմ:

— Դաս, կամ թէ չէ՝ կ'աշխատեմ ուսումնարան բաց անել:

Սահառունին գիտէր, որ Սմիրանովը չի թողնիլ որ Հեղինէն իրագործի իւր այդ զիտաւորութիւնը. բայց չ'ուզեանալով ցաւացնել նորա սիրաը, այդ առանց այն էլ ծանր բողբոջէր, նա ոչինչ չ'ասաց:

Երբ որ վերջապէս Սահառունին բաց թողնելով Հեղինէի ձեռքը, համարեա վազէվազ դուրս գնաց սննեակից, Հեղինէն քիչ էր մնում վազ տար յետեւիցը, ընկներ գիրկը և խնդրէր, որ մի քիչ էլ մնայ կիսովորդսկում, բայց նա, թէև մեծ դժարութեամբ, իրան զսպեց:

Ներքին կուից ուժասպաս եղած Հեղինէն թոյլ-թոյլ մտտեցաւ պատուհանին և երկար ժամանակ նայում էր Սահառունու կառքին, որ արագ-արագ հեռանում էր: Վերջապէս, երբ որ կառքը բոլորովին աներևութացաւ, Հեղինէն լացակրկնած ընկաւ բազմոցի վրայ և այդպէս մնաց մինչև երեկոյ:

XIV

Օգոստոսի վերջերքին Ուրարովը մեռաւ: Նրանից յետոյ ոչ կտակ մնաց, ոչ էլ մի ուրիշ թուղթ: Ամբողջ ժառանգութիւնը այդպիսով պէտք է հասնէր Սմիրանովին՝ իրրև օրինաւոր ժառանգի: Նա, հեռագիրը ստանալուն պէս, թուաւ դէպի Թ-ս: Այնքան շտապում էր, որ ճանապարհին չ'ուզեց մի քանի ժամ կորցնել ու գնալ կնոջն ու երեխային տեսնելու:

Սմիրանովի գալու հետևեալ օրը առաւօտեան Պետրոսեանցը եկաւ նորա մօտ: Առանձնասնտկում մի քանի հոգի կային նստած: Սմիրանովը սովորականից ուրախ էր երևում:

— Ես եկել եմ ձեզ հետ խօսելու ձեր ժառանգութեան մասին, սառը-սառը սկսեց Պետրոսեանցը հիւրերի հեռանալուց յետոյ:

— Սկսէք, ես պատրաստ եմ ձեզ լսելու, պատասխանեց Ամիրանովը մի քիչ շփոթւած:

— Ձեզ էլ, շատ ուրիշներին էլ երևի յայտնի է, որ պարոն Ուրարովը ինձ հաւատ էր ընծայում աւելի քան ուրիշ ծանօթներին և ինձնից շատ բան չէր ծածկում: Կա ինձ մի օր կանչեց վկայ լինելու իւր կտակին, որ կազմում էր յօգուտ օրիորդ Գուրգէնեանի և հայոց թեմական դպրանոցի: Այդ հանգուցեալի ամենամեծ բաղձանքն էր մինչև իմ վերջին տեսակցութիւնը նորա հետ և, ինչ էլ ասեն, ես չեմ հաւատալ, որ նա կարող է դաւաճանած լինել իւր խոստմանը:

— Ձեմ հասկանում, ճիշտն ասած, թէ ինչ էք ուզում ասել այդ յառաջաբանով:

— Այն, որ ես կ'ուզենայի իմանալ... արդեօք մի բան կը հասնի... այսինքն... դուք ամբողջ ժառանգութիւնը ձեզ կը վերցնէք:

Պետրոսեանցը ուզում էր կարգին բացատրել իւր միտքը, բայց չը կարողացաւ մասամբ ճարտասանական ընդունակութեան, մասամբ էլ սառնասրտութեան պակասութեան պատճառով:

— Հապա ինչ անեմ որ ամբողջապէս չը վերցնեմ, զարմացած հարցրեց Ամիրանովը:

— Բաժանեցէք մասամբ այնպէս, ինչպէս ինքն էր կարգադրել: Ամիրանովը ծիծաղեց արեւոտական քմծիծաղով:

— Կը հրամայէք որ ես լոկ ձեր խօսքին հաւատամ, կամ թէ դուք բացի այդ մի որ և է իրական ապացոյց ունէք:

— Իժբախտաբար չունիմ, բայց եթէ բանը այդտեղ հասնի, դժւար չի լինիլ գտնել: Ասենք ես փաստաբան չեմ, բայց հօ աշխարհքը ինձ վրայ չի կանգնած, մէկին կը ճարենք, կ'ապացուցանի:

Ես ձեզ խորհուրդ կը տայի, Միխայիլ Պետրովիչ, մի քիչ անելի սառնասիրտ կերպով շարունակեց Պետրոսեանցը, մասնաւոր կերպով ու հաշտութեամբ վերջացնել այս գործը՝ թէկուզ հէնց ձեր անձնական հանգստութեան համար: Ես հաւատացած եմ, որ թէ դուք, թէ ձեր քայրերը ինձնից լաւ գիտէք հանգուցեալի կամքը:

— Ես ոչինչ չը գիտեմ, խիստ կերպով պատասխանեց Ամիրանովը

Համբերութիւնից դուրս գալով: Ձեր ասածները դատարկ բաներ են:

Որ այդպէս է, սպասիր, ես ցոյց կը տամ թէ ինչ տեսակ դատարկ բաներ են,—մտածեց Պետրոսեանցը, և աչքերը վաղլատակեցին:

—Կտակը իմ աչքի առաջը կազմեցին, հետաքրքրական է իմանալ ինչ է եղել այդ կտակը: Կարծում էք, ես չեմ հասկանում, թէ վերջին օրերը ինձ ինչու չէին թողնում հիւանդի մօտ: Դուք կարծում էք, ես չը գիտեմ, թէ հիւանդի մօտ ինչ դեր էին խաղում ձեր քոյրերը, — հետզհետէ աւելի տաքանալով շարունակում էր Պետրոսեանցը: Ես Ուբարովի տանու բժշկից վկայական եմ վերցրել, որի հիման վրայ կարելի է հաստատել, որ հիւանդը ինքը չէր կարող ոչնչացնել այդ կտակը, որովհետեւ բժշկի վկայութեամբ այդ կտակը կազմելուց յետոյ՝ նա ոչ ձեռքերն էր կարողանում շարժել, ոչ էլ լեզուն, որ պատուիրէր ճղել կամ ինքը ճղէր: Հետեւաբար կտակը չի ոչնչացրած, այլ կորել է. հաւանական է, որ կասկածը կ'ընկնի այն մարդկանց վրայ, որոնց ձեռնտու էր կտակի կորչելը և որոնք վերջին ժամանակները հիւանդի կողքից չէին հեռանում:

—Ինչպէս էք համարձակում, պարոն, այդպիսի բաներ ասել,— յարձակեց Պետրոսեանցի վրայ Ամիրանովը սաստիկ գունաթափած:

—Մի վախենաք, ես այնքան չարգում եմ տիկին Հեղինէին, որ չեմ տարածիլ այս բանը, բայց միայն այն պայմանով, որ դուք ձեր ժառանգութեան մի մասը տաք...

—Նեղութիւն մի կրէք, պարոն, ինձ զանազան պայմաններ առաջարկելու: Լաւ իմացէք, որ առաջինը՝ ես ձեր սպառնալիքներից չեմ վախենում, իսկ երկրորդը՝ ձեր բամբասանքներին ոչ ոք չի հաւատար:

Պետրոսեանցի համբերութիւնը հատաւ, ուզում էր պատասխանել, բայց Ամիրանովը չը թողեց խօսի:

—Խնդրեմ ինձ հանգիստ թողնէք: Այս քանի օրս կ'իմանաք, թէ ինչ եմ վճռել ես:

Պետրոսեանցը իւր սովորական անհոգ ձևով գլուխ տուեց ու դուրս եկաւ:

Ինչպէս տեսնում եմ՝ մեր հոգեօրը վախեցաւ, — յաղթական ժպիտով մտածեց նա սանդուխքներով իջնելիս:

Հէնց որ դուռը յետ եղաւ Պետրոսեանցի յետևից՝ Ամիրանովը ընկաւ բազկաթուռի վրայ ու ազատ շունչ քաշեց:

Ո՞ր դժոխքից եկաւ այդ անիծածը,—բարկացած ասաց նա ատամները կրճտացնելով ու սկսեց մտածել թէ ինչ ճար անի Պետրոսեանցից ազատուելու համար, բայց ոչինչ չէր կարողանում վճռել ու երկար ժամանակ տանջուժ էր խառն ու շփոթ մտածմունքի մէջ:

Պետրոսեանցի առաջարկութիւնը սկի Ամիրանովի գլխիցը չէր հեռանում. նա ուրիշ ոչ մի բանով չէր կարողանում զբաղել: Շատ էր մտածում, բայց ոչինչ վճռել չէր կարողանում: Վերջապէս Պետրոսեանցի հետ ունեցած խօսակցութեան չորրորդ օրը Ամիրանովը կարծես ուզում էր մի բան վճռել: Խորը մտածմունքի մէջ նա մտն էր գալիս սենեակում: Դէմքի վրայ չէր երևում առաջւան տատանմունքը: Յանկարծ դուռը ճրուռաց: Նա արագ շուռ եկաւ, առաւ ծառայի ձեռքիցը ծրարը և՛ չը բացած՝ շարուեց դէն:

— Կանցելարիայիցն է:

— Այո:

— Լաւ: Ով որ գայ, չ'ընդունես, հասկացա՞ր: Ասա, որ ես տանը չեմ, լսեցի՞ր:

Ծառան դուրս դնաց:

Ձէ, ինչպէս տեսնում եմ՝ պէտք է Պետրոսեանցի պահանջը կատարել օր առաջ՝ քամի որ կինս չի եկել, թէ չէ, որ Պետրոսեանցի բերանը հիմա չը փակեմ ու կինս գայ այդ լուրերը լսի, կարելի է բոլորովին խռովի ինձանից, ինքն իրան հետ խօսում էր Ամիրանովը և մտածում էր, թէ ժառանգութեան ինչ մասը տայ, որ իւր համար զգալի չը լինի:

Շատ դժար հարց էր: Նա նստեց բազկաթոռի վրայ և այդպէս մնաց երկար ժամանակ նստած ու գլուխը երկու ձեռքով բռնած: Վերջապէս վեր թռաւ նստած տեղից ու բռունցքով սեղանին խփելով բացականչեց.

— Ո՛չ, ես իմ իրաւունքներս ոչ ոքի չեմ զիջիլ: Որ այդ Պետրոսեանցը իւր մարդասիրական գաղափարներով կոտրած գգալի նման ամեն բանի մէջ չը խառնուի՝ չի լինիլ: Ինչո՞ւ չէ, ուրիշի փողերէ համար ես էլ լաւ մարդասէր կարող եմ լինել, դրանից էլ հե՛շտ բան:

Նրա դէմքը ծամածուեց շարանեկ ծիծաղից:

Իայց եթէ, յանկարծ անցաւ Ամիրանովի մտքովը, Պետրոսեանցը

ճիշտ որ... նրանից այդ սպասելու է... նա իմ դէմ սաստիկ զրգուած է և՛ բացի այդ՝ հաստատակամ ու տաք մարդ է... ճարպիկ փաստաբան որ վարձեն, կարելի է տուտը գտնեն... այն ժամանակ ես ամեն բանից կը զրկեմ... Ասենք հաստատելը շատ դժուար է, բայց ես շատ հեշտութեամբ կարող եմ խայտառակել:

Այդ ենթադրութիւնը սաստիկ մտառանջութեան մէջ զցեց Ամիրանովին: Նա այնպէս այլալլեց, կարծես մէկ երկու բոպէից յետո՛ք բանը պէտք է բացէր:

Ձէ, առանց զիջումի բանը վատ կը վերջանայ. պէտք է մի քսան—երեսուն հազար զոհել. թէ չէ, ամեն բան մի կողմ դրած, յիմար կինս ինձ հանգստութիւն չի տալ: Մինչդեռ, եթէ այդ զուամարից ձեռք քաշեմ, շատ լաւ սպաւորութիւն կը գործեմ: ամբողջ հայ հասարակութեան վրայ: Հա՛, մի բան էլ պէտք կը լինի նւիրել Բարեգործական ընկերութեանը, թէ չէ կոմսուհին ինձնից դժգոհ կը մնայ: Ե՛հ, այդ էլ մի պատիժ եղաւ իմ գլխիս, սրա՛ն տուր, նրան տուր, աշխարհքի փող դուրս կը գայ այդպիսով...

Նա սկսեց սենեակում յետ ու առաջ քայլել՝ սաստիկ բարկացած:

Բայց չը լինի թէ այդ զիջումով ես կասկածներ զարթեցնեմ իմ դէմ, — յանկարծ անցաւ նրա մտքով: Պէտք է շատ զգոյշ վարուել, — համարեա լսելի ձայնով արտասանեց նա ու սաստիկ մտահոգ նստեց զրասեղանի առաջ:

Երկար ժամանակ չարչարում էր նա մի նամակի վրայ, գրում — ջնջում էր, յետոյ նորից գրում՝ էլի ջնջում, մինչև որ վերջապէս ի՛նչ դժուարութեամբ վերջացրեց, ջնջելը թողեց ու՛ մաքուր արտագրելուց յետոյ՝ զանգը լսփեց:

Ներս մտաւ ծառան:

— Ձեռաց այս նամակը հասցրու Պետրոսեանցին: Նա «Ամբիկա» հիւրանոցումն է կենում:

Ծառան զարմացած նայեց Ամիրանովին ու դուռը կամաց յետ դնելով դուրս գնաց:

Ծառանգութեան գործերը կարգի դնելուց յետոյ, Ամիրանովը գնաց Պետրոզորսի կնոջը բերելու: Նա դեռ ճանապարհին առաջուց ուրախանում էր երևակայելով, թէ ինչ սպաւորութիւն կը գործի կնոջ վրայ իւր խոշոր նւիրատուութիւնը, բայց կինը նրա սպասածին

հակառակ բոլորովին անսարքեր վերաբերեց այդ լուրին: Հասկանալի է, որ Հեղինէի համար վերջին դէպքերից յետոյ մարդու հետ հանդիպելը շատ ծանր էր. նա սաստիկ լարած դրութեան մէջ էր. նա զգում էր, որ ինքը ակամայ խաբում է մարդուն, ծածկելով նրանից եղածը: Այդ բոլորը այն աստիճան ազդեցին Հեղինէի վրայ, որ նա մի քանի օր հիւանդ պարկեց: Ամիրանովը կարծում էր, թէ ջրերն էին թուլացրել կնոջը և աշխատում էր օր առաջ ճանապարհ ընկնել դէպի Թ-ս: Մի քանի օրից յետոյ նրանք սկսեցին ճանապարհի պատրաստութիւն տեսնել: Հեղինէի սիրաւ պոկ չէր գալիս այդ տեղերից, որ այժմ նրա համար նւիրական էին դարձել: Նա երևակայութեամբ վերջին հրաժեշտն էր տալիս այն բոլոր տեղերին, ուր այնքան քաղցր ընկերներ էր անցրել:

Վերջապէս հասաւ տխուր րոպէն: Նրանք ճանապարհ ընկան: Երբ որ Պետտիգորսկը բոլորովին աներևութացաւ նրանց աչքերից, Հեղինէն խորը հոգոց քաշեց: Նա պինդ փաթաթեց շալի մէջ ու քաշեց կառքի մի անկիւնը: Ամբողջ ճանապարհին նա համարեա մի խօսք չ'արտասանեց ու ոչնչի վրայ ուշադրութիւն չէր դարձնում, միայն երբեմն — երբեմն նայում էր երեխային, պաշպում ու սեղմում կուրծքին:

Միևթարիւր մօրդ, կրակ վառիւր սրտումը, անգին բալիկս, — ասում էր նրա գորովալից հայեացքը:

Որքա՛ն դատարկ էր կեանքս, որքան սառն էր սիրտս մինչև նրա հետ մտերմանալս. այժմ դարձեալ նոյն դատարկութիւնն ու սառնութիւնն եմ զգում, — մտածում էր նա մտննալով Թ-սին:

Քանի մտննում էին նրանք Թ-սին, այնքան Հեղինէն աւելի տխրում էր կարծես մի ահագին քար դրած լինէր նրա կրծքին. սրտիս դանակ տայիր՝ արիւն չէր կաթիլ: Իսկ Ամիրանովը, որ սկզբում շուտ-շուտ հարցնում էր կնոջը թէ ինչու տրամադրութիւնը տեղը չէ, Թ-սին մտննալով բոլորովին մոռացաւ կնոջը. ուշք ու միտքը ժառանգութեան գործերի հետ էր:

Պետտիգորսկից դուրս գալու օրը Ամիրանովը հեռագրել էր Ասունուն: Ասունին անհամբերութեամբ սպասում էր նրանց:

— Հազիւ հազ եկաք: Քաղաքը առանց ձեզ կարծես որբ էր մնացել, ուրախ — ուրախ նա նրանց բարեւեց կայարանում:

—Հեղինէն էլ պակաս չէր կարօտել թօսին, — պատասխանեց Ամիրանովը: Իսկ բնակարանի հարցը վերջացրել ես տանտիրոջ հետ թէ չէ:

—Ոչ միայն վճուել եմ, այլ և ձեր բոլոր բաները տեղափոխել եմ տւել այնտեղ:

—Շատ շնորհակալ ենք ձեր կրած նեղութեան համար, — ասաց Հեղինէն ձեռք տալով նրան:

—Հիանալի տեսարան է ձեր նոր բնակարանի առաջ, տիկին Հեղինէ: Ես ու Միքայէլը ձեր ճաշակի համեմատ ենք ընտրել:

—Ալեքսանդր, Հեղինէին հասցրու տունն, ես փոստով բան ունեմ:

—Ուրախութեամբ: Աշխարհքումս ոչ մի բան այնքան չեմ սիրում, որքան սիրուն կանանց կողքին նստելը:

Հեղինէն ժպտաց, բայց մի բոպէից յետոյ նրա դէմքը նորից առաջւան տխուր արտայայտութիւնը ստացաւ: Ասունին չէր կարող չը նկատել, որ նրա դէմքի արտայայտութիւնը առհասարակ շատ փոխւել է:

Ճանապարհին, երբ որ մի քանի քայլ էր մնացել, որ տուն հասնէին, նրանք պատահեցին թոմսեին: Սա՛ գլուխը կախ զցած՝ սովորականից աւելի ծայլ էր քաշ տալիս ոտները:

—Դաւիդ Աբրամիչ, — ձայն տւեց նրան Հեղինէն՝ գլուխը կառքից հանելով:

Թոմսեւը չը գիտէր, որ Ամիրանովենք այդ օրերը պէտք է գային. նա սաստիկ զարմացաւ տեսնելով Հեղինէին և առաջին բոպէին մինչև անգամ մոռացաւ, որ պէտք է բարևել: Մինչև նրա ուշքի գալը ու գլխարկ հանելը՝ նրանք հասան տուն: Կառքը կանգ առաւ մի մեծ ու գեղեցիկ շինութեան դրան առաջ:

—Այս, տիկին Հեղինէն է, — ասաց ինքն իրան թոմսեւը ու քայլերն արագացրեց:

Նա մէկ ուղեց մտնել նրանց մօտ, բայց յետոյ միտքը փոխեց:

Այս սրտովս գնում եմ ինչ անեմ. բոլորի արամազորութիւնն էլ կը փչացնեմ. դէմքիս նայողի ժպիտը կը սառի երեսին. չէ, լաւ է էլի գնամ իմ հաւաքունը:

Միւս օրը երեկոյեան Ասունին եկաւ նրա մօտ ու համոզեց, որ միասին գնան Ամիրանովենց տունը:

—Ինչպէս ժամանակ անցկացրիք, տիկին Հեղինէ,—բարևելուց յետոյ հարցրեց Թոմանը, անշնորհք կերպով թաղելով առաջին պատահած բաղկաթուռի մէջ:

—Ոչինչ... բժշկուում էի, զբօսնում էի, ձիով ման էի գալիս,— կոկնդով կարծես ամաչելով պատասխանեց Հեղինէն:

Դո՛ւք պատմէք, տեսնե՞ք, Դաւիդ Արրամիչ, ինչ էք արել այս ժամանակամիջոցում:

—Ոչ մի խելքը գլխին բան,—հազիւ լսելի ձայնով արտասանեց Թոմանը ևս մտքամոլոր կերպով մի պապիրոս կպցրեց:

Ելի ուզում եմ վարժապետ դառնալ:

—Ինչպէս թէ վարժապետ. հասկա ես լսեցի, որ լաւ տեղ էք գտել:

—Ե՛հ... ինչ էլ լինի միւսնոյնն է, հաստ ու բարակ մի գին է,—սառը—սառը պատասխանեց Թոմանը:

Հեղինէն զարմացած նայեց նրա վրայ ու մտածեց.—ինչ-որ մի դարդ ունի սա:

—Դիտե՛ք, տիկին Հեղինէ, որ այս քանի օրս տպւեց Գեորգի յօղածը, շատ լուրջ ու խելօք յօլւած է և ահագին ազմուկ բարձրացրեց քաղաքում,—պսաց Ասունին՝ աչքի անցնելով ուսերէն «Կաւկազ» լրագիրը: Տեսէք, այստեղ մի յօլւած կայ նրա գրածի մասին:

—ձի՛շո, —հարցրեց Հեղինէն սաստիկ ուրախացած: Նա սաստիկ զբաղւած էր այդ յօլւածով Կիսլովոզսկում: Ես չէի սպասում, որ նա այդպէս շուտով կը վերջացնի ու տպել կը տայ:

Հազիւհազ գէմքը պարզւեց,—մտածեց Ասունին ու սկսեց երկար ու բարակ խօսել Սահաւունու մասին:

Հեղինէն խորը ուշադրութեամբ լսում էր: Ասունին աւելի ու աւելի զարմանալով նրա տրամադրութեան մէջ կատարւած բոպէական փոփոխութեան վրայ, հետաքրքրութեամբ նայում էր նրան: Նա այդ նկատեց, շփոթւեց ու, աշխատելով չը նայել Ասունուն, մեքենայաբար հարցրեց:

—Գեորգի Ալեքսանդրովի: ձեզ ասել է, որ ես ուզում եմ դասեր տալ:

—Ասել է, բայց իմ կարծիքով...

—Միթէ դուք գէժ էք այդ բանին:

—Ընդհակառակը՝ ինձ որ հարցնէք՝ այդ շատ յարմար է. մանկավարժութիւնը տեսական կողմից լուրջ կերպով ուսումնասիրելուց յետոյ՝ լաւ կը լինէր որ դուք այժմ՝ զործ գնէիք ձեր ձեռք բերած հմտութիւնը և անցնէիք տեսականից գէպի գործնականը. բայց ինձ թւում է, որ ձեր ամուսինը...

—Որ իմ ամուսինը ինձ թոյլ չի տալ պարապել դասերով, բարկացած ընդհատեց նորա խօսքը Հեղինէն, իսկ եթէ ես նրան համոզեմ, հասկացնեմ՝ որ այդ յիմար նախապաշարմունք է:

—Դժուար թէ կարողանաք, տիկին Հեղինէ: Նա շուտով շատ նշանաւոր պաշտօն կը ստանայ և բոլորին տարօրինակ կը թւի, եթէ այդ ժամանակ նորա կինը սկսի իւր աշխատանքով փող վաստակել: Դուք հս լաւ գիտէք, թէ որքան մեծ նշանակութիւն է տալիս ձեր մարդը հասարակաց կարծիքին:

Հեղինէն այդ շատ լաւ գիտէր, բայց յոյսը չէր կորում:

—Բացի այդ, Միխայիլ Պետրովիչը քեռու մահից յետոյ ահագին ժառանգութիւն է ստացել, շարունակեց Ասունին: Երանի ամեն հարստութիւն այդպիսի մարդու ձեռք ընկնէր: Ի հարկէ ձեզ յայտնի կը լինի, որ Միքայէլը մեծ գումար է նւիրել մեծ մասամբ թեմական դպրանոցին: Դիտէք, տիկին Հեղինէ, ամենքը կարծում են, որ նա այդ ձեր ազդեցութեամբն է արել:

Հեղինէն սկսեց վիճել ու հաւատացնել, որ իւր և մարդու մէջ ժառանգութեան մասին խօսք ամենեւին չի եղել:

Թոմաւը նրանց խօսելու ժամանակը բոլորովին լուռ էր. նա երբեմն ծխում էր, երբեմն կրճում իւր մօրուքը:

—Դուք ինչու սկի չէք խօսում, Դաւիթ Աբրամիչ:

—Ինչ խօսեմ, ժպտաց Թոմաւը:

—Ինչպէս թէ ինչ. այ թէկուզ վիճէք Ալեքսանդր Վասիլիչի գէմ, որ կարծում է թէ տղամարդիկ կանանց ազդեցութեամբն են լաւ բաներ անում:

—Ներեցէք, ես չէի լսում այն ժամանակ, երբ որ նա իւր կարծիքն ասում էր: Ե՛հ, ասենք միևնոյնն է, չ'արժի խօսել կնոջ նման անհաստատ արարածի մասին, — դառնութեամբ ասաց նա: Յիմար են այն մարդիկ, որոնք կանանցից բախտաւորութիւն են սպասում:

Այդ երեկոյ առհասարակ թոմաւը իրան այնպէս էր պահում, որ Հեղինէն սկսել էր կասկածել, թէ նորա զլխովը մի բան է անցել: Այն ամէնը, որով նա արտասանեց այդ վերջին խօսքերը, աւելի սաստկացրեց Հեղինէի կասկածը:

Մի չորս-հինգ րոպէ էլ նստելուց յետոյ թոմաւը վերցրեց զըլխարկը ու հազիւ նկատելի կերպով զլուխ աւելով հեռացաւ:

Անխելք մարդ, նախատում էր ինքն իրան թոմաւը ձանապարհին, — ինչու պէտք է այնքան չիմար գոնէիր, որ կարծէիր թէ կարող ես կնոջ սիրտը զրաւել: Չը գիտես, որ ոչ գեղեցկութեան տէր լինելով, ոչ հարստութեան, ոչ էլ նշանաւոր պաշտօնի, դու իրաւունք չունէիր յուսալու, որ կարող ես որ և է կնոջ դուր գալ: Աններելի սխալ էր այդ քո կողմից, բարեկամ, աչքերդ բաց արա, խելքդ զլուխդ հաւաքիր:

Այսպիսի մտքերով յուզւած ու վրդովւած մտաւ թոմաւը իւր սենեակը: Ետտ էր սիրում նա Աննա Գուրգէնեանին, բայց այդ բոլոր պէին վիրաւորւած պատուի զգացմունքը լւեցրել էր նորա սրտի բոլոր միւս զգացմունքները, — նա չէր կարողանում հաշուել այն մտքի հետ, որ իրան թոյլ էր աւել գրաւել մի օրիորդով, որ մերժեց իւր սէրը:

Խօսք չը կայ, չիմարութիւն էր իմ կողմից յոյս փայտայել, թէ ես բախտաւորութիւն կը գտնեմ կնոջ հետ: Հեռու ինձանից խաբուսիկ յոյսեր, մենք առանց ձեզ էլ կարող ենք ապրել:

Բայց միևնոյն ժամանակը մի ներքին ձայն ասում էր նրան, — չէ, առանց Աննայիդ սէրին դու բախտաւոր չես լինիր:

Թոմաւը, որ միշտ և ամեն բանի հանդիստ ու քննադատօրէն էր վերաբերւում, ինչքան աշխատում էր՝ չէր կարողանում հեշտ ու հանգիստ հրաժարւել Աննայի բախտի հետ իւր բախտը միացնելու յոյսից: Որքան աւելի էր աշխատում նա համոզել ինքն իրան, որ պէտք է ձեռք քաշել այդ ցնորքից, այնքան աւելի սաստիկ էր ճնշում դարձը նորա կուրծքը և լցնում նորա սիրտը այնպիսի դառնութեամբ, որ երբէք չէր զգացել նա:

Միթէ՞ ուրիշ նպատակներ չը կան, որոնց համար արժի ապրել, — յամախ հարցնում էր ինքն իրան թոմաւը՝ աշխատելով հանգստացնել իւր բորբոքւած միտքը:

Զէ, կան և աւելի բարձր նպատակներ, կ'ընտրեմ այդ նպատակներից մէկը: Որքան վսեմ գործ է գիտութեան ծառայելը: Այժմ ես կ'իրագործեմ իմ վաղուցւայ ցանկութիւնը, կ'երթամ Պետերբուրգ մագիստրի քննութիւն տալու:

Թոմասը միշտ այն համոզմունքին էր եղել, որ գիտութեան ծառայելը մարդուս ամենավսեմ նպատակներից մէկն է: Մի ժամանակ նա մինչև անգամ ուզում էր մնալ համալսարանում և պատրաստել իւր սիրած առարկայի ամբիոնի համար. և կ'անէր այդ, եթէ ծուլութիւնը չը յաղթէր նրան: Այն ժամանակ նրան թւում էր, որ ինքը չի զիմանալ այդպիսի մի պարտադիր ու երկարատև աշխատանքի. իսկ այժմ նա հաւատացած էր, որ կը կարողանայ բոլորովին անձնատուր լինել գիտութեանը, որի մէջ նա յոյս ունէր գտնելու հանգիստ ապաստանարան իւր վրդովւած ու դառնացած հոգու համար: Հաւատացած էր, բայց վերջնական վճիռը օրէցոր չետաձգում էր՝ կարծես մի բան էր սպասում:

(Կը շարունակի)

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԿԼԱՆՅԻ

Ձեզ, Հելլագայի գոված երգիչներ,
Ես փառաբանել եմ ուզում նորից.
Ձեր լիշատակում իմ տանջող մըտքեր՝
Յոզնած առօրեայ ցաւից՝ հոգսերից՝
Թո՛ղ հանգըստանան գոնէ մի վայրկեան.
Ծանըր է մեր դարն նիւթապաշտութեան:

Ոլիմպ, Ելլսիս, Պանաթէնայոն
Խըմբում էին ձեզ, որպէս մի կենտրոն.
Եւ համագգային ուրախ տօներին
Հովիտների մէջ՝ շրքեղ ու դալար
Եւ ականակիտ ջրերի տփին
Հընչում էր սըրինգ, տաւիղ ու քընար.
Եւ նըւագներիդ ներգաշնակութեան
Ձայնակցում էին երգեր ոգելից
Ձեզ երկըրպագու հասարակութեան.
Հընչական քաղցրիկ դայլալիկներից
Կեանք էին առնում բիւրաւոր սըրտեր,
Եւ ձեզ զարգարում էին դափնիքից
Հիւսւած փառահեղ կանաչ սըսակներ...

Բայց դարեր անցան, և ձեր տաւիղներ
Ղըռեցին և խորթ դարձան մեզ համար.
Սլօքմ հառաչանք են մեր նըւագներ,
Վըշտահար սըրտի մըրմունջ ցաւագար:

Ել չը կան կանաչ պըսակներ դափնեայ,
 Որով երգիչներըն հըպարտանան—
 Այժըմ սըգաւոր դագաղի վերայ
 Նոցա տանում են մինչև գերեզման:
 Ել վարդի միջով չը կայ ճանապարհ,
 Ել ոսկեայ քընար չը կայ մեր ձեռքին—
 Փուշ ու տատակի միջով մեզ համար
 Այժըմ ընկած է մեր դըժւար ուղին:

ՉԱԼԱԲԻՆԵՐԻ ԱՐՇԱԻԱՆՔԸ

(ՊԱՏԿԵՐՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՄ-ՔՐԲԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԻՑ)

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

(Շարունակութիւն 1)

II

Ն Ա Խ Ը Ն Թ Ա Յ Գ Ի Շ Ե Ր Ը

Խորին գիշեր է: Այն բոլորը, ինչ շնչում է, քնած է Դ. գիւղում: Նիրհում են և ծառ ու թփերը, և շնչին հողմ անգամ չէ խանգարում նոցա քունը: Այդ լուսթեան մէջ լսում են միայն երկու շարագուշակ ձայներ, և վա՛յ նորա օրին, ով կ'արթնանայ յանկարծ, և ականջին կը հասնեն այդ ձայները: Գիւղի կենտրոնում աղա Թումանի տան կից պարտիզում սալորենու տակ երկաթէ շղթայով կապւած ահագին շունը ոչ թէ հաչում, այլ ոռնում է այդ ժամին, և շան ոռնոցը, գիւղացու անտոխապաշտութեամբ, մահւան կամ մի այլ աղէտի գուշակութիւն է: Գիւղի այս կամ այն ծայրից լսելի էր լինում երբեմն շների հաչոց, որոնք արթնանալով երևի յիշոցներ էին աալիս ոռնացող շանը, որ այնքան յանդուգն կերպով խանգարում էր իրանց հանգիստ քունը: Այդ լուսնկայ խորհրդաւոր գիշերը սարսափեցուցիչ էր մանաւանդ այն պատճառով, որ երկու բուեր, Աստուած գիտէ գիւղի որ փլատակներից, սխա՛ւր և

պարբերաբար իրար ձայն էին տալիս՝ կարծես գիշերւայ ասհարկութիւնը լրացնելու համար: Այսպիսի գիշեր սովորական է Ղ. գիւղում: Բայց նա ասուելի էր և չարագուշակ առանց այն էլ վախեցած սնապաշտ գիւղացիների համար: Պատահում էր, որ այս կամ այն կտրին, կամ պատշգամբում, կամ բակում՝ յանկարծ քնից սթափուում էր մէկը, տեղում նստում և, ականջ դնելով շան և բուերի ձայներին, անիծում էր նոցա՝ ասելով ինքն իրան՝

—Ձեր զլուխները ուտէք, հա՛, ձեր զլուխները:

Բայց զօրեղ քունը խփում էր դարձեալ նորա աչքերը, և նա թուլացած ընկնում էր անկողնի վերայ և կրկին խոր քնի մէջ ընկղմւում:

Բաղալը այդ ժամին իւր բակում հասիլի վերայ տարածւած՝ խռմփում էր այնպիսի պէս-պէս վայրենի հնչիւններով, որ կարծես կռիւ էր սկսել այնտեղ շան, արջի, բորենու և օձերի մէջ, և զարմանալի էր, ինչպէս նա չէր արթնանում ինքը իւր ձայնից կամ չէր սարսափեցնում իւր տանեցիներին:

Աղա Թումանն էլ մի պահապան էր վարձել իւր տան վերայ հսկելու. բայց չընայած դորան, նա շատ անհանգիստ էր, երկար ժամանակ նա չէր կարողանում քնել և շուտ շուտ շուտ էր գալիս երկու կողքի վերայ:

Ո՛ր պակաս անհանգիստ էր և ժլատ Մինասը: Մուկն էր արդեօք, որ անցաւ նորա զլխատակով, թէ մի այլ բան, բայց նորան արթնացրեց մի թխկոց: Սթափւած նա նստեց իւր տեղում, չորս կողմը շրջեց իւր աչքերը, սկսեց ականջ դնել—ոչ մի ձայն, բացի շան ունոցից և բուերի սգաւոր վայունից: Նա զգում էր, որ քունը հեռանում է իրանից: Նա զգաց իւր հոգում մի ինչ որ ծանր ճնշող բան: Սիրտը, որ քիչ առաջ հանդարտ բաբախում էր իւր համար, այժմ աւելի արագ և ուժեղ է դարձնում իւր զարկը: Սրտատրոփ նա վեր կացաւ տեղից, գնաց դարպասի մօտ և տեսաւ փակ է. մի բուպէ արձանի նման կանգնած ականջ դրեց և յետոյ վերադարձաւ և թաղից վերցնելով հրացանը՝ բերաւ դրեց գլխատակին, ինքը պառկեց և աչքերը խփելով փորձեց քնել: Բայց տարօրինակ բան. նա շատ ուզում էր քնել, մարմինը բոլորովին թուլացած էր, աչքերի կոպերը խփւում էին, բայց նա դարձեալ արթուն էր ու մի

ինչ որ բան խառնում տակն ու վրայ էր անում նորա ուղեղը: Այդ վախն էր, որ նորա աչքի առաջ ծնեցնում էր շատ սարսափելի տեսիլներ:

«Տեսնես աչն պահապանները արթուն են թէ հանգիստ մրափում են իրանց համար», մտածում էր նա, և նորա մտքում արդէն պատկերանում էին զինւորւած շալաբիները, որոնք զազոուկ բարձրանում էին զիւղի դարպասի վերայ, սպանում քնած պահապաններին, մտնում են զիւղը և կոտորած անելու վերայ են: Կամ ինքն իրան հանդստացնում էր, և քրդերի տեղակ նորան ներկայանում էին գողեր, որոնք, ով գիտէ, ծածկւած են մի տեղ տան մէջ և շուտով դուցէ յարձակ են: Նա կարծում է թէ գողը մի հաստ է, առաջ ուզում է զիմադրել, բայց երբ տեսնում է նորա ձեռքին բաց սուրը, ընկնում է ոտները, խնդրում, աղաչւում, որ խնայի... բայց երբ բանը գալիս է նորան, որ նա պիտի բանայ իւր մեղուկը և կարմիր տասանոցները և սպիտակ աբասիները զիզէ գողի առջև, նորա արիւնը խառնում է, ձեռքը տանում է գրպանը, իբր թէ բանալիք հանելու, բայց բանալիքի փոխարէն հանում է ատրճանակը, կրակում, — և հառաչանքով արիւնաթաթախ գողը գետին է ընկնում... կամ նա ամիստում է, որ այգպիսի երկիւղալի ժամանակ նա քաղաքում չէ, մի հետու բաղմամարդ տեղում, ուր... այստեղ նորա մտածողութեան կապը կտրուց, վաղուց խիւած աչքերի կուպերը անշարժացան, և նա քնեց:

Ինչերուայ կիտից բաւական միջոց է անցել: Առել է ամենայն մի ձայն, մինչև անգամ շան ունոցը: Քնի ամենաքաղցր և ամենապինդ ժամանակն է:

Մինչդեռ շինական հասարակութիւնը այսպէս անդորր նիրհում է, թող տ՛ւր ինձ, ընթերցո՛ղ, մի քանի խօսք ասեմ Վ. զիւղի մասին: Ինչպէս մի վիպասան, որ սիրում է նկարագրել իւր հերոսին, մինչև անգամ նորա սուն ու տեղը, նիստ ու կացը, նոյնպէս և ես կամենում եմ նկարագրել իմ հերոսին — մի ամբողջ ժողովուրդ — և նորա սունը — մի ամբողջ գիւղ:

Նրեակապեցէ՛ք այդ զիւղի երկու կողմից, արևելքից և արևմուտքից, ընկած երկու ժայռոտ լեռնաշղթաներ, որոնք հիւսիսից զնում են դէպի հարաւ և միայն զիւղի տակին սկսում են իրարից

հեռանալ: Իսկ հեռու-հեռու երևում է Արաքսը, ինչպէս արծաթէ փայլուն ժապաւէն: Արևելեան լեռնաշղթայի ուղղութեամբ ընկած է մի լայն քարքարոտ տարածութիւն, որի վերայ հազիւ հազ նշմարւում է մի բարակ առւակ: Դա գիւղի գետակն է: Քայց տարօրինակ բնաւորութիւն ունի այդ գետակը: Երբեմն նա այնքան բարակում է, որ նորա ջրի վերայ չաճախ կոխներ են պատահում գիւղացիների մէջ: Քայց զարնան կամ ամառուայ ստատիկ անձրևների ժամանակ նա այնքան մեծանում է և ուռչում, որ՝ հասնելով հաստաբուն ընկուղեինների բարձրութեանը՝ ողողում տանում է կամ ցեխի մէջ թաղում ամբողջ այգիներ, անդաստաններ և տներ. պատահել է, որ տասնեակ մարդիկ և ընտանի կենդանիներ զոհ են գնացել այդ կատաղի հեղեղատի հոսանքին: Այդ միջոցներին գետակը ահռելի ձայն է հանում, գետինը դողում ու զզրում է, և գիւղի հեռավոր ծայրերում անգամ արձագանք է տալիս նորա վայրենի աղաղակը, բարձր դրնդիւնը: Ահա ինչու, երբ թխալում է հիւսիսակողմը, նամանաւանդ երբ կապարի կամ պղնձի զոյն է ստանում այն հորիզոնը, գիւղացիների կրծքերը այնքան ծանրանում են ահից, որ կարծես երկնքի թխալերը նոցա սրտերի վերայ են դիզւում: Մի անգամ, երբ այդ հեղեղատը շատ այգիներ և տներ աւերելով՝ իւր ետևից թողեց միայն հարթ տարածութիւն, ցեխ և աղմից մի բարձրաւանդակ, գիւղում սկսեցին երագներ տեսնել թէ շուտով լինելու է աշխարհի կատարածը, երկրորդ ջրհեղեղը:

Այո՛, տարօրինակ է այդ գետակը, բայց աւելի ևս զարմանալի է այն ժողովուրդը, որ այդ հեղեղատի բերանին կանաչ այգիներ և անդաստաններ է գցել, որ մշտական կոխ է մտած բնութեան այդ անդիմադրելի ոյժի հետ, որ նորա փլատակների վերայ նորանոր հոջակապ շինութիւններ է կառուցանում, նորանոր այգիներ է գցում, կարծես ուզում է ասել գետակին թէ ւտեսնենք մեզնից ո՞վ կը լինի յաղթողը: Գուցէ բնութեան հետ մղւող այդ մշտական կոխն է, որ այդ գիւղի աղաբնակութեան ոգուն հաղորդել է մի տեսակ արտասովոր սոկունութիւն, դիմացկանութեան մեծ պաշար:

Գետակի ձախակողմեան ափերից սկսում են գիւղի այգիները, որոնք, գնալով դէպի արևմուտք, սկսում են մէկ մէկ երևացնել իրանց միջից փոքրիկ տնակներ և մեծ շինութիւններ: Ազաների տները գե-

ղեցիկ են միայն համեմատած աղքատիկ խրճիթների հետ. նոցանից շատերը թէպէտ ահագին են, բայց մեծ մասամբ շինւած են անձաշակ: Այնու ամենայնիւ Ռ. գիւղում կան այնպիսի շինութիւններ, որ խկապէս արժանի են որ և է քաղաքի կենտրոնում լինելու թէ իրանց ձաշակով թէ գեղեցիկութեամբ: Երևակայեցէ՛ք ձեր առջև մի երկաշն և բարձր պատշգամբ՝ 8 — 10 հաստ և սպիտակ սիւներով, և այդ պատշգամբի զլխին մի նոյնանման պատշգամբ նոյնքան սիւներով: Այդ սիւները միանում են իրար հետ վերևում կանոնաւոր կամարաձև կիսաշրջանով կամ յունական օմեղաչի նման շինւածով: Այդ սիւները՝ զրկւած լինելով դրւագներից՝ տպւորութիւն են գործում իրանց մեծութեամբ և սպիտակ, մաքուր կերպարանքով: Ներքին յարկի երկու կողմից քարաշէն աստիճաններով կարելի է բարձրանալ և մտնել սենեակները: Այսպէս է աղա թումանի և մի քանի ուրիշ աղաների տան առաջնակողմը: Բայց նորա արտաքին տեսքը լրացնելու համար պէտք է չիշել և նորա առջև սալայատակ ուղիներով կորսուած բակը, որ բարձրանում են պողատու սուերաշատ ծառեր, և երևում են այս ու այն կողմում ընկած ածուներ՝ հոտաւէտ գոչնդգոչն ծաղիկներով, պէտք է չիշել և պարսպից անցկացրած խողովակը, որից քչքշալով թափւում է վճիտ ջուրը և ոլոր-մոլոր պտոյտներ անելով՝ անցնում է ծառերի տակով կամ գնում լցնում բակի մէջ տեղում շինւած գեղեցիկ առաղանք:

Այսպիսի մի շինութիւն՝ փոքրանալով և տգեղանալով հասնում է չքաւոր գիւղացու տան տիպարին, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ ահագին բարձր սենեակ, որի մէջ տեղում ցցւած են ծուխ ու միսից սևացած փայտէ սիւներ, մի սենեակ, որ ծառայում է ամեն բանի տեղ և որ կոչւում է սուունս: Բարձր պատերով շրջապատուած պտուղ Ռ. գիւղի տների կարևոր և անբաժան մի մասն է: Այսպիսի բանն մէջ է կենում և արջ-Բաղալը և նորա նման շատ Բաղալներ:

Բայց բաւական է: Նս չեմ կառնում երկար ու բարակ նկարադրել ոչ այդ գիւղի ծուռ ու մուռ, նեղ, թզոտ կամ քարքարոտ փողոցները, ոչ գիւղը տանոյ ձանապարհների վերայ շինւած հինգ ահագին գարպասները մանր մարտիոցներով, ոչ մեծ քարաշէն եկեղեցին՝ խոր փոքրիկ փայտէ զանգակատնով և զանգակատունը՝ իւր ծռած-թերւած փայտէ խաչով: Այսքանն էլ բոլորովին բաւական է

իմ հերոսի տուն ու տեղը մտաւորապէս երեւակայելու համար։ Արդէն սկսում է լուսանալ։ Ամենից առաջ արթնացաւ զով քամին, որ պանալով ծառերի միջով՝ արթնացրեց ծառերը իրար ետեւից, տերեւները իրանց սօսաւիւնով արթնացրին թռչնիկներին, որոնք ճուղղելով սկսեցին թռչկոտել, սակայն իրանց բներից ոչ այնքան հեռու, որովհետեւ դեռ մթութիւն կար։ Մի քիչ էլ անցաւ, ծագեց արեգակը, գիւղի հասարակութիւնը արթնացաւ։ Բայց նա արթնացաւ մի նոր ազէտի համար։ Ընթերցողս շուտով կը տեսնէ, որ շարագուշակ բուերը և ոռնացող շունը զուր տեղը չէին բարձրացրել իրանց լալագին ձայները. նոքա գուշակեցին միւս օրուայ գալիք անբախտութիւնը, վայրենիների արշաւանքը։

III

Ա Ր Շ Ա Խ Ա Ն Ք

Օրը շաբաթ է, կէսօր։ Այն միայն կապոյտ երկնքին, այլ և փոքր ինչ վերև նայել անկարելի է, այնպէս այրում և կուրացնում են արեգակի ճառագայթները։ Հողից և ժայռերից կարծես բոց է բարձրանում։ Ծառերը այնպէս թուլացած տխուր կորացրել են իրանց թզուած կատարները, որ ասեա լալիս են ջրի ծարաւից։ Այս կամ այն այգում ծառի տակ նստած է շունը, բերանը բաց, լեզուն կախ ընկած. խիստ արագ շնչառութիւնից նորա ամբողջ մարմինը դողում է այնպէս, ինչպէս մարդը տենդի միջոցին։ Հաւ ու աքաղաղներն էլ կուտ չեն անում, այլ գետինը փորած՝ կողքները թեք են տւել հողին և առօք-փառօք մի ոտը բարձրացրել վերև, իբրև թէ տեսէ՛ք-մենք ի՛նչպէս ազատ ենք քաղաքավարութեան ճնշող ձևերից։ Թռուկներն էլ ապաստանւած են իրանց բներում կամ տերևախիտ ծառերի վերայ։ Բայց այդ ժամանակը, երբ, ինչպէս ասում են, կրակ է թափւում երկնքից, լիովին պատկանում է օձերի թագաւորութեանը. պատերի վերայ, խոտերի մէջ կամ կաշկառոտ ճանապարհներին այժմ սողում են նոքա, և վայ նորան, ով մէկի ձեռքը կ'ընկնէ. այդ միջոցին նոցա «կատաղած ժամանակի» է, գիւղացիների ասելով։ Ամեն տեղ խորին լութիւն՝ մեռելութեան աստիճանին հասած։ Բայց ո՞վ կը սպասէր, որ տասը րոպէ չ'անցած՝

ամբողջ այս թմրած զիւղը պիտի արթնանար, տակն ու վերայ լինէր, պիտի բարձրանան այստեղ աղմուկ և աղաղակ, լաց և կոծ, աղօթք և անէծքներ...

Գիւղացիներինց ոմանք այդ ժամին այգիներուֆն են. որը ջրում է բոստանը կամ բանջարանոցը, որը՝ արևից չաղթահարւած՝ ընկել է մի որ և իցէ սուերոտ ծառի տակ և խոտի վերայ խորը քնել, որը՝ ուշ չը դարձնելով ճակատից ծլծլացող քրտնքին, ուշի ուշով որոնում է վայրի խոտեր և որոմ իւր բանջարանոցում և քաղահասան անում նոցա. որը՝ առւակի սիզապատ ափին նստած շուտ շուտ երես ու ոտներն է լւանում աղբիւրի վճիտ սառ ջրով և ականջ դնում ջրի խորհրդաւոր խոխոջող ձայներին: Գիւղի շուկան, որ առաւօտեան լի էր ամբօխով, այժմ դատարկել է: Տղամարդիկ կամ ճաշի են կամ քնած են ճաշելուց յետոյ: Միայն զործի են այդ ժամանակ կանայք և աղջկերք: Սովորաբար շաբաթ որը Գ. գիւղի կանայք իրանց նւիրում են տուն տեղ մաքրելուն, իրանց խտակելուն. լւանում են գլուխները, լողացնում են երեսաններին և այլն:

Ահա այս գրութեան մէջ էր զիւղը:

Գիւղի գլխաւոր փողոցի մեռելային լուսթիւնը յանկարծ խանգարեց. գետինը ուժգին տրոփելով՝ մէկը միւսի ետևից արագ սլացան երեք ձիաւորներ և հասնելով մելիքի տան դարպասին՝ կանգնեցին: Դոքա օրաց պահասպաններն էին, որոնք հսկում էին գիւղի առջև բարձրացած բլրի վերայ: Նոքա շտապով իջան ձիաներից, կապեցին նոցա զրանը և իրանք առանց դուռը բախելու մտան ներս, մելիքի տան բակը: Երբ վերջինը դուրս գալով սենեկից՝ պահասպանների դունատւած զէմքին նկատեց սարսափի արտաչալտութիւն, ինքը ևս նախազգալով աղէտը, սպրիցեց և հագիւ հող կարողացաւ հարցնել:

— Ը՛ր, ի՞նչ կայ, տղե՛րք, ի՞նչ է պատահել:

— Ձալաբիները գալիս են... Արաքսի ափերը սեւացել են... Թողը երկինք է պատել... իրար բերնից խօսք խլելով՝ շնչասպառ արտասանում էին եկւորները:

Մելիքը կանչել աւեց զգիրին, որ իսկոյն եկաւ:

— Ա՛յ տղա, շո՛ւտ արա, ընկիր փողոցէ փողոց, գոռա՛, բղաւի՛ր, ինչքան ձայն ունիս, ասա՛ թէ չալաբիները գալիս են, գիւղի

տակին են արդէն, թո՛ղ զգաստ կենան, թւանգներ ու զէնքները թո՛ղ պատրաստ պահեն, կանանց և երեխայոց թո՛ղ եկեղեցու գաւիթը ուղարկեն... դէ՛, վազի՛ր: Բայց կանգնի՛ր, լսի՛ր ի՛նչ եմ ասում: Առաջ մի մարդ կ'ուղարկես ժամի զանգակները տան: Գէ՛, գնա՛, էլ մի՛ կանգնիլ: Նո՛ւտ:

Մինչդեռ մելլեքը հրամաններ էր տալիս զզիրին, ձիաւորները իրար ետևից հեծան իրանց ձիաները և դէպի իրանց աները քշեցին: Մելլեքն էլ, երբ զզիրը հեռացաւ, բակի դուռը պինդ փակեց և մտաւ սենեակը պատրաստութիւններ տեսնելու:

Մի քանի րոպէից ետ շուսահատ կերպով արդէն հնչում էին եկեղեցու զանգակները: Գիւղը խառնեւէլ տակն ու վերայ էր եղել:

Այդ միջոցին Գրիգորի տան առջև փողոցում լամբաճ՝ ներկայ պրութեան առիթով խորհուրդ էին անում Տէր-Սիմոնը, աղա Թուամանը, Գրիգորը, պարոն Սարգիսը, շուն-Նիսիզը, Մինասը և մի քանի երիտասարդներ, որոնց թւում կար և արջ-Բաղալը:

Գրիգորը առաջարկում էր երիտասարդներին հեծել ձիաները, դուրս գալ գիւղից և մտախուց մի հաստատ լուր բերել թշնամիների մասին: Բայց բոլորն էլ հրաժարւում էին. թէկուզ վիզները կորի՛ր՝ չե՛ն գնալ, որ չե՛ն գնալ:

— Ով ուզում է, մեր ձին էլ պատրաստ է, — խօսում էր աղա Թուամանը, — զնո՛ւմ էք թէ ոչ: Հ՞ը, ի՞նչ էք սուս արել, ինչի՛ց էք վախենում: Ա՛յ ձեզ քաջ ու կորի՛ն՝ ասողին... Ա՛յ տղե՛րք, հօ ձեզ չենք ասում գնացէ՛ք կռիւ մտէք նրանց հետ. ին՞չ էք հոգի տալիս...

Այսպէս սրանեղւած խօսում էր աղա Թուամանը, դիմելով այս ու այն երիտասարդին:

— Ափսո՛ս իմ ջահելութիւն, — հոգոց հանելով ասաց Գրիգորը, — ես սրանց մուննաթը վեր կ'առնեի՞: Ձի էլ ես տալիս, թւանգ էլ ես տալիս, փող էլ ես տալիս, չե՛ն գնալ, որ չե՛ն գնալ: Հ՞ը, ո՞վ է գնում, ձայն տալ, ես էլ էս ալևոր տեղովս գամ հետները:

Բայց պատասխան չկար: Ամեն մարդ լուռ էր և սպասում էր մէկը միւսին:

— Ձե՛ք գնում էլի, — յուսահատական ձայնով հարցրեց աղա Թուամանը, — ա՛յ ձեր կերածը հարամ լինի, հա՛, — ասաց և դառնացած սրտով շտապով գնաց տուն: Նորա վախը խառնեց բարկու-

Թեան հետ, և իւր փղձուկը նա մէկի վերայ պիտի թափէր: Եւ նա այդ արաւ, ինչպէս շուտով կը տեսնէ ընթերցողս:

—Հը, դո՛ւ ինչ ես գլուխդ քաշ դցել, —ասաց Նիազը Բադալին, —ուրիշ ժամանակ կարմրած աչքերդ էնպէս չու՞մ ես, որ մարդ վախենում է, ձայնդ երկինք ես հասցնում, մի էս դժւար միջոցին էլ ցոյց տո՛ւր հնարդ է: Հը՛, գնո՛ւմ ես թէ չէ, հարցրեց Նիազը Բադալի ետխիցը պինդ բռնելով:

—Ձէ՛, չէ՛, չէ՛, թէկուզ վիզս կտրես, պատասխանեց Բադալը՝ ետ ետ քաշւելով: Մենք երկու երեք տեղով ի՛նչ կարող ենք անել հազարների հետ:

—Բաս եթէ ես էս կաղ տեղովս գնամ, քո նամուսը վեր կ'առնի—ասաց Նիազը, —եթէ ես էս պառաւ շուն տեղովս քեզ նման արջից դուշող դուրս գամ, դու չե՛ս ամաչիլ:

—Ա՛ մարդ, հօ քեզ չենք ասում գնա՛ կոխ արա նրանց հետ, —ուզում էր խրախուսել պարոն Սարգիսը: Մեր ասածը...

—Ձէ՛, չէ՛, չէ՛, ես գնացողը չեմ: Ով ուզում է գնաց: Ես հիմա տուն եմ գնում:

Ձը նայելով աղաների խրախուսանքին և առատ խոստումներին, չը նայելով քահանայի օրհնութեան և քաջալերութեան խաչի և Քրիստոսի անուանով, ոչ-ոք սիրտ չ'առաւ գիւղից դուրս գալու:

Այդ խմբից իւրաքանչիւրը անկեղծ բարկացած էր միւսների վերայ, իւր մաքումը խոր ատելութեամբ չիշոցներ էր տալիս սորան նորան, վախկոտ նապաստակներ էր անւանում բոլորին:

Այսպէս սրտնեղած խումբը սկսեց ցրւել, և ամեն մէկը գնաց իւր տուն հարկաւոր զգուշութիւններ գործ դնելու:

Այժմ, ընթերցո՛ղ, արի՛ միասին ուշի ուշով դիտենք թէ ինչ է կատարւում գիւղում:

Ահա կտուրների վերայ շտապով դիզում են քար ու կաշկառ՝ թշնամիներին քարկոծելու, աղի և պղպեղի հետ խառնած մոխիր՝ կուրացնելու համար, բերում դարսում են եւ գալիս ջրով լի կաթսաները՝ թշնամիներին այրելու համար: Այնտեղ տղամարդիկ լցնում կամ դրստում են իրանց հրացանները: Սենեակների մէջ վառւած մոմերի առջև ահա աղօթում են կանայք և աղջկերք, և երեխաները ճիշ ու աղաղակով պինդ կպել են մայրերից և քոյրերից: Գրիգորը,

պարոն Սարգիսը և նոցա նման շատերը ներքնատանը, խաւար գաղտաւեղիններում, փորել են տալիս դեռինը՝ թանկագին իրեղէններով լի սնդուկները և կարասները հողաթաղ անելու համար: Փողոցներով վազվզում են կանայք դէպի եկեղեցու բարձր պարիսպներով շրջապատուած լայնարձակ գաւիթը. փոքրիկներին՝ զրկած կամ ձեռքից բռնած քարչ են տալիս իրանց հետ: Շատ կանանց հերարձակ մազերից ջուր է թափուում. անշուշտ վատ լուրը լսած բուպէին նոքա լւացելու վերայ են եղել: Եկեղեցու գաւիթը լցում է կին և մանուկներով, եկեղեցու ներսն են տանում ծանրաբեռնուած սնդուկներ և արկղներ: Սեղանի առաջ մոմեր են վառում իրար ետեւից, և կանայք ծունր իջած արտասւելով աղօթում են բարեխնամ Աստուծոն: Արդին լալիս է, մայրը սիրտ է տալիս նորան, հայրը յուսադրում կամ հայհոյում է երկուսին էլ և այնու ամենայնիւ շարունակում իւր տենդային աշխատանքը: Իւրաքանչիւրը իւր երեւակալութեան մէջ արդէն զինուորած թշնամի է տեսնում կանգնած իւր առջև. թշնամին կրակում է դարաբինան, թշնամին զարկում է կեռ դաշոյնը, և մեծ ու փոքր, մարդ ու կին, աղջիկ ու տղայ—բոլորեքեան ընկնում են իրար ետեւից, և արեան առունները մեծանում անում, թափուում են կտուրներից դէպի ցած, անցնում են փողոցներով և ներկում ամեն տեղ, ուր երևում են արիւնարբու հրէշները... Կարծես յունական Գորգոնները կեանք էին առել նորից և ահ ու զոռ ու սարսափ էին ձգում բոլորի սրտերը իրանց մազերի օձային վըշշիւններով:

Այս միջոցին Մինասը իւր կնոջ և երեխաներին ուղարկեց եկեղեցին, իսկ ինքը բակի և սենեակների դռները պինդ փակեց, առաւ իւր մի հրացանը, իսկ միւսը զանազան իրերի հետ թազցրեց մի այնպիսի գաղտաւեղում, որտեղից սատանաների թագաւորն էլ կարող չէր բան դուրս քարչել. յետոյ բարձրացաւ կտուրը և հերոսաբար սկսեց սպասել թշնամուն:

Բայց ծիծաղելի և միևնոյն ժամանակ խղճալի տպաւորութիւն էր անում այդ միջոցին արջ-Բաղալը: Նա ևս կանգնած է իւր կիսաւեր տնակի տանիքի վերայ. մի ձեռքում բռնած է մի երկայն հովւական մահակ, միւս ձեռքում—պպից մնացած մի ժանգոտուած խանչալ: Նա հրացան չունի: Մինասի թագցրած հրացանը, ի հարկէ,

կարևոր էր Բագալի համար: Բագալը տեղից չէ շարժուում. նա այնպէս ուշադիր է և ականջները այնպէս սրած, ինչպէս բարակը որսի բուրդին: Նա դէմքը յաւած է դէպի այն կողմը, որտեղից պիտի երևան թշնամիները: Նորա սիրտը սաստիկ արոպում է: Աղօթք և ջիշոցները խառնուում են նորա զոզրոջ շրթունքին:

Այո', շատ խղճալի էր Բագալը:

Աղա Թուժանն էլ այդ ժամանակ որքան վախեցած էր, նոյնքան էլ կատաղած էր իւր շան վերայ, որ նախընթաց գիշերը գալիք աղետը գուշակեց իւր սոնալով: Նա իւր շարու թիւնը արտայայտեց շատ հասարակ կերպով՝ պարպեց րևոլերը, շունը կնձկնձաց, երկու երեք անգամ պտոյտ եկաւ և ընկնելով խոտի վերայ՝ սկսեց դիաթաւալ լինել:

Բայց ի՛նչ համակրելի էր այդ ժամին Նիազը: Ինչպէ՛ս նա կարողանում էր քաջալերել, սիրտ տալ իւր տանեցիկներին, ժպիտ անգամ խաղացնել նոցա սարսափած դէմքին: Նոյն իսկ մահը թեթևանում էր նորա ներկայութեամբ, նոյն իսկ սարսափը կորցնում էր իւր ոյժը, և սիրտը սկսում էր աւելի հանդարտ բարախել:

Այս տաղնապի միջոցին գիւղի գլխաւոր ճանապարհի դարպասով շներս մտաւ մի երիտասարդ ձիււոր, որ վերադառնում էր մօտակա գիւղից: Ի հարկէ, նա մօտիկուց տեսած պիտի լինէր Չալաբիների հրոսակները: Բայց երևակայեցէ՛ք նորա զարմանքը, երբ նա փողոցում տեսաւ իրարանցում, անցորդների դէմքին նշմարեց սարսափ, երբ նա լսեց լաց և զոռում-գոչում և եկեղեցու զանգակների ջուսահատ զօղանջիւնը: Նա իսկոյն հասկացաւ, որ այստեղ կայ մի մեծ թիւրիմացութիւն, որ պէտք է շուտով փարատել: Հարց ու փորձից նա իմացաւ գործի էութիւնը: Նորա շրթունքին խաղացող ժպիտը և դէմքի հանգիստ արտայայտութիւնը կատարեալ զարմանք պատճառեցին հանդիպողներին, որոնք անհամբեր հարցումներ էին տալիս նորան թէ ո՞րքան է արդեօք Չալաբիների թիւը, թէ ի՛նչ է նշանակում նորա անհոգ ժպիտը և այլն:

— Ոչինչ չը կայ, ոչինչ չը կայ, մի՛ վախէք: Չալաբիներ չեն, զարաչիներ են, զարաչիներ:

Այս խօսքերը արտասանուում էին այնպիսի եղանակով, որ նոքա, ըստ երևութին, պիտի փարատէին ափնայն մի կասկածանք. և խկապէս շատերը հաւատում էին և հանգստանում: Բայց կային և

այնպիսի տարօրինակ մարդիկ, որ այս խօսքերը լսելուց յետ, աւելի ևս արագացնում էին իրանց քայլերը, Ասուած գիտէ թէ ինչ՞ու, կարծելով, որ այն մարդը այսպիսով կամենում է սիրտ տալ նոցա, որ չը սարսափեն անխուսափելի մահից:

Մի քանի բողոքից յետ ձիաւորը շրջապատուեց ամբոխով, և այս ու այն կողմից հարցումներ էին տեղում նորա վերայ:

—Ճի՞շտ ես ասում, Ստեփան, դու քո հոգին՝ մի՛ խաբիլ, Չալաբինե՞ր են թէ զարաչիներ:

—Ի՞մ արեւը, ձեր արեւը, ոչինչ չը կայ, հանգիստ կացէ՛ք: Շուն շան որդի զարաչիներն են...

—Յրհնե՛ս դու, Ստեփան, օրհնե՛ս, էս ի՛նչ օրում էր մեր գիւղը:

—Վրանց հէրն անիծած, զրանց հէրը. զարաչիներ՞ըը մեզ էս օրս գցեն:

Տղե՛րք, էն օջինը զանք էդ շուն՝ շանորդիների գլուխը, որ հէշտ հէշտ չը մոռանան իրանց արածը ու էս մեր կողմերը էլ չը համարձակեն ոտ դնել:

Այսպէս բարկացած խօսում էին շատերը երիտասարդներից: Նոցա սրտերը՝ երկիւղից ազառուած՝ այժմ լցւել են վրէժինդրութեան ծարաւով:

Որովհետեւ հակառակօրդները պիտի լինէին անզէն, գլխաւորապէս կանաչք և երեխաներ, այդ պատճառով սխալալ երիտասարդներից իւրաքանչիւրը առասպելական հերոսի նման զգում էր, ի՛նչպէս աւելանում էր ոչժը իւր բազուկների մէջ և հասնում գերբնականութեան աստիճանին: Ամեն մէկը այդ ժամանակ իրան վազը էր զգում:

Մերերը հեռացան, որովհետեւ նոցա ծեծելու և ծեծւելու ժամանակը վաղուց է անցել. աղաները նոյնպէս քաշւեցին իրանց սները, որովհետեւ արդէն կային քաջ աղերք, որոնք կարող էին առանց մեծամեծների օգնութեան էլ գլուխ դնել զարաչիների հետ: Վրիժառու երիտասարդները, որոնց մէջ աչքի էր ընկնում Բապալը՝ վարազի նման կատաղած և չիշոյցները բերնին, շոտպով ուղղեցին իրանց քայլերը դէպի գիւղի գլխաւոր զարպասը, որտեղից պէտք է գիւղը մտնէին զարաչիները:

Որպիսի արագութեամբ տարածւել էր բօթարեր լուրը և սարսափի մէջ ձգել բոլորին, նոյնպիսի արագութեամբ տարածւեց և ուրախալի համբաւը և հանգստացրեց բոլորի սրտերը: Ամբողջ գիւղը ծիծաղեց հսկայական կենդանի ծիծաղով: Եթէ թափուամ էին արցունքներ, անսահման ցնծութեան արցունքներ էին նոքա:

Մի քանի բոպէից յետ գիւղի գլխաւոր զարպասով սկսեցին ներս թափւել զարաշինները, մի ահագին խառնիճաղանճ բազմութիւն չը տեսնւած, չը լուած ամբողջ գաւառում: Այն ո՛ր սատանան փչեց այդ ողորմելիների խելքին այնքան բազմութիւ խմբով չւել այդ կողմերը, այն էլ այն ժամանակ, երբ ամեն մի սև կէտ, որ երևում էր Արաքսի ափին, երկիւղի և սարսափի առիթ էր տալիս գիւղի օրասպահս պահապաններին: Գուցէ դա մի խաղ էր միայն, որ կամեցաւ խաղալ գիւղացիների և զարաշինների հետ մի որ և իցէ շարաճճի կախարհ՝ նստած մի անտեսանելի դղեակում, որ՝ տաղտկացած ամառուայ մեռելային թմրութիւնից՝ ցանկացաւ գէթ մի անգամ մի լի սրտով ծիծաղել և հրճւել: Բայց այդ խաղը թանկ նստեց գիւղացիներին, սակայն նորա ամբողջ ծանրութիւնը ընկաւ զարաշինների վերայ, ինչպէս այդ շուտով կը տեսնենք:

Երևակայի՛ր, ընթերցո՛ղ, մի խառնափնթոր, անկարգ քարւան, որի մի ծայրը կորում է մարդու աչքից, որ ի՛նչ խառնիճաղանճ աղմուկով, ի՛նչ սարսափելի փոշի կանգնեցնելով՝ դանդաղաքայլ առաջ է գնում գիւղի գլխաւոր փողոցով: Որքա՞ն աններդաշնակ, ի՛նչ վայրենի երաժշտութիւն է բարձրացել այս կիսամարդկային բազմութիւնից: Ահա վերին ծայրում մի կարճահասակ, կոլոլ և բաւականին տգեղ կին՝ մէջքիցը լայն գօտիով կապած մի երկու երեք տարեկան երեխայ, որի միայն զուխն և ուսերն են երևում: Նորա ետևից հետևում է մի մարդ, նոյնքան տգեղ և նոյնքան կոպիտ, որքան և կինը. նա ձախ ձեռքում բռնած է մի հաստ շղթայ, իսկ շղթայից կապւած ծուռ ու մուռ և տարտամ քարշ է գալիս մի ահագին արջ: Ահա մի այլ կին՝ ձեռքին բռնած մի քանի փոքրիկ մաղեր և նորա հետ միասին մի քանի իշաներ՝ բարձւած աւելի մեծ մաղերով: Այնտեղ մի ջահիլ տղայ քարշ է տալիս իւր երեւից պարանով կապած մի պառաւ կապիկ՝ կարմիր շապիկ հագցրած ետևից: Ահա մի քանի կանայք՝ հագուստները հնամաշ և ձեռքները պարապ-

դոքա էլ երեւի բախտ գուշակողներ են: Նոքա խառնւած են ձիաների, մատակների խմբի հետ:

Շների էլ թիւ չկայ: Եզների մէջքից անչարմար կերպով կապկապւած են հաւ ու աքաղաղներ, որոնք լուռ զլուխները կախարած՝ համբերութեամբ տանում են իրանց վիճակը, և անցորդի վերայ այն տալաւորութիւնն են գործում թէ «տեսէ՛ք մեզ ի՛նչ օր են գցել այս վայրենիները»: Երիտասարդների աչքին կընկնէին դոցա մէջ ջահիլ, 14—15 տարեկան, փոքրահասակ աղջկերք, սև ու հերարձակ մազերով, սև ու կրակոտ աչքերով, լայն ու կարճ շրջագգեստով: զոքա «մթրութներ» են, այսինքն պարողներ: Այս բազմութեան նպատակն էր՝ բաժան բաժան ցրել շրջակայ գիւղերում և տունէտուն ընկնելով՝ պարողը պիտի պարէր, վաճառողը վաճառէր, հմայողը հմայէր, մուրացողը մուրար, մի խօսքով այս բոլոր աղմուկից պիտի դուրս գար փող, իբրև ձմեռւայ պաշար այդ կիսավայրենի, կիսամերկ մարդկանց և անասունների համար:

Իսկապէս ես դժւարանում եմ այստեղ մի որ և է յանցանք տեսնել այդ խեղճերի կողմից: Ինչպէս մեզնից ամեն մէկը, այդ ամբօխը հաց էր որոնում՝ քաղցած չը մեռնելու համար:

Բայց Դ. գիւղի հասարակութիւնը այդպէս չը գատեց: Իսկնասած՝ նա չը գատեց էլ: Արաչիները պատճառ եղան իւր անհանգստութեան և լացի, ուրեմն նոցա էլ պէտք է անհանգստացնել և լացացնել: Ել նոքա մեղաւոր են, անմեղ են, այդ նորա բանը չէ: Ինչո՞ւ նոքա եկան հէնց այն օրերը, երբ Չալաբիներին էին սպասում: Աերջապէս ի՛նչ է նշանակում այն շուն, արջ ու կապիկների ամբողջ բազմութիւնը: Բայց, ի հարկէ, ի՛նչ ասել կ'ուզէ, ո՞րտեղից իմանալին այն «ողորմելիները թէ մի որ և իցէ Դ. գիւղում սարսափելի լուր է տարածւել և այդ լուրը հաստատել են լուսինը՝ արեան գոյնով, շունը՝ իւր ոռնալով, և բուերը՝ իրանց վաշտունով:

Ինչ և իցէ, գիւղի տաքարիւն երիտասարդները՝ միացած այնտեղ գտնուող մի գործարանի թուրք բանւորների հետ՝ յարձակեցին դարաչիների վերայ: Մարդիկ սկսեցին պաշտպանւել և գոռոց բարձրացնել, կանաչք անիծում էին և նոյնպէս պաշտպանւում: Նոցա աղաղակին միացան և երեսանների ու զանազան կենդանիների ականջ լսլացնող ձայները, և այս բոլորից բարձրացաւ մի այնպիսի աղմուկ, որպիսին

ոչոք գուցէ լսած չէ իւր օրում, եթէ չը հաշուենք զժողք գնացած-
ներին: Մեծողների մէջ աչքի էր ընկնում արջ-Քաղալը, որ կուում
էր մի աւանձին հաճութեամբ և ոգևորութեամբ, որ իւր հարած-
ները հասցնում էր աջ և ձախ ոտով և ձեռքով: Մտա արտասուք և
արիւն թափեց այդ օր այդ կուում, և, ինչպէս ասում էին, մի
կաթնակեր երեխայ էլ զոհ գնաց և իւր անմեղ արիւնով քաւեց իւր
հայրերի և մայրերի չը գործած յանցանքը:

Եւ իբրև վերջաբան այս կախարդական խաղի, երկինքը
թխպեց, որոտաց, անձրև եկաւ, զիւրը կենդանացաւ, մարդիկ
աշխուժացան, և ամբողջ օրը պատմութիւններ էին լսում կեղծ
Չալարիների մասին, և ամեն տեղ բարձրացած էր քրքիջ և ծիծաղ:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

(ԼԵՐՄՕՆՏՈՎԻՑ)

Ալեքսանդր Մատուրեանի

I

ՀՐԵՇՏԱԿ

Կէս գիշերային պայծառ երկնքում
Հրեշտակ էր թռչում և մեղմիկ երգում.
Եւ լուսին, աստղեր, ամպեր խմբովին
Սրբազան երգին լուռ լսում էին:

Երգում էր նա բախտ և երջանկութիւն
Եղեմարնակ սուրբ ոգիների.
Երգում էր գովեստ նա Տէր Աստուծուն,
Եւ այդ գովեստն էր—անկեղծ սրտալի:

Մատաղ էակ էր նա գրկին բերում
Երկրային վշտի, արցունքի համար.
Եւ նորա երգը այդ մատաղ հոգում
Մնաց կենդանի, թէպէտ անբարբառ:

Եւ երկրիս վերայ, լեցուն փափագով
Երկնք, շատ երկար տառապեց հոգին.
Բայց նորան երկիրն իւր տխուր երգով
Չը փոխարինեց երգը երկնային:

II

*
* *

Ո՛չ. այն քեզ չեմ այնպէս սիրում ջերմագին,
Ինձ համար չէ՛ չքնաղ փայլը քո դէմքի.
Ես սիրում եմ քո մէջ տանջանքն իմ նախկին,
Եւ յիշատակն փշրած մատաղ իմ կեանքի:

Երբ շատ անգամ սիրուն տեսքիդ նայելով,
Իմ հայեացքը աչքիդ խորքն է թափանցում,
Ես զբաղւած եմ խորհրդաւոր զրոյցներով,
Բայց քեզ հետ չէ այն իմ սիրտը զրոյց անում:

Ես խօսում եմ մատաղ կեանքիս սիրոյ հետ,
Որ չքացաւ՝ այնպէս անդարձ ու անհետ.
Քո վառվռուն, ջերմ հայեացքում ու լեզոււմ
Ես անլ հայեացք, անլ լեզու եմ որոնում...

Մտկւա. 15 յունւարի 1891 թ.

III

Մ Ե Լ Ո Ւ Ի Ա

1

Ես իմ մտքում մի այլ աշխարհ ստեղծեցի,
Մի այլ գողտրիկ պատկերների գոյութիւն.
Եւ շղթայով նոցա իրար կապեցի,
Տըւի նոցա ես միայն տեսք—ոչ անուն:
Սակայն յանկարծ ձմրան հողը շառաչեց,
Եւ իմ մտքի սխալ շէնքը կործանեց:

2

Սյդպէս քաշած մի ծառի տակ սուերախիտ,
Ուշք ու միտքը տւած սագի թելերին՝
Աշուղն ազատ, անշահասէր, պարզամիտ
Զբաղեցնում է զւարճամուսամբօխին:

3

Մէկ էլ ուժգին նա մի ձայն է արձակում,
Նա իւր ետրի սէրն է երգում բարձրաձայն.
Սակայն յանկարծ սագի սիմն է կտրատւում,
Եւ լսում է երգի սկիզբը միայն...
Եւ կախարդւած գուք այդ երգով քաղցրալուր,
Սպասում էք, ականջ դնում, բայց իզուր—
Ոչոք կարէ սիրոյ երգին տալ վախճան...

Կ Ա Ջ Օ Տ

Նա նստած էր հէգ, մտախոհ՝ աղմկալից խնջոյքում,
 Նստած մենակ, անբարեկամ, անընկեր
 Եւ ուշագրաւ՝ դէպ հեռաւոր ապագան էր սըլանում,
 Այնտե՛ղ, հեռու, ուր չեն տեսնում մեր աչքեր:

Ես յիշում եմ, այդ խնջոյքում, ուր գինին էր փրփրում,
 Ուր վերջ չկար երգ, աղաղակ, ծիծաղին,
 Նա հեռադէտ մարդարէի վսեմ լեզուովն էր խօսում,
 Նորա խօսքը թախծալի էր, վշտագին:

Նա ասում էր՝ զւարճացէք, բարեկամներ, չէ՛ որ դուք
 Անտարբեր էք դէպ աշխարհիս լաց ու սուգ.
 Ձեր գլխներին սուր է շողում... բայց, էհ եղբայրք, ի՞նչ
 փոյթ ձեզ...
 Նորան ձեզնից պէտք է զոհւեմ միայն ես...

V

* * *

Երբ մեզմ ծփում է արտը սկեշող,
Դալար անտառում սօսափում քամին.
Եւ կարմրիկ սալորն անտես, գաղտագող
Պահում է այգում՝ տերևի տակին:

Երբ անուշաբոյր ցօղով ոռոգւած՝
Սպիտակ շուշանը այնպէս սիրալից,
Վառ արշալուսին, կամ մութը պատած,
Ինձ ողջունում է թփերի միջից:

Երբ սառն աղբիւրի կարկաջը ձորում
Յուզիչ ցնարքով սիրտըս պաշարած,
Ինձ խորհրդաւոր երգ է թոթովում
Այն երկրի մասին, ուր ինքն է ծնւած:

Յայնժամ դադրում է խռովայոյզ հոգիս,
Մռայլ ճակատիս թախիծը ցրում,
Եւ ես զգացած բախտը այս երկրիս,
Հոգով տեսնում եմ Աստծուն երկնքում...

Պոկեց կաղնու խղճուկ տերևն իւր ոստիցը հարազատ,
 Եւ հալածուած գոռ փոթորկից՝ գնաց, ընկաւ անապատ.
 Թօշնեց այնտեղ ցուրտ ու տօթից, թափառեց նա շատ երկար
 Եւ վերջապէս Սև ծովի ափ հասաւ մի կերպ ուժասպառ:

Ծովի ափին լուռ կանգնած է դալար, մատղաշ չինարին,
 Նորա հետ միշտ քչփչում է, նորան շոյում մեղմ քամին.
 Նորա կանաչ, թարմ ոստերին դրախտի թռչունք խմբերով
 Ծովի չքնաղ ծուկ — թագուհու փառքն են պատմում երգերով:

Խեղճ պանդուխտը պինդ կայչում է դալար ծառի արմատից
 Եւ կարօտով ապաստան է նա աղերսում չինարից.
 Նա ասում է՝ ես խղճուկս — կաղնի տերև անպաշտպան,
 Օ՛, տարաժամ հասունացայ օտար երկրում ցուրտ, դաժան:

Ես շատ վաղուց թափառում եմ աննպատակ ու անտէր,
 Թառամեցայ ու թօշնեցայ անքուն, անօդ, անսուեր.
 Օ՛, առ դու ինձ, թող զմբխտեայ տերևներիդ հետ ապրեմ,
 Ես շատ ու շատ քեզ սքանչելի, քաղցր զրոյցներ կը պատմեմ:

— Ինչքն ես պէտք, — նրան տալիս է սէգ չինարին պատասխան.
 Դու դեղնած ես ու փոշուուած, զաւակներիս չես արժան.
 Ինձ քնչ թէ դու գիտես զրոյցներ և տեսել ես շատ բաներ,
 Առանց էն էլ բեզարեցրին ինձ եգեմի թռչուններ:

Գնա՛, անցիր, պանդխտական, քեզ չեմ ուզում ճանաչել,
 Տես արևը — նորա համար ես ծլել եմ ու ծաղկել.
 Այստեղ ազատ տարածւում են իմ ճղները եթերում,
 Այստեղ ծովի սառն ալիքներ իմ արմատն են ուռուցում:

ՆԻԷՐ , , ԴԵԻ՝ ՊՕԷՄԱՅԻՆ

Քեզ, ո՞վ Կովկաս, Հզօր արքայ այս երկրի,
 Քեզ եմ նորից անհոգ երգըս նւիրում.
 Նորան օրհնէր դու իբրև քո զաւակի,
 Տուր Հովանի քո ձիւնապատ լեռներում.
 Անկոտելի բախտը վաղուց իմ հոգին
 Շղթայել է քեզ հետ անվերջ ցնորքով.
 Յուրտ հիւսիսում—քեզ խորթ, օտար բնաւին,
 Քոնն եմ, Կովկաս, ես միշտ սրտով ու մտքով:

Դեռ ես մանուկ՝ իմ թույլ, երկչոտ քայլերով
 ձգնում էի ելնել հպարտ քո ժայռեր,
 Որ պատած են գորշ, միգագոյն չալմայով,
 Որպէս զորան երկրպագող մերկ գլուխներ:
 Այնտեղ Հզօր արծիւներ են գիշերում,
 Այնտեղ ազատ միշտ սուլում է ցուրտ քամին,
 Այնտեղ էի ես կարօտով սըլանում,
 Սրտով նոցա ընկեր էի օդային:

Անցան ծանր շատ տարիներ այդ օրից,
 Դու ինձ նորից տեսար ժայռոտ քո գրկում,
 Եւ ողջայնրդ աքսորեալիս հիւսիսից
 Քննող էր, որպէս երբեմն մանուկ հասակում.
 Նա հալածեց սրտիս վիշտն ու տառապանք,
 Հոգիս լսեց մտերմութեան արձագանք,
 Եւ այժմ ահա, կիսախաւար այս երկրում
 Քո մասին եմ միայն երգում ու խորհում:

ԿԱԽԷԹ ԵՒ ԾԻՐԱԿ

Ե. ՂԱԶԱՐԵԱՆՅԻ

Սղնախի դարունը մի շքեղ տեսարան է ներկայացնում. ամբողջ քաղաքը ծածկւած է կանաչով, ամբողջ քաղաքը խեղդւում, կորչում է կանաչի մէջ: Որ կողմ նախօ՝ տերևախիտ ծառեր, թուփեր, խոտեր և ծաղիկներ... որ կողմ նախօ՝ կենդանութիւն, — դալար, երիտասարդ, ծաղկող ու բացող բնութիւն: Կոնաչազարդ բլուրները և դրախտանման ձորակները՝ իրանց խաղտարդէտ կանաչ և ձոխ զգեստով, — գրաւում, կախարհում են մարդու աչքը: Նորեկ թռչունների ներդաշնակ մեղեդիները և սոխակի անուշ գեղգեղումները փալփալում, պզոււմ են լսողութիւնը: Սղնախի բնութիւնը Վրաստանի ամենաձոխ զարդարանքներից մէկ է: Ամբողջ քաղաքը շինւած է բլուրների, բարձրավանդակների վրայ, որոնք տեղ-տեղ միմեանցից բաժանւում են խոր և նեղ ձորակներով: Քաղաքի արևելեան և հրախալին կողմից երևում է մի հալւապիւտ, վիթխարի տեսարան — Ալազանի հովիտը: Ընդարձակ և կանաչ մակերևութով ծածկւած մի ծովի նմանութիւն ունի այդ հովիտը Սղնախի բարձրութիւնից: Այդ ցամաքային «ծով» վրայ՝ հեռուից երևում են խումբ-խումբ անտառներ, մշակւած արտեր և մարգագետիններ: Ալազան դետը, արծաթագոյն ժապաւէնի նման, հրախից դէպի հարաւ՝ կարում-անցնում է այդ հովտի մակերևութը: Կետի աչն կողմը, դէպի արևելա-հրախի՝ տարածւում են աւելի խիտ, միացած, թաւ անտառներ, իսկ անտառների ետևից, մութ-կապտագոյն անփիթէատրով՝ բարձրանում են ձիւնապատ լեռնազլթաներ: Նորբ գեղարեստական գրիչ է հարկաւոր, որ կարողանալ արտադրուել աչն լուսաւոր, վեհապանծ տպաւորութիւնը, որ մարդ ստանում է Ալազանի հովտին նայելուց... Մանաւանդ այդ տեսարանը հրաշալի է պարզ երեկոներին, Սղնախի գերեզմանոցի բարձրութիւնից: Մարդ ամբողջովին կլանւում, գնում, խորասուզւում է բնութեան մէջ: Առաջնում բացւած ընդարձակ, հեռու, լաչնածաւալ հովիտը, որի աննկարագրելի մաքրութիւնը, երկնքի կամարածն, իստակ և հոյակապ վրանը, որ հեռու հորիզոնի մօտ

միանում է լուծազղթաների հետ,—այդ բոլորը դիտողի մէջ վարթեցնում է մի աչնպիսի փառաւոր, պայծառ և աշխուժ տրամադրութիւն, մի աչնպիսի բարձր, սրբազան զգացումներ, որ մարդ կամենում է սաւառնել ամբողջ հոգով այդ բնութեան մէջ. մարդու հոգին աչնքան բարձրանում, վեհանում է, որ ուզում է իւր մէջ ամփոփել ամբողջ աշխարհը, ուզում է անվերջ ապրել, սիրել, սքանչանալ...

Ահա այսպիսի սպաւորութիւն է անում Ալազանի հովիւը: Երջանիկ են այս երկրի մարդիկ, բայց աւելի ևս երջանիկ են Նրանք, ուրբեր գիտեն օդուէլ բնութեան հրաշալիքներով, ով որ գիտէ զգալ այդ բնութեան կախարհիչ գեղեցկութիւնները...

Սղնախից դէպի հիւսիս՝ Ալազանի հովիւի վրայով՝ տարածւում են բազմաթիւ գիւղեր, որոնք այդպէս զնալով՝ համնում են մինչև Թէլաւ և, Նորա հետ միասին, կազմում են՝ աշխարհահուշակ և բազդաւոր Կախէթը: Սղնախի մօտ գտանւող Կախէթի գիւղերը հետեւեալներն են՝ Անագա, Բաղարան, Կոթակ, Կարղանախ, Վէջին, Բակուրցիլիէ, Գուրջան, Ախաչէն, Վէլիցցիլիէ և այլն: Այդ գիւղերը մեծ մասամբ բնակւած են վրացիներով, իսկ հաւերի թիւը բնակիչների հազիւ $\frac{1}{10}$ մասը կազմէ: Ամբողջ Կախէթը խաղողի մի մեծ և ընդարձակ ազգի է: Սղնախից դէպի հիւսիս տանող մաքուր և զեղեցիկ խճուղու վրայ զբօսնողը կը հիանալ գիւղերի այդ ներդաշնակ և միայած ամբողջութիւնով. կարծես մի մեծ և բազմամարդ քաղաք է տարածւած սաներից տակ: Տեղ-տեղ երևում են փոքրիկ եկեղեցիների և վանքերի գմբէթները, շինութիւնների թեք կոտորները, հսկանական ընկուզենիների դանդրաւոր զուլաները, և, միևնույն ժամանակ, լուռում է մի բարեխառն աղմուկ, մի անվերջանալի, աշխուժ կենսական աղաղակ... Այդ զիւղն է, գիւղական կեանքն է իւր բոլոր հովական պարզութիւնով, իւր առօրեայ բոլոր հոգսերով, աշխատանքով ու զբաղմունքներով: Կախէթի այդ գիւղերի մէջ ամենից չափոնի և «արխատիրատական» գիւղը՝ Կարղանախն է, որտեղ պատրաստւում է ամենալաւ գինի, որտեղ գտնւում է կրօն Շերեմետեւի կալւածքը՝ հիանալի տնով ու հարուստ, ճոխ, գեղեցիկ ազգիով: Շերեմետեւը ունի իւր կալւածքում գինի պատրաստելու համար մի Նորածն գործարան, որտեղ պատրաստում են երևելի գինիներ... Բացի Շերեմետեւի գործարանից, այդ գիւղերում կան էլլի ուրիշ գործարաններ, որ պատկանում են զանազան վրացի իշխանների: Առհասարակ Կախէթի ամենամեծ և աչքի ընկնող արդիւնաբերութիւնը՝ գինին է: Այդ գիւղերում չը կալ մի հասարակ գիւղացի, որ չունենալ իւր (սեպհական, կամ կապալով առած) խաղողի ազգին, որ չը պատրաստէ և չը վաճառէ գինի: Գինին Կախէթի փառքն է, Նորա հարստութիւնը և պարծանքն է: Գինու հետ կապւած է ալտակի ժողովրդի թէ՛ տնտեսական և թէ՛ հոգեկան կեանքը: Այն, և հոգեկան, որովհետեւ՝ մէկ կողմից գինու չափազանց շատ գործածութիւնը, միւս կողմից էլ բնութեան թովիչ գեղեցկութիւն-

ները ալատեղի ժողովրդի վրայ դրել են մի առանձին կնիք, մի արտա-
շայտիչ և աչքի ընկնող հոգեկան տրամադրութիւն, որ առևտայ Լերմոնտով
բանաստեղծը շատ ճիշդ նկատել է իւր ոտանաւորի մէջ.

Посмотри: въ тѣни чинары,
Пѣну сладкихъ винъ
На узорные шальвары
Сонный лъетъ грузинъ;

Ի հարկէ այդ СОННЫЙ խօսքը միայն վրացոց չի վերաբերում. այդ միևնույն
լատկութիւնը ունին և հայերը որ ապրում են վրացոց հետ, միևնույն տնտե-
սական, միևնույն բնական պայմաններում: Բանը նրանուսին է, որ գինին և
գեղեցիկ ընութիւնը թուլացնող, ցրտող, «ապականտրոնացնող» ազդեցու-
թիւն են անում ալատեղի ժողովրդի վերայ:

Շարունակ ապրելով հարուստ բնութեան մէջ, անդադար վազելելով
այդ բնութեան շքեղ, գրաւիչ տեսարանների քաղցր տպաւորութիւնները,
ալատեղի ժողովուրդը, մի առանձին բնազդմամբ հակում է դէպի բաւա-
կանութիւնները, սկսում է երևակալական աշխարհով ապրել: Տնտեսական
պայմանների համեմատական թեթևութիւնը, միւս կողմից, տրամադրում
է ժողովրդին դէպի անհոգ և ինքնաբաւական կեանք, դէպի զւարճութիւն-
ները: Իսկ զւարճութեան և բաւականութեան ամենամեծ ֆակտորը գինին
է, քէֆ-ուրախութիւնն է... Պէտք է տեսնել՝ թէ ինչպիսի եռանդով, ինչ-
պիսի կատարեալ ինքնամոռացութեամբ քէֆ է անում ալատեղի ժողո-
վուրդը: Եւ, որ ամենազլխաւորն է, այդ քէֆը, այդ ուրախութիւնը շատ
հեշտ է ձեռք բերում ալատեղ. գինին էժան և առատ է, իսկ ոչխարի
խորովածը նոյնպէս մի հազազիւտ բան չէ: Իմ խօսքը քաղաքացու մա-
սին է, իսկ գիւղացին նոյնպէս, իւր չափով, լիտ չի մնում քէֆից, ուրա-
խութիւնից: Գիւղացու համար քէֆ անելու ամենաթունդ ժամանակը—եկե-
ղեցիների օբաների օրերն են: Ալատեղ՝ Կախէթի և, առհասարակ, Սղնախի
չրջակալքում ապրող՝ թէ վրացի և թէ հայ շինականը ամեն բան դուրս է
բերում, ամեն ունեցած-չունեցած սկսում է մսխել, վատնել...

Գիւղացիների մէջ, կանաչք աւելի տոկոսն և աշխատասէր, հոգատար
են երևում, քան թէ տղամարդիկ: Կանաչք ամեն առաւօտ, օրուս ամեն
տեսակ եղանակին՝ թէ ամառ և թէ ձմեռ՝ երկար ու զառիվեր ճանա-
պարհներով անցնում են մի քանի վերստ, որպէս զի գիւղերից ծախու-
իրեղէններ բերեն Սղնախի շուկան, «տօնալաճառի» համար: Ճիշտ որ
«տօնալաճառ»: Տեսնում են՝ կանուխ, առաւօտ մօտ հարիւրից աւել
գիւղացի կանաչք՝ ծեր և երիտասարդ՝ չրջանաձև նստած են հրապարակի
վերայ, և Սղնախի հասարակութիւնը, խառնւած այդ բազմութեան մէջ,
առուտուր է անում: Այդ փոքրիկ գիւղական տօնալաճառում կարելի է
դտնել ամեն բան, ինչ որ Կախէթի գեղջկուհին ընդունակ է արտադրել

իւր տնային աշխատանքով ու հոգացողութեամբ: Փոքրիկ խելազաներով գինի, զանազան չորացրած և թաց մրգեր, չուչխել, գերացած հաւեր, հնդկահաւեր, ամաններով կաթ, մածուն, երկար-երկար հացեր, որ տեղական լեզուով կոչուում է «շոթի», ձեռագործ պատրաստած իրեղէններ—գուլպա, պաճիճ, շերիտներ և այլն և այլն: Տօնավաճառը շարունակուում է մինչև ժամը 10—11 և լետո՛ւ՝ այդ կանանց խմբերը քիչ-քիչ սկսում են ցրել: Նեոանալ հրապարակից և, դարձեալ նոյն ճանապարհով, ուղևորուում են դէպի գիւղ: Իսկ հետեեալ առաւօտը էլի նոյն բանը, էլի նոյն վաճառող կանանց խումբը նստած է Աղնախի հրապարակի վրա: Գիւղացի տղամարդոց ևս չեմ տեսել այդպիսի եռանդուն գործունէութեան մէջ... Շատ-շատ՝ վրացի գեղջուկը, սալերը լծած՝ գինի է տեղափոխում գիւղերից քաղաք, և այդ պարապմունքի ժամանակ, անհող ինքնաբաւականութեամբ երգում է ժողովրդական չալտնի «հարալոն»...

Յաւում եմ, որ չեմ կարողացել տեսնել այստեղի գիւղացուն՝ իւր գաշտալին պարապմունքի ժամանակ,—վարի, ցանքի, հունձքի և կալի աշխատութեան մէջ: Բայց, որքան ևս կարողացել եմ տեղեկանալ՝ այդ գործը այնքան էլ մեծ աշխատանք և քրտինք չէ պահանջում կախէթի գիւղացուց. նախ որ հողի քանակութիւնը այնքան մեծ չէ, և երկրագործութիւնը գլխաւոր պարապմունք չէ այստեղ, իսկ երկրորդ, որ Ալազանի դաշտը, մշակութեան համար, շատ փափուկ և սլարարտ է: Որ երկրագործութիւնը այնքան մեծ դժարութիւն չէ պատճառում այստեղի գիւղացուն — այդ երևում է մասամբ և այն հանգամանքից, որ եղը, գիւղացու աշխատանքի գլխաւոր ուժը և սպաւէնը՝ չունի այն մեծ և կարևոր նշանակութիւնը, չի վազելու գիւղացու այն հոգսը և խնամքը, ինչպէս այդ մեծը տեսնում ենք իսկական երկրագործ ժողովրդի մէջ, օրինակ, Շիրակի գաւառում: Կախէթի գիւղացու եզները՝ թուլ, ցածրահասակ, վտիտ և անկենդան բաներ են, բարբոսի նմանութիւն չունին Շիրակի գիւղացու հերկուէս-եզներին...: Հէնց ինքը, այստեղի գիւղացին էլ սաստիկ զանազանուում է Շիրակի գիւղացուց իր դէմքի անտարբեր արտապայտութիւնով ուռած, կարմիր երեսով, կարճ հասակով և թուլ մարմնով: Շիրակի գիւղացին—մարմնացած աշխատանք և տոկունութիւն է: Նրա ամբողջ ջլոտ և բարակ կերպարանքը, բարձր հասակը, խոհեմ, ուշադիր և մշտական հոգսով պատած դէմքը՝ պարզ ցուց են տալիս, որ կեանքը խաղ ու պար չէ սրա համար, որ գոլութեան կուրի մէջ՝ սա, մի եռանդուն և չամառմրցումով, աշխատում է ապրել, մտածում է ո՛չ միայն այսօրու, այլ և ապագայի մասին...: Երկրագործական աշխատանքի ծանր, խիտ և լուրջ ոգին, Շիրակի բնութեան աղքատ, չոր և անդեղատեսիլ կերպարանքը ստիպել են այստեղի գիւղացուն «խելքը գլուխը հաւաքել», կենտրոնանալ, խոհեմ, մտածող և լուրջ լինել: Այն, բնութիւնը այստեղ երես չի տալիս հալ գիւղացուն... Ինչ կալ Շիրակում՝ բացի ցորենից, գարուց և կտաւա-

հատից. ոչինչ, ոչինչ և դարձեալ ոչինչ: Շիրակը, Արևանի և Թրիֆլիսի նահանգները մէջ մի կատարեալ անապատ է՝ բուսականութեան, պտուղների, բերքերի կողմից: Մանկութեան հասակից խեղճ ժողովրդի աչքը ոչ մի բան չի հրապուրում բնութեան մէջ՝ բացի արեգակի մուտքից և ելքից... կարծես Աստուած խռով է կացել այդ երկրի գլխին՝ զրկելով այն բոլոր շտապութիւններից, ինչով որ առատօրէն վարձատրւած են Արմաշի միւս տեղերը. կարծես՝ խիստ անասունները, պողատու ծառերը, հարուստ ազիւնները և պարտէզները Շիրակի համար չեն ստեղծւած աշխարհիս երեսին: Եւ ա՜ն, գտանելով այս տեսակ սուղ Փիղիքական պայմանների մէջ, զրկւած բնութեան ամեն գեղեցկութիւններից և շլացնող, գրաւող պարտէզներից, Շիրակի հալ գիւղացին իւր աչքերը դարձնում է գէպի գետին և իւր ոտների տակ գտնում է իւր կեանքի միակ և հաստատուն խարխուլը— սև հողը, որ հաստ շերտով փուլած է այդ երկրի ընդարձակ և լայն դաշտերի վրայ: Այդ հողը սալիս է գիւղացուն աստ մարդարտահատիկ ցորեն, այդ հողը կերակրում է գիւղացու տաւարը հիւթալից և սննդարար խոտով: Բաց սրբան աշխատանք է պահանջում գիւղացուց հողը իւր աւած ցորենի և խոտի համար, սրբան Փիղիքական և հոգեկան եռանդ է կորցնում հալ գիւղացին՝ իւր սուօրեալ հացը ճարելու, իւր կովերին ու եղներին կերակրելու համար... Եւ ի՜նչ է Շիրակի հալ գիւղացու ասպրուտը՝ հաց, պանիր, իւղ և մածուն— ա՜ն նրա մշտական կերակուրը՝ և այն էլ ամեն գիւղացի չի վաշելում այդ «բարիքների»): Կան շատ ընտանիքներ, որ ամիսը մի անգամ տաք կերակրի երես չեն տեսնում, որ ամբողջ «մեծ պասը» լսկ չոր հացով են անցկացնում... միս ուտելը խօ մի կատարեալ աօնախմբութիւն է Շիրակի գիւղացու համար: Այժէ այս անտեսական նեղ պայմանների վրայ աւելացնենք միւս կողմից և բնութեան խտութիւնը,— չարձանակ 3—4 ամիս տեղ ցրտաւուն ձմեռները, երբ գիւղացին, արջի նման, կծկուում, մտնում է իւր անասունների հետ գոմերի անկիւնները, և, բացի տաքանալուց՝ ուրիշ բանի վրայ չի մտածում. եթէ աչքի առաջ ունենանք, որ համարեալ ամեն տարի՝ կամ ցուրտը, կամ կարկուտը և կամ հեղեղը քչից-չափից միասում են այստեղի արտերին և գիւղացուն լաճախ ցցում են ծալրալեղ չուսահատութեան մէջ,— այն ժամանակ գուցէ մեզ համար մօտաւորապէս հասկանալի լինի Շիրակի գիւղացու իսկական դրութիւնը, գուցէ մենք կարողանանք երևակալութիւնով ըմբռնել, թէ ի՜նչ «ծանր քար է» այստեղի գիւղացու համար՝ իւր սուօրեալ սղորմելի ասպրուտը...: Բաց նա դարձեալ չի չուսահատում. դարձեալ նա եռանդով կուռում է իրան չրջապատող չուսահատական, նեղ հանգամանքների հետ: Եւ ա՜ն, այդ մշտական, անընդհատ կուռն է, որ ա՜նպէս ամրացրել, պողպատ է դարձրել Շիրակի գիւղացուն. այդ կուռն է, որ նրա մէջ դարգացրել է դարմանալի տոկունութեան, զրմացկանութեան ոգին: Աշխատանքը հալ գիւղացու կեանքի գեւիզն է,— պահեցողութիւնը, զրկանքը,—

Նրա «հաւատոյ հանդանակն» է: Աչս տեսակ խիստ, ասկէտական կեանքով է ապրում Շիրակի հալ գիւղացին:

Ի՞նչ համեմատութիւն սորա և Կախէթի գիւղացու մէջ. Կախէթի գիւղացին (թէ վրացի, թէ հալ միենողն է) երես տւած երեխալի է նմանում, և Նրան երես տւող, փալիալող գլուղ մալը՝—բնութիւնն է: Ես իմ չողւածի սկզբում, կարողացածիս չափ, Նկարադրեցի Կախէթի բնութիւնը. ալդ Նկարագրութեան մէջ ես մի տեղ ասացի, որ «ամբողջ Կախէթը՝ խաղողի մի մեծ և ընդարձակ ալգի է»: Բայց ալդ միայն նշանակում է, որ խաղողը «աիրապետող» բոյն է ալտեղ. բացի խաղողից՝ ալտեղի արեղակի տակ հասնում են՝ թուզ, նուռ, փշատ, ընկուղ, նուշ, սերկերի և այլ շատ տեսակ ստուղներ, որոնք ըստ չափու՝ նոյնպէս նպաստում են գիւղացու կեանքի ապահովութեանը: Չը պէտք է մոռանալ և ալն, որ Կախէթի կլիման չափազանց մեղմ, դուրեկան, համարեա «դրախտալին» է... Թէև փաղը, վառելիքը, շորհիւ անտառների, շատ էփան է ալտեղ, բայց ինչ հարկաւոր է վառելիք ձմրան համար, քանի որ իւր ամբողջ ընթացքում Ալզաանի հովիտը մեւի է ձիան սպիտակ ծածկոցից, այն ծածկոցից, որը մի արշին հաստութեամբ ընկած է լինում Շիրակի դաշտերի վրայ: Մինչդեռ խեղճ շիրակեցին, ձմրան սարսափելի ցրտերի ժամանակ, փալտի կտոր անգամ չունի և, հայ թիւերու, տաքանալու համար՝ գործ է դնում իւր տաւարի աղբից պատրաստած զլւելի աթարը. մինչդեռ ալդ ողորմելին աթարի թանձր ծուխով ու գոմի գարշահոտութիւններով է տաքացնում տառած մարմնի անդամները, — Կախէթի բնակիչը, մեղմ և հանգարտ ձմրան ժամանակ՝ երկու քալ է փոխում գէպի անտառ, կտրում է անտեղից բարակ մացառներ, բարձում է իւր հաւատարիմ էշի վրալ և բերում է Աղնախ վաճառելու: Ալդ գործով նա զբաղւած է բոլոր աշնան և ձմրան ընթացքում և, զրանից նոյնպէս, բաւականին արդիւնք ստանում է: Կարելի է ասել, որ ալն կողմնակի արդիւնքները կախէթցին միայն «չաւլութեան» համար է մխտում.— ի հարկէ չաւլութիւն խօսքը հասկացած գիւղական մտքով, համեմատած դարձեալ շիրակեցու հետ: Եւ ճշմարիտ՝ ո՞վ է լսել, որ Ալէքսանդրապոլի կողմերի (Շիրակը ալդ է) գիւղացին՝ գիւղից քաղաք եկած ժամանակ, տուն վերադառնալիս, մտնի կանդիտերի խանութը և մեր երեխաների համար՝ պիրոժնի, կոնֆեկտներ առնի... Ո՞վ է տեսել, որ խտտակեաց և հաշւատես շիրակեցին՝ քաղաքի գինեոտներում ընկերովի քէֆ անէ, զինի իմէ: Գինի... գինի խմելը Ալէքսանդրապոլի և Ղարսի վաճառականների համար էլ մի առանձին արտաքոյ կարգի երևոյթ է, ուր միաց գիւղացու համար: Իսկ Կախէթում, գիւղացին պիրոժնի և կոնֆեկտներ է ստնում երեխաների համար, հովանոց, ձեռնոցներ է բնծալում կնոջը, քէֆ է անում Աղնախի գինեոտներում և փառչերով սև գինի է կոնծում...:

Իմ առաջ բերած մի շարք տնտեսական և բնական պայմանների հա-

մեմատութիւնից ընթերցողը հեշտութեամբ կարող է եզրակացնել, որ Կովկասի երկու հշանաւոր գաւառները՝ Կախէթը և Շիրակը՝ կատարեալ հակապատկեր են միմեանց:

Մի կողմ՝ չուալ, գեղարեւոտական բնութիւն է, մեղմ, կենդանարար կլիմայ, հարուստ բուսականութիւն.—միւս կողմ՝ ամալի և անգեղատեսիլ դաշտեր, խիստ և ճնշող կլիմայ, չոր, անպտուղ, անօգուտ և աղքատ բուսականութիւն: Աղղայխտարքեր և միմեանց հակառակ բնական պայմանները մէջ ապրող ժողովրդի կեանքն էլ ստացել է ծայրալեզ հակառակ թէ տնտեսական և թէ հոգեբանական՝ արտապատկիւն:

Կախէթի ժողովուրդը հարուստ է, չուալ, գլարճութիւն և քէֆ սիրող է. ալը հարստութեան, չուալութեան, զւարճասիրութեան հետեանքն էլ՝ մարդոց բնութեան ընդհանուր թուլութիւնն է, նրանց անհոգ և ուրախ հոգեկան տրամադրութիւնն է:

Շիրակի ժողովուրդը աղքատ է, պարապում է սոսկ երկրագործական աշխատանքով, ալը աշխատանքից նա ստանում է իւր կեանքի սուղ և չքաւոր ապրուստը: Աղքատութիւնը, բնութեան մերկութիւնը և սաստիկ ծանր աշխատանքը կրթել, գաստիարակել են Շիրակի գիւղացուն, տալով նրա բնաւորութեանը՝ խիստ, զիմացկուն, լուրջ արտապատկիւն և մրցելու ընդունակութիւն:

Ալժմ հարց. ում է պատկանում ապագան...—ապագան ոլժի կողմն է, աշխատելու ընդունակութեան, սովուն, ինքնազուսպ և խիստ բնաւորութեան կողմն է: Առաջադիմութիւնը կատարում է՝ ոչ թէ քէֆով, ուրախութիւնով ու անհոգ տրամադրութիւնով.—առաջադիմութիւնը կատարում է ծանր աշխատանքով, լուրջ, խելացի և ողջախոհ վարք ու բարքով:

Շիրակի գիւղացին, տանելով իւր ուսերի վերայ կեանքի ամեն տեսակ նեղութիւններ ու զրկանք, անդադար կուեւրով բնութեան խիստ ոլժերի և պայմանների հետ, անդադար մտածելով իւր կեանքի ապահովութեան, իւր աւօրեալ մի կտոր հացի մասին՝—ներկայանում է մեր առաջ, որպէս մի կալուն և անչողողգ զօրութիւն, որպէս մի կենդանի գրաւական՝ ապագալ կեանքի, ապագալ առաջադիմութեան:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆՅԻ

Ո՞րն է դրախտը՝ վայրն երանաւէտ,
Ուր պիտի ապրեմ գերեզմանից յետ.
Միթէ մարդկային տառապած կեանքը
Չը ստեղծեց այն սուտ մխիթարանքը,
Եւ միթէ նորա մահից սարսափած
Ազահուլթիւնը չէ իրան խաբած...
Սակայն բարի է.—մի տանջւած արդար
Կամ իրան արդար համարող մի չար
Երկրային կեանքի վերջին վայրկենին
Հանգիստ ու խաղաղ կ'աւանդէ հոգին,
Համաձայն իրա ճաշակի, կամքի
Վայելքն յիշելով խոստացեալ կեանքի:
Եւ ահա միակ բայց մեծ օգուտը,
Որ մարդկութեանը տւեց այս սուտը...
Ա՛յս է մեր կեանքը—լոկ խաբէութիւն:
Ո՛հ, միթէ և ես, ինչպէս մի հնչիւն,
Այս իմ յոյսերիս, ձգտումներիս հետ
Պիտի մեռանիմ չքանսմ անհետ ..
Չէ, սիրելի է խոստումն երկնքի—
Յոյսն յաւերժական, անվախճան կեանքի.
Հեռու ինձանից հոգեմաշ կասկած,
Ողջոյն քեզ, ողջոյն, ով կեանքի Աստուած.
Արի՛, յայտնւիր, նշկահիր մահու

Տարակուսանաց տազնապն ահարկու,
 Եւ կոյր հաւատով զօրացրու հոգիւ—
 Անմահութիւն տուր լքացած կեանքիս...
 Բայց քնչպէս պիտի կեանք առնեմ կրկին.
 Արդեօք լուսակազմ, աննիւթ, անմարմին
 Պիտի սաւառնեմ անծայր եթերքո՞ւմ,
 Թէ իբրև մի հունչ շրջեմ աշխարքում.
 Թէ անփոյթ, անգործ թափառեմ պիտի
 Ասրդոց աչքերին անտեսանելի,
 Թէ ամպերի մէջ պիտի ես հանգչեմ
 Եւ ոտքիս տակից կայծակներ իջնեն...
 Օ', ներիր Աստուած, ծածկագէտ, անհուն,
 Ներիր մեծամիտ, գոռոզ պատանուն,—
 Աննշան ճճիս չարաչար մեղայ,
 Յանդուզն խորհրդով խորամուխ եղայ,
 Զգտեցի պարզել քո աստուծային
 Անհասանելի, անմեկին գաղտնին:

1890 թ., ապրիլ:

ՀԱՅԿԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ

Գ. Ա. ՇՐՈՒՄՊՅԻ

Ֆրանսիայի համալսարանից

(Շարունակութիւն 1)

Որովհետև Ջրպետը, 1816 թ-ին երեք տարւայ արձակուրդ ստանալով՝ այլ ևս Պարիզ չը վերադարձաւ, նորա տեղապահը՝ Պոլ Էմիլ Լըւայան Ֆլորիւալ (Levaillant de Florival) նշանակեց տիպոգրատոր պրոֆէսոր՝ ղեկրեւոյ առ 4 սեպտ. 1830 թ.: Այդ զինականը հետեւել էր 1821—1823 Ecole des chartes դպրոցի և յետոյ Արևելեան լեզուների դպրոցի դասընթացքները: 1831-ին նա հրատարակեց՝ «Նկարագրութիւն հալածանքների հայ կաթողիկոսների դէմ՝ կատարւած 4. Պոլսում 1828 թ-ին ²⁾: Նա հրատարակեց նաև 12-րդ դարու հեղինակ Միխիթար Գոշի առակները ³⁾, մի ծանօթութիւնով Միխիթարեան միաբանութեան մասին: 1834-ին նա արձակուրդ խնդրեց Հայաստանում՝ մի ծանապարհորդութիւն անելու համար, բայց Վենետիկի Ս. Ղազարից դէնը չը գնաց, դառնալով այդ միաբանութեան անդամ: Իւր բացակայութեան ժամանակ Պարիզում նորան զետեղեց Եւզենիոս Բորէ, որի մասին դեռ խօսք կը լինի: 1836-ին նա լոյս բնծայեց Մոսկէս Խորենացու շատ անհարազատ թարգմանութիւնը:

¹⁾ Տես «Մուրճ» 1891 №№ 2, 3.

²⁾ Exposé des persécutions exercées en 1828 à Constantinople contre les catholiques arméniens.

³⁾ Տպագրութիւններ Միխիթարեան Ուխտի 1790, 1842, 1854.

Նա թարգմանել էր Տիգրանակերտը՝ Tigraneville, Երևանդակերտը՝ Erouantavile, Բագարանը՝ Idoleville, և այլն: Նա իրան ստիպւած տեսաւ այդ թարգմանութիւնը վաճառքից յետ վերցնել, և 1841-ին հրատարակեց Ս. Ղազարում Խորենացու հայերէն բնագիրը՝ ղիմացը ֆրանսերէն լաւագոյն թարգմանութիւնով: Այդ գործի մէջ նորան աջակցեց Գաբրիէլ Աբազովսկի ¹⁾: Լըւայան զը Ֆլորիւալը տւեց նաև Journal Asiatique թերթին մի քանի փոքրիկ յօդաճներ, իսկ 3-ին նա լոյս ընծայեց Ֆրանսերէն թարգմանած «եղծ աղանդոց» եզնիկ Կողբացու, որը V-ը դարու գրող էր, եպիսկոպոս էր Բանգրևանդի և աշակերտ Ս. Սահակի և Ս. Մեսրոպի: Այդ թարգմանութիւնն էլ շատ անձիշդ է, ինչպէս ցոյց տւեց Արման զը Վիկերինգ (de Wiekering), Revue de l'Orient թերթում, հատոր V, երես 207—216: Եւ իրօք, թարգմանիչը միանգամայն յեղաթիւրել էր շատ տողերի միտքը:

Լըւայան զը Ֆլորիւալը մեռաւ 1862 թ-ին. նորան փոխարինեց Դիւլյորիէ (Dulaurier), որը բռնեց հայկական ամբիոնը քսան տարի շարունակ:

Էղուարդ Դիւլյորիէ ծնւեց 1807 թ. Տուլուզ քաղաքում: Նա սկզբում իրան նւիրել էր կոպտերէնի ուսումնասիրութեանը: 1838-ին նրան մի գիտնական յանձնարարութիւն արւեց Անգլիայում ուսանել եգիպտական արձանները. բայց իւր հետազօտութիւնների ընթացքում հանդիպելով մեծ թւով մալայերէն, ջալայերէն ձեռագրերի, նորա մէջ չղացաւ այդ լեզուները ուսանելու միտքը և, 1841-ին վերադառնալով Պարիզ, նա թոյլտուութիւն ստացաւ այդ լեզուներին

¹⁾ Նշանաւոր լեզագէտ, ծնւած 1812 թ. Արիմի Թէոդոսիա քաղաքում: Նա իւր ուսումը ստացաւ Ս. Ղազարում, ուր նա 1853-ին (?) հիմնեց Բագմավէպ պատուական հանդիսը, որը ցալժմ էլ այնտեղ հրատարակոււմ է: 1848 ին նա նշանակեց կառավարիչ նախկին Մուրադեան ձեմարանի Պարիզում: Բայց շուտով զրանից լիտուլ նա բաժանեց Մխիթարեաններից, հիմնեց մի ֆրանս-հայերէն թերթ «Մասնաց Աղանի» և, մի կարծ ժամանակ իւր հայրենի քաղաքում մնալուց յետ՝ գնաց Էջմիածին իբրև անտուչ (?): Նա մեռաւ 1880 թ. Փիֆլիսում իբրև Վրաստանի և Իմերէթիայի հայոց առաջնորդ: Գրեց մի Պատմութիւն Ռուսաստանի և մի Պատմութիւն Տաճկաց կալսերութեան:

նւիրել մի դաշնութացք Արևելեան լեզուների զպրոցում: 1844-ին Նա նոյնպէս սովորել էր արաբերէն, հայերէն և ռուսերէն: Յայտնի է, որ ռուսերէնը գրեթէ անհրաժեշտ է հայկաբաններին, շնորհիւ այն բանի, որ մեծ թւով ռուսերէն գրւածքներ կան հայերէնի մասին: Մենք կը շատանանք հետևեալում առաջ բերել Դիւլյորիէի այն զըրւածքները, որոնք յարաբերութիւն ունեն Հայաստանի հետ, և որոնք հէնց միայնակ բաւական են արդարացնելու համար Էրնէստ Ռընանի յայտնած գովասանքը իւր տարեկան զեկուցման մէջ Ասիական ընկերութեան նիստում 30 յունիսի 1882 թ.: Նա ասաց՝ «Ներկայ ժամանակաւ արևելագետների մէջ միայն սակաւները կարողացել են իրանց կեանքը աւելի լրիւ գործադրել:

Դիւլյորիէն ամենից առաջ կպաւ խաչակրաց արշաւանքների հայկական պատմիչների ուսումնասիրութեանը: Դեռ ևս Ջրպետը շահացրել էր Մեսրոպը Երէցի գրւածքը մեծն Ներսէսի մասին, Մատթէոս Եղեսացու ժամանակագրութիւնը և Ներսէս Ենոքհալու 1152 թ. գրած և ութ երգից բաղկացած Ողբը Եղեսայի առման մասին, ուր անձնաւորացրած քաղաքը ողբում է իւր սեպհական դժբաղդութիւնների վերայ:

Դիւլյորիէն հրատարակեց 1850-ին Մատթէոս Եղեսացու առաջին խաչակրաց արշաւանքի պատմութիւնը (VIII+108 երես) և 1858-ին Մատթէոս Եղեսացու ժամանակագրութիւնը (952—1036 թւական փրկչական), որի շարունակութիւնը գրեց Գրիգոր քահանան (մինչ 1162 թ.)¹⁾: Բայց միայն 1869-ին լոյս տեսաւ նորա հիմնական աշխատութիւնը, այն է՝ Ժողովածու խաչակրաց պատմագիրների՝ հայկական զոհումենտների, հատոր առաջին²⁾: Ահա թէ ինչպէս է այդ գիրքը նկարագրում Էրնէստ Ռընանը Ասիական Ընկերութեան տարեկան զեկուցման մէջ առ 28-ն յունիսի 1870 թ.՝ «Մի յառաջաբան գործածած զոհումենտների մասին, մի ընդարձակ ներա-

1) Քննադատութիւն դոցա մասին տես Journal des savants 1858, երես 550, և Էւալդի քննադատութիւնը Göttingische gelehrte Anzeigen, 1852 երես 241—250:

2) Պրանսերէն լեզուով է այդ գիրքը՝ Recueil des historiens des croisades.—Documents arméniens, tome I-er, in folio, CXXIV+355 երես: Հրատարակեց l'Académie des Inscriptions et Belles-Lettres.

ծուծիւն Փոքր Հայոց թագաւորութեան և Արիւիւհայի մասին խաշակրաց ժամանակ. ծննդաբանական և տոհմագրական ցուցակները կազմում են նորա սկիզբը. յետոյ գալիս են բուն պատմագիրները՝ Մատթէոս Եղեսացի, Միքայէլ Սիրիացի, Ներսէս Լամբրոնացի և շատ ուրիշներ, հայերէն բնագրով և ֆրանսերէն թարգմանութիւնով: Մի յաւելած պարունակում է պատմութիւնը Փոքր Հայոց թագաւորութեան Լուսինեանների ներքոյ, որ ժամանակից քիչ հայկական զոհումներ կան: Հատորը վերջանում է շորս հրովարտակներով, որ արւած են արևագրական ֆակ-սիմիլներով և գրական, պատմական և աշխարհագրական ցուցակներով: Երկրորդ հատորը պէտք է բովանդակէր հրովարտակները, պապերի բուլլաները, դրամները, արտագրողների նկատողութիւնները, արձանագրութիւնները և այլն, որ վերաբերում են այն հայերի պատմութեանը, որոնց կենտրոնը Սիսն է կազմուած:

Շնորհիւ իւր ծանօթութեանը ոսերէնի հետ և իւր թղթակցութեան Մկրտիչ Էմինի հետ, Դիւլլորիէն կարողացաւ ունենալ բաւականին շարատե շարաբերութիւններ Լազարեան ճեմարանի հետ: 1855-ին նա հրատարակեց Revue de l'Orient հանդիսում մի ծանօթութիւն այդ հիմնարկութեան մասին, և Journal Asiatique թերթում 1858-ին մի մահագուժական նկատողութիւն Յովհաննէս Լազարեանի ¹⁾ մասին, որ վախճանեց նոյն թւականի փետր. 18-ին Պետերբուրգում:

Դիւլլորիէն՝ ոսերէնից թարգմանած կարևորագոյն գրւած քննրից մէկն է մի փոքրիկ գիրք, որի վերնագիրն է՝ «Պատմութիւնը, դաւանանքը, աւանդութիւնները և ժամատացութիւնը Հայոց արևելեան եկեղեցու», որից մի 3-րդ տպագրութիւն լոյս տեսաւ 1859 թ. Պարիզում (186 փոքրապիւր երեսներ): Այս փոքրիկ գիրքը, որը Լազարեան ճեմարանի սեպհականութիւնն է, պարունակում է կարճ պատմութիւնը Հայոց եկեղեցու, այդ եկեղեցու դաւանանքը՝ Ներսէս Շնորհալու գրած, սուրբ պատարալը և վերջապէս յաւելած ծանօ-

¹⁾ Յուլիանի հեղինակ պ. Նրումպֆը ակներև կերպով չափազանցեում է Լազարեանների տոհմի գիրքը, անւանելով հանգուցեալին կոմս Թովհաննէս II Լազարեան le comte Jean II de Lazareff.

Թութիւններ սուրբ յաղորդութեան, հոգևորական կազմակերպութեան, հոգևորականների հանդերձների մասին և այլն:

Դիւլյորիէն հրատարակեց նաև Revue des Deux Mondes ամսագրում 15 ապր. 1859 թւականի մի յօդած այս վերնագրով՝ «Հայոց հասարակութիւնը XIX-րդ դարում, նորա քաղաքական, կրօնական և գրականական դրութիւնը»: Արպէս շարունակութիւն այդ ուսումնասիրութեան կարելի է կարգալ իշխան Մ. Բ. Դադեանի յօդածը, հրատարակւած նոյն ամսագրի 1867 թ. 15 յունիսի համարում:

Իրանական հայկարանը նպաստեց նաև Revue des Deux Mondes ամսագրին յօդածներով ներկայիս քաղաքականութեան, մանաւանդ Ռուսաստանի գործերի մասին կովկասում և ուրիշ նիւթերի մասին: 1858 թ. 15 ապրիլի համարում նա ծանօթացրեց Խուզաբաշեանի հայերէն-ուսերէն բառգրքի հետ: Դեռ ևս 1855 թ-ին 15 հոկտ. համարում նա այդ ամսագրում այս յօդածը հրատարակեց՝ «Փոքր Ասիան ըստ մի սուս ճանապարհորդի»: Journal Asiatique թերթում (VI-դ սերիա, հատոր 13) նա թարգմանեց հայր Ղևոնդ Ալիշանի աշխարհագրութիւնից (Ս. Ղազար, 1854) այն գլուխները, որ վերաբերում են Բարձր Հայքի տեղագրութեան: Ինչ վերաբերում է Փոքր Հայքին, նա արդէն նոյն թերթում յայտնեց, որ շահաւէտ կերպով կարելի է ուսանել հայր Ներսէս Սարգիսեան Տրպիզոնցու աշխատասիրութիւնը (Վենետիկ, 1886, 289 էրես): Վերջինս սիրելի աշակերտն էր Սուքիաս Սոմալեանի, որը ճանապարհորդեց Հայաստանում 1843—1853 թւականներում: Դիւլյորիէն տպագրեց նոյն թերթում (Journal Asiatique, հատոր 17, 5-դ սերիա, էր. 377—437) «Ուսումնասիրութիւն Փոքր Հայոց թագաւորութեան քաղաքական, կրօնական և վարչական կազմակերպութեան: Revue de l'Orient թերթում 1858-ին նա տպագրեց մի յօդած՝ «Խաչակիրների պատմութիւնը ըստ հայկական ժամանակագրութիւնների», և մի այլ յօդած՝ «Վաճառականութիւնը, մաքսերի տարիքները և օտարականների քաղաքացիական դրութիւնը Փոքր Հայոց թագաւորութեան մէջ միջին դարերում» (Revue de l'Orient, հատոր 8-դ, էրես 277—287 և 359—366) ¹⁾:

¹⁾ Կիրակոսը ապրեց 1201—1272: Այդ գրքից մի տպագրութիւն

Պատմական մասում Դիւլյորիէն կանգ չ'առաւ միայն խաչակիր-ների վերայ: Նա մանաւանդ ուսումնասիրեց մոնղոլների շրջանը և 1858-ին հրատարակեց Journal Asiatique, 5-րդ սերիայի 11-րդ հատորում՝ «Մոնղոլները ըստ հայկական պատմաբանների, բնադիրներից թարգմանած կտորներ (երես 192—255, 426—473, 481—508): Դոքա՝ Կիրակոս վարդապետ Գանձակեցու պատմութիւնից քաղածներ են ¹⁾: Դորա շարունակութիւնը, քաղած վարդան պատմիչից ²⁾, լոյս տեսաւ V-րդ սերիայի 16-րդ հատորում (երես 273—322): Դեռ ևս 1848-ին Դիւլյորիէն նոյն սեղում թարգմանել էր Միքայէլ Ատրեցոյց ³⁾ մի կտոր, սկսած Յուստին II-ից մինչև Լևոն III Իսաւրեցին:

Երբ որ Էւարիստ Պրիւզոմը (Evariste Prud homme) թարգմանեց ռսերէնից, Journal Asiatique հանդէսի համար Քերովքէ Պատկանեանի «Նեոաղօտութիւններ հայոց լեզուի կազմելու մասին», Դիւլյորիէն նորա վերայ շատ թանկագին լեզագիտական ծանօթութիւններ աւելցրեց, շատ պարզ բացատրութիւնով հանդերձ հայոց հոլովման սխտեմի մասին: Վերջապէս Journal des Savants թերթում 1869 և 1871 թ-ին նա քննադատեց Լանգլուայի հրատարակած «Ժողովածուն հայոց պատմագիրների»:

Դիւլյորիէն մեռաւ 21 զեկտ. 1881 թւականի: Իւր մահւան րոպէին նա պատրաստում էր հրատարակել Ասողիկ կոչւած X-րդ դարու Ստեփաննոս Տարօնացու «Տիեզերական պատմութիւնը», որովհետև նա շատ վարժ էր երգերը լուսաբանելու գործում: Առաջին երկու

երեսաց վեճեաթիկ, 1864. Բրոսսէն տւեց նորա լիակատար թարգմանութիւնը «Deux historiens arméniens» վերնագրով հատորի մէջ, տպւած Ս. Պետերբուրգ 1870 թ.:

¹⁾ Տես «Recueil des Croisades, երես 334—343. Տպագրութիւններ՝ Մոսկւա, 1861, վեճեաթիկ 1862: 1833-ին Կլապրոթը հրատարակել էր Journal Asiatique հանդէսի հատոր XII, (երես 193—214 և 273—305) մի անսովոր մոնղոլների արշաւանքների վրաստանում և Հայաստանում XIII-րդ դարում:

²⁾ Միքայէլ մեծն (1127—1200), պատրիարք Յակոբեան ատրեցիների, Տես Recueil des Croisades, երես 311—409: Լիակատար թարգմանութիւն Իշոկ քահանայի հաչերէն վերսիայից վիկտոր Լանգլուայի, վեճեաթիկ 1868:

³⁾ Collection des historiens arméniens publiée par V. Langlois.

զրբերը արգէն պտտրաստ էին տպագրութեան համար և լոյս տեսան 1883 թ-ին Լըու (Lerou) հրատարակչի մօտ: Այն ծանօթութիւնները, որոնցով հարստացրել է Ռիւլլորիէն իւր թարգմանութիւնը, շատ հետաքրքրական են և վկայում են նոցա հեղինակի խորը գիտնականութիւնը: Թարգմանութիւնը հիմնւած է մի ձեռագրի վերայ որ Պարիզումն է և մէկն էլ Վենետիկի ձեռագրի վերայ՝ համեմատութիւններով Էջմիածնի բնագրի հետ, որ հրատարակեց 1857 թ. Կարապետ Նահնգարեան (308 երես) և որ թարգմանեց ոսերէն Մկ. Էմինը (Մոսկւա, 1864): Պրն. Օգիւստ Կարրիէրը այժմ պատրաստում է երրորդ և վերջին հատորի թարգմանութիւնը: Այդ մասը պարունակելու է նաև Ռիւլլորիէի մանրամասն կենսագրութիւնը, որը կը լրացնէ մերի պակասները:

Պարոն Օգիւստ Կարրիէրը (Carrière) որը, Ռիւլլորիէի մահէց յետ ստանձնեց հայերէնի դասերը Արևելեան լեզուների դպրոցում, ծնւել է Ֆրանսիայի Լիւյնըրէ քաղաքում (Աէն-էն-Ֆերիեօր նահանգում): Իւր ասուածաբանական ուսումը ստացաւ Փընսելում, և Սորբոնըրի բողոքական ասուածաբանութեան ֆակուլտետում 1864 թ. պաշտպանեց մի թէզիս այս վերնագրով՝ «Հաբակումի մարգարէութեան ժամանակի պատմական և քննադատական ուսումնասիրութիւն»: Յետոյ նա դառաւ բեպետիտոր Ecole des Hautes Etudes (բարձրագոյն ուսման) դպրոցում, և 1873 թ. նշանակեց քորտուղար-գրադարանապետ Արևելեան լեզուների դպրոցում, որի 20,000 հատոր զրբերը նա դասաւորեց: Մենք արդէն առաջ ենք բերել այն գովեստը որ արել է նորա մասին Պաուլ դը Լագարդը: Եւ իրօք, պ. Կարրիէրը ունի բոլոր չտակութիւնները, որ նա մեզ սայ հայոց հեղինակների լաւ քննադատական հրատարակութիւնները: Մենք արդէն ունինք նորանից Ասանէթի պատմութեան հայերէն պարբերութեան թարգմանութիւնը (Իպրոցի հրատարակած Nouvelles Mélanges Orientaux թերթում, 1886 թ. երես 471—513), որի մասին խօսեցինք Զոհրաբի առիթով: Վերջինս աւելցրել էր իւր 1805 թւականի աւետարանին որպէս չաւելած Կողբասի 4-րդ զրբի պարբերութիւնը և յայտարարել էր իւր չառաջաբանում թէ նա այլ կեղծ ձեռագիրներ ունէր, որպէս՝ Մահ տաններէու մարգարէների, Տասներկու պատրիարքների կտակարանը և Յովսէփի սւ Ասանէթի պատմու-

Թիւնը: Գոյանից ոչ մէկը չը հրատարակեց, մինչդեռ 1870-ին Էմիլի Մոսկալցում հրատարակած և 1867-ին՝ Պատկանեանի Ս. Պետերբուրգում հրատարակած Մխիթար Այրիվանքի ժամանակագրութիւնը (1297 թ.) ցոյց է տալիս որ XII-րդ դարում կար նորանից մի ժողովածու: Երոստէն տեց նորա ցուցակը (Մէմուարներ Գիտութիւնների Ահադէմիայի Ս. Պետերբուրգում, VII-րդ սերիա հատոր 13, № 5), և նորա մասին կան չիշատակութիւններ Էջմիածնի ձեռագրերի ցուցակում (Քրիշիս, 1863): Չորսրը գիտաւորութիւնունէր հրատարակել 12 պատրիարքների կտակարանը և Ասանէթի պատմութիւնը: Նա մինչև անգամ նորա պատճէնը պատրաստել էր տպարանին յանձնելու համար: Պարոն Կարրիէրը յաջողակ միտք ունեցաւ զորանից օգտուելու: Մենք կարծում ենք թէ, այս մանրամասները պատմելով, մենք նրան հաճոյք են պատճառում, որովհետև նա նկատում է որ այս առայժմ կորած զրքերը անշուշտ պատնուում են հայոց Աստուածաշնչի բազմաթիւ ձեռագրներից մէկում կամ միւսում: Մենք առաջարկում ենք ուրեմն այն ամենքին, որոնց մասնէլի են այդ տեսակ ձեռագրերը, սոցա ի մօտոյ քննեն ու տեսնեն՝ չկայ նոցա մէջ արդեօք որ և է սպօսիրիթ (անհարազատ) գիրք: Պարոն Կարրիէրը հրատարակեց նաև Բազիլիսկու ժողովածուի հայերէն մի մասնատուփի արձանագրութեան բնագիրը և թարգմանութիւնը (տես Mélanges Orientaux, 1883): Այդ արձանագրութիւնները շատ հետաքրքրական են և պարունակում են մի ողբկաթողիկոսի Հռոմ-Կլա բերդաքաղաքի առման մասին (1293), եզրպտոսի սուլթան Էլ-Մէլիք Էլ Աշրաֆի կողմից: Նա պէտք է հեղինակած լինի Ագեհրա (?) վանքում Հեթումի թագաւորութեան ժամանակ (1289—1307):

Կարրիէրը այնուհետև մի մեծ ծառայութիւն արաւ Փրանսիացի ուսանողներին, թարգմանելով հայերէն զրաբաուի քերականութիւնը, հեղինակութիւն Լաուէրի (Lauer), վերաստուգած և աւելցրած ընտիր քաղաւածներով՝ մեկնութիւններով հանդերձ (Պարիզ, 1883, Մէզոննետ, XIV+220 երես):

Կարրիէրը, վերջապէս, հրատարակեց, Մկրտիչ Էմիլի յրեւեանի առիթով, մի հին բառգիրք (glossaire) հայերէն-լատիներէն (Պարիզ, 1586, 19 երես in-8°), վերնագրած՝ verba seu dictiones

Armeniorum»: Այս բարգիւրքը գտնուում է Սբ. Հերոնիմոսի մի ձեռագրի մէջ, որը գրւած է մօտ 900 թւականին և գտանուում է Օտենի (Autun) հոգևոր դպրանոցում, ուր և նորան գտաւ պ. Օմոն (Omont): Դա մի շատ հետաքրքրական գիւտ է, քանի որ նա մեզ միջոց է տալիս դատելու հայերէնի արտասանութեան մասին X-րդ դարուց առաջ: Նորա նշանակութիւնը ցոյց տւեց Պաուլ զը Լագարդը «Գեոտոմիոգէնի գիտնական թերթի» մէջ 1888 թ., № 8 (երես 292), և նորանից զուրս է բերում մի քանի եզրակացութիւններ, որոնք հաստատում են այն, ինչ նա յայտնել էր 1853 թւականին իւր «Հայերի նախապատմութեան մէջ», այն է թէ սանսկրիտ հաղաղային bh, gh, dh, հայերէնում զրւեց բ (b), գ (g) և դ (d) մեզմ տաւերով: Բայց որովհետև սանսկրիտ b, g, d բաղաձայնների համար արդէն կային հայերէնում բ, գ, դ (b, g, g), այդ պատճառով աշխատեցին՝ շփոթութիւնից խոյս տալու համար՝ դիմել պ, կ, տ (p, k, t) ուժեղ բաղաձայններին: Բայց այդ տառադարձութիւնները միայն մասամբ կատարւեցին, քանի որ հայոց զրութիւնը արդէն հաստատուած էր. այդ պատճառով տառադարձութիւնները տեղի ունեցան միայն խօսակցական լեզուում: Բաւական է որ համեմատեցք գերմանական b, g, d բաղաձայնների արտասանութիւնը, որը շատ փոփոխական է մանաւանդ զանազան տեղերում և ժամանակներում: Արդ, Օտենի դպրոցի ձեռագիր բառգրքում մենք տեսնում ենք փոխադրած բ (b)=p, գ (g)=c, ch, k, կ (k)=g, k, ch և c, դ (d)=t: Այդ ապացուցում է որ վերոյիշեալ փոփոխութիւնները անշուշտ կատարւել են X-րդ դարուց առաջ: Իսկապէս նոքա շատ առաջ են կատարւել: Գորանում համոզւելու համար, բաւական է ուսումնասիրել այս տառադարձութիւնները որ անում են հայերէնից յոյները, հրէաները և այլն: Եւ այսօր իսկ շատ բարբառներում բաղաձայնների արտասանութիւնը շատ տարբերում է, այնպէս որ բաւական չէ ասելը թէ բէնը Թիֆլիսում արտասանուում է b, և Կ. Պոլսում՝ p, այլ պէտք է հաշի առնել նաև միջնորդական բառբառները, ուր նա երկու արտասանութիւն ունի: Այս նկատողութիւններից բղխում է այն, որ հին հայերէնի տառադարձութիւնը (եւրոպական տառերով) հնչիւնի կողմից (Ֆոնէտիքապէս) երբէք չի կարող ներկայացնել մի տեղի և ժամանակի արտասանութիւնը: Ամեն

տառադարձութիւն կարող է լինել միայն դրաՖիկական և ոչ Ֆոնէ-տիքական ¹⁾։

Մենք վերջացնում ենք այստեղ Արևելեան լեզուների Դպրոցի Հայկական ամբիոնի պատմութիւնը, որ բռնեցին հետզհետէ Զրպետ, Լըւայան դը Ֆլորիւայ, Իււլյորիէ և Կարրիէր։ Մեր հետևեալ յողաճ-ները կը խօսեն միւս Փրանսիական հայկաբանների մասին որոնք են՝ Սէն-Մարտէն, Վիկտոր Լանգլուա, Բրոսէ, Եւզենիոս Բորէ, Էւարիստ Պրիւ դոմ և Գաուտէցրաս։

¹⁾ Այլ խօսքերով պ. Շրուպֆը, ի մեծ գոհունակութիւն արևելեան հայերի, պաշտպանում է մեր կողմի հայերէն տառադարձութեան սխառմը, որ և ըստ մեզ աւելի խելացի է։

ԳԼՈՐԳ ք. ՄԿՐՏՈՒՄԵԱՆՅԻ

«Մառ, որ սչ բերէ գպտուղ բաբի,
Հատանի և ի հուր արկանի»:

Միայնակ տխուր անցնում են ժամերս
Հեռու՝ տշխարհի սին հաճույքներից.
Սնցնում են աւանդ, գնում են անյոյս,
Եւ լի տենչերով չեն դառնայ նորից,
Կմարի և իմ կեանք ինչպէս թոյլ ճրագ՝,
Կկորչի անհետ ինչպէս մի ժպիտ.
Եւ իղձերս անվերջ և եռանդիս կրակ
Կցամքին ինչպէս վտակը վճիտ:
Գիտեմ, որ կանցնեմ բոլորից աննշմար,
Չեմ խլի ջերմ արցունք սիրող աչերից,
Չի բարձրանայ կոթող ինձ համար
Պսակով պատած թարմ դափնիներից:
Գիտեմ, հայ եղբայր, ոչ մի ափսոսանք
Չես թափի դու ինձ հողին յանձնելիս.
Իտաը վշտերը, արցունքի հոսանք
Չեն տանջի սիրտդ ինձնից զրկելիս:
Աւել թնչ պատիւ, քան մոռացութիւն.
Ինձպէս անհատին տանջւող ազգի.
Ե՞րբ քեզ ցոյց տւի լի կարեկցութիւն,
Ե՞րբ քեզ գոհեցի ոյժը իմ բազկի:
Արդեօ՞ք լիշեցի քաղցածես, տանջւած,

Ուզեցի՞ սրբել արցունքդ աչքերից,
 Սրդեօ՞ք փորձեցի հայրենիք ընկած
 Ոտքի կանգնեցնել աւերակներից:
 Սրդեօ՞ք թողեցի սխ, ատելութիւն,
 Ընկեր առ ընկեր միացանք գործի.
 Սրդեօ՞ք յանձն առայ մի դժւարութիւն
 Քո պատւի համար առանց մի վարձի:
 Ախ, որքան կուզեմ շուտ անցնի ժամերս,
 Ինչպէս մի սուեր ջնջւի անհետ,
 Ինչպէս մի երազ ցնդւի կեանքս,
 Եւ անարգ, ստոր ահուես նորա հետ.
 Որպէս զի անունս չը լինի ապտակ
 Թարմ ուժով վառւած եկող սերնդին,
 Եւ անշարժ կեանքս, ինչպէս օրինակ,
 Նոցա քայլերը պինդ չկոշկանդին:

1889 թ., 20 նոյեմբերի

Ղալաբ:

ԵՐԿՐԱԳՆԴԻ ԱՊԱԳԱՆ

(Русск. Вѣд. № 117, 1891 г., Н. С.-ի յօդւածի թարգմ. Մ. Տ.-Ա.)

Երկրագնդի ազագան:—Երկրագնդի ցամաքը աւերոյ գործոնները:—Ապագանի հե-
պոթեզը ցամաքի ծովից կրանւելու մասին:—Նորա սխալ լինելը:—Ապագայում ջուրն
է կորչելու երկրիս երեսից:—Երկրագնդի վերջնական աւերումը անխուսափելի է:—
Մարդկային ոգու հաւանական յաղթանակը տարերքի ուժի դէմ:

Եթէ մարդուն չըջապատող աշխարհում կազ մի կանգուն, անդրդւելի,
հաստատ, չուսալի բան,—աչդ, ի հարկէ, նորա ոտի տակի երկիրն է: Գոնէ
աչդպէս է կարծում ինքը մարդը. նա դարձուրում է և բոլորովին կորց-
նում իրան, երբ որ երկիրը սկսում է տատանւել, շարժւել (օր. երկրա-
շարժի ժամանակ): Բաց բանից դուրս է գալիս, որ մեր աչդ նեցուկը,—
հողը, որի կանգունութիւնից և հաստատութիւնիցն է կախւած մեր գոյու-
թիւնը, նոյնպէս փոփոխական և անհիմն է, որպէս և ամեն ինչ աշխար-
հում: Մթնոլորտի ներգործութիւնից (անձրևից, ձիւնից և սպլն) բոլոր
բարձրութիւնները (բարձրալանդակները, լեռները) անընդհատաբար աւեր-
ւում են և աստիճանաբար չքանում: Այս աւերման ամենազլիւաւոր գոր-
ծոնը—ջուրը—անդադար քերում է բարձրալանդակների կմաղքը կազմող
լեռնալին դանդաւածքը (горная порода), անընդհատաբար լւանում է ժաշ-
ուերը, բարձրից ցած է տանում սարերի աւերումից գոյացած մեծ ու փոքր
կտորները և աչդպէս հզօր կերպով օգնում է երկրի մակերևութի աւելի և
աւելի հարթւելուն: Որովհետև այս հարթացնող ուժը անընդհատաբար շա-
րունակում է իւր գործը ամբողջ ցամաքի վրայ, ի հարկէ, վերջ ի վերջոյ
ամբողջ ցամաքը պէտք է մի հարթ տափարակ դառնալ: Բացի աչդ,—
գետերը աւազի տիղմի, հողալին մասնիկների մի ահագին քանակութիւն
դուրս են տանում ցամաքից և ծովերի խորքն ածում. այս պատճառով
ցամաքի մասսան անընդհատաբար պակասում է ու պակասում: Յամաքի
մասսալի պակասելուն օգնում է, ի միջի սպլոց, և ինքը ծովը, քանդելով
անդադար իւր ակերը: Այս բոլորը իմանալուց վտոյ ինքն ըստ ինքեան
հարց է առաջանում, թէ ինչ է վերջապէս սպասում այն ցամաքին, որի
վրայ մենք ապրում ենք. կուլ չի սալ, արդեօք, ժամանակով նորան ամ-

բողջովին ծովը, և մեր երկրադուռը արդեօք ժամանակով չի ծածկել ամբողջովին ջրով: Այս հարցը վերջին ամիսներս գիտնական մասնագետների բանակուրի առարկալ զարձաւ, որի հետ կ'աշխատենք ծանօթացնել ընթերցողին:

Չորս ամիս առաջ, Պարիզի աշխարհագրական ընկերութեան նիստերից մէկում լալտնի ֆրանսիացի երկրաբան Նապարանը երկրագնդի ապագայի մասին մի շատ հետաքրքիր զեկուցում կարդաց: Դատելու համար թէ ինչ ապագալ է սպասում երկրիս ցամաքին, հարկաւոր է այդ ցամաքի մեծութեան չափն իմանալ: Մինչև վերջին տասնամեակս, ծովի մակերևութից վեր գտնւող ցամաքի մասին մի փոքր ի շատէ ճիշդ կարծիք կադ մելու համար, շատ քիչ տեղեկութիւններ կալին գիտնականների ձեռքի տակ: Բայց այս ամենավերջին ժամանակներս զանազան գիտնականներ (Մուրրէյ, Պէնկ, Տիլլօ և այլն) մէկը միւսից անկալս աշխատելով այդ հարցի վրալ, այն եզրակացութեանը եկան, որ եթէ բոլոր ցամաքի վրալ հողք միւնդն հաստութիւնը ունենար, ցամաքի միջին բարձրութիւնը ծովի մակերևութից 700 մէտրի (մէտրը մի գալաչափ է մօտաւորապէս, կամ մօտ 22¹/₂ վերշոկ) կը հասնէր: Նապալէս ուրեմն երկրիս ցամաքը կարող ենք մեզ ներկայացնել իբր ովկիանոսի մակերևութից 700 մետր բարձրութիւն ունեցող մի հողալին շերտ: Ահա այս ահաղին հողալին մասսան պէտք է աչքի առաջ ունենանք, ցամաքը աւերող գործոնների մասին խօսելիս:

Շոտլանդացի գիտնական Մուրրէյի հաչուլ, միմիալն երկրագնդիս ամենամեծ գետերը ամեն տարի ցամաքից ովկիանոս են տանում մօտաւորապէս 15,000 միլիոն խորանարդ մէտր աւալ, քար, զանազան աղեր և այլ հողալին պինդ մասնիկներ: Այս միալն 19 զլիաւոր գետերի ցամաքից ովկիանոսը տարածն է, բայց եթէ հաչւի առնենք և նոցա հասցրած վնասը ովկիանոսների ու ծովերի ցամաքին, որոնք ամեն տարի ողողում են իրանց ափերը, այն ժամանակ պէտք է ենթաղրենք, որ ամենապակասը երկրագնդիս ցամաքի ծաւալը, մասսան, ամեն տարի կորցնում է 16,000 միլիոն խորանարդ մէտր հող, աւալ և այլն:

Այս կորուստը, որ ինքն ըստ ինքեան շատ մեծ է երեւում, մի շատ չնչին բան է երկրագնդիս ահագին ցամաքի համար: Այդ ցամաքը, ինչպէս վերը ասացինք, կարող ենք մեզ ներկայացնել իբր 700 մէտր միջին հաստութիւն ունեցող մի շերտ, իսկ այդ շերտի մակերևութը լալտնի է, որ 146 միլիոն քառակուսի կիլոմէտր է (146,000,000,000,000 քառակուսի մէտր): Վերև բերած թւերը ձեռքի տակ ունենալով, դժւար չէ հաչելը, որ երկրագնդիս ցամաքի ամեն տարալ կորուստը հաւասար է նորա միջին հաստութիւնից 0,15 միլիմէտր (մօտ մի մաղաչափ) պակասելուն: (Մանրամասնութիւնները բաց ենք թողնում): Եթէ ենթաղրենք որ 700 մէտր հաստութիւն ունեցող շերտը տարե ցտարի պէտք է մի մի մաղաչափ բարականալ, կարելի է հաչել որ 4¹/₂ միլիոն տարուց վետոլ երկրա-

գեղիս ցամաքը բոլորովին պէտք է չբանայ: Ահա ինչ հետեանքի է գալիս Լապարանը Պարիզի աշխարհագրական ընկերութեան նիստում իւր կարդացած, գեկուցման մէջ: Եթէ այս հետեանքը բոլորովին անսխալ էլ լինէր, այնուամենայնիւ նա մեզ համար միայն թէօրէտիքական նշանակութիւն կարող էր ունենալ: Եւ էլ ինչ ուրիշ նշանակութիւն կարող էր ունենալ մեզ համար այդքան հեռու ապագայից մեզ սպառնացող վտանգը:

Լապարանի բերած փաստերը և դատողութիւնները շատ հետաքրքիր և ուսանելի են. այնուամենայնիւ այդ փաստերից նորա դուրս բերած եզրակացութեան դէմ իսկոյն բողոքեցին շատ գիտնական մասնագէտներ: Այս վերջիններս պնդում են, թէ Լապարանը երկրագնդիս ապագան շատ միակողմանի (և ուրեմն սխալ) է լուսաբանել և վճռել: Բողոքողների բերած առարկութիւնները այնքան ծանրակշիռ են, որ վերջապէս ինքը Լապարանը համաձայնեց նրանց հետ: Մենք այստեղ համառօտաբար առաջ կը բերենք ընդդիմախօսութիւններից գլխաւորները:

Լապարանի դատողութիւնների միակողմանիութիւնը նրանումն է կաշանում, որ նա հաշի է առնում բոլոր ցամաքն աւերող գործոնները, իսկ հակառակ ուղղութեամբ գործողները, բոլորն էլ անտես են առնւած: Ամենից առաջ կարելի է Լապարանի դէմ դարձնել նորա ի միջի ալոց չիշած փաստերից մէկը. նա ասում է թէ ծովերի և ովկիանոսների ալիքները ողողում ու տանում են իրանց ափերից մեծ քանակութեամբ հող, բայց հէնց այդ նոյն ալիքները շատ տեղ ընդհակառակը հողի ու աւազի ամբողջ բլուրներ են հաւաքում ափերի մօտ և այդպիսով օգնում ցամաքի ընդլայնելուն ի վնաս ծովի: Բացի այդ,—գետերի բերած հող ու աւազի մի նշանաւոր մասը նստում է հէնց գետերի բերանքից ոչ հեռու և այդպիսով կղզիներ (դէտտաներ) առաջացնելով, նոյնպէս աւելացնում ցամաքի մակերևութը ի վնաս ծովի: Զի կարելի չը չիշել նոյնպէս, որ ծովերում բուստերի (ПОЛЫНЬ) ամբողջ միրիադներ աշխատում են իրանց հաստատուն շէնքերի կառուցման վրայ, որոնք նոր ու նոր կղզեակներ են կազմում և այդպիսով աւելացնում ցամաքի մակերևութը:

Վերոյիշեալ փոքրիկ նկատողութիւններից լետոյ անցնենք Լապարանի ընդդիմախօսների ամենանշանաւոր ապացուցին: Բոլոր երկրաբանները միաձայն պնդում են, թէ ովկիանոսները դարերի ընթացքում փոքրանում են և փոքրանում, մերկացնելով իրանց տակը գտնւած ցամաքը: Սրինակ՝ ապացուցւած է որ Միջին-Ասիան և Եւրոպայի մի նշանաւոր մասը ծովի հատակ են եղել: Հէնց այժմ էլ, կարելի է ասել, մեր աչքի առաջ շատ տեղ ծովի մակերևութը ցածանում է, մերկացնելով ցամաքը. օրինակ հիւսիսային Սիբիրը, Կարմիր ծովի ափերը և այլն, քիչ քիչ բարձրանում են ծովի մակերևութից: Եւ այսպէս ուրեմն ովկիանոսը աստիճանաբար տեղ է տալիս ցամաքին, իսկ ինքը կրճատւում ու փոքրանում է: Ի՞նչ է սորա պատճառը և ուր է գնում ովկիանոսի ջուրը: Երկրիս կեղևի անթիւ ճեղքներից նա ներս է ծծւում

ղէպի երկրիս կենտրոնը, — որքան ժամանակի ընթացքում աւելի և աւելի է ցրտում երկրագնդիս ներսը, ալդ ցրտելու պատճառով, որքան աւելի և աւելի բազմանում և լաջնանում են երկրիս կեղևի ձեղքերը, աջքան աւելի և աւելի է հողը կլանում ովկիանոսի ջրերը, ¹⁾ որոնք երկրի խորքերում քիմիապէս միանում են պինդ մարմինների հետ (ալդ միացումից նոյնպէս պինդ մարմիններ են առաջանում, ալդպէս անւանւած հիդրատներ, ջրատներ) և ուրեմն բոլորովին կորչում երկրիս համար իբրև ջուր: Ահա ինչ է սպասում դեռ երկրիս երեսին մնացած ջրին. նա ամբողջապէս կուլ է գնալու երկրի խորքերում, ամբողջ երկիրը ցամաք թողնելով: Այս վախճանը անխուսափելի է, համաձայն երկրի էւոլուցիայի ընթացքին: Դորանում մեզ աւելի ևս համոզում են ուրիշ մոլորակների դրոժիւմները: Այսպէս՝ Վեներան, որի ովկիանոսները աւելի մեծ են մեր երկրի ովկիանոսներից, իւր դարգացման աստիճանով, երկրից ջահէլ է: Մարսը երկրից ծեր է և նորա ջուրը աւելի ևս քիչ է: Լուսինը, որ, իւր փոքր ծաւալի պատճառով, մոլորակալին էւոլուցիայի ճանապարհում Մարսիցն էլ է շատ ու շատ առաջ գնացել, ոչ միայն բոլորովին չորացել է, այլ մինչև անգամ նորան շրջապատող մթնոլորտն էլ է չքացել: Ահներև է որ հեռու ապագայում նոյնն է վիճակւած և մեր երկիրն:

Աւրեմն ոչ թէ ծովն է ժամանակով կլանելու ցամաքը, ինչպէս կարծում էր Լապլարանը, այլ ընդհակառակը, ցամաքն է աւելի և աւելի ընդլայնւելու: Եւ վերջապէս էլ ջուր չի մնալ երկրիս երեսին, եթէ վերջնականապէս չքանալուց առաջ ալդ ջուրը չը սառչի բոլորովին և ալդպիսով խուսափի երկրի ներսը ձգելուց կեղևի ձեղքերով:

Մեր երկրին, ինչպէս և միւս մոլորակներին, սպասում է միննոյն սխուր և անխուսափելի վիճակը: Արևի ջերմութիւնը աստիճանաբար պակասելու է, ալդ պատճառով բևեռալին սառնամանիքը կ'սկսի տարածւել երկրի մակերևութի վրայ, բևեռներից հասարակածին (այրեցեակ գոտի) մոտենալով, կենդանիներին և բոյսերը զէպի հասարակածը մղելով, մինչև որ վերջապէս ամբողջ երկիրն կը ախրապետի սառնամանիքը: Թէ ինչ է լինելու ալժմուան ովկիանոսների ջուրը, դուրս մասին արդէն վերը ասացինք. նորան հողը աստիճանաբար կլանում է, ուրեմն նորա չը սառած մասը ամբողջովին կլանւելու է: Օղն էլ նոյնպէս, քիմիապէս աստիճանաբար միանալով հողի հետ, նոսրանալու է և վերջապէս կը չքանալ: Երկրագունդը դեռ շատ դարեր դորանից չետոյ կը շարունակի իւր շրջանները անել ախեղերալին տարածութեան մէջ, բայց նա արդէն ներկայացնելու է աւերման, քաղքայման և

1) Ժամանակակից Երկրաբանական գիտութիւնը մեծ մասամբ հրաբուխները պատճառը հէնց նորանով է բացատրում, որ ովկիանի ջրերը, ձգւելով վերոյիշուալ ձեղքերից, երկրիս ներսում (այնտեղ ախրոյ սաստիկ աաքութիւնից) գոլորշիանում են և իրանց ահուելի ուժով հրաբուխների պատճառ դառնում:

անհետանալու դատապարտւած մի ցուրտ, մութ, մռայլ ու մեռած մարմին։ Աորցնելով իւր ջուրը, չորանալով և միևնույն ժամանակ իւր օդային շապիկը կորցնելով—որոնց շնորհիւ ցերեկը նորա մակերևութի տաքանալը և դիշերը՝ ցրտելը այժմ սաստիկ աստիճանաբար է կատարւում,—նա տաքի ու ցրտի արագ և լանկարծական փոփոխութիւնների է ենթարկւելու։ Նորա ոչինչով չը պաշտպանւած մակերևութը ցերեկով շիկացած արևից, դիշերաակիղըր լանկարծ անցնելով տիեզերային ցուրտ տարածութիւնը շատ արագ կորցնելու է իւր ջերմութիւնը և ցրտանալու։ Ենթարկւելով այս տեսակ անաստիճանաբար կատարող ջերմային (температурная измѣненія) փոփոխութիւնների, երկրադունդը բնականաբար աւելի և աւելի ճեղքճեղքւելու է։ Այդ ճեղքերը, որոնց նմանները այժմ մենք տեսնում ենք լուսնի վրա. (ի հարկէ տելուսկոպի միջոցով), կը խորանան և կը լայնանան և վերջապէս երկրադունդը կտոր կտոր կ'անեն և կ'աւերեն։ Այդ կտորները նոյն պատճառներից նոյնպէս կտորների կը բաժանւեն և վերջապէս կը փշուրեն և տիեզերային փոշի կը դառնան։ Այս է անա մեր երկրի վախճանը։

Իսկ երկրիս վրայ ապրող մարդկութիւնը։ Միթէ նա էլ տարերքի ուժին զո՞ւ պիտի գնայ, ոչնչանալ, դեռ երկրի ոչնչանալուց շատ առաջ,— որովհետեւ, ինչպէս վերեւ տեսանք, դեռ երկրադնդի վերջնական փշուրուց շատ առաջ, նորա վրայ ապրելը անհնար կը դառնայ։ Միթէ նորա անդադար աշխատութիւններով և անադին ջանքերով լիքը կեանքը ոչնչութիւնով պէտք է վերջանայ, չը նստած որ այդ անադին ջանքերը գործադրւում են տարերքի ուժը ուսումնասիրելու և սանձահարելու վրայ։ Միթէ մարդու ողու բոլոր կարողութիւնը, նորա բոլոր հոգեկան ուժը, որ այժմ էլ արդէն անադին է և, անկասկած անսահման մեծութեան է հասնելու նորա երկրիս վրայ ապրելիք միլիոնաւոր տարիների ընթացքում, միթէ այս բոլորը ոչնչանալու է դատապարտւած։ Մեր ներքին զգացմունքը և մեր միտքը վճռականաբար բացասական պատասխան են տալիս այդ հարցին, և մենք կարծում ենք, որ այժմեան մարդկութիւնը մեզ նման պատասխանելու շատ լուրջ հիմք ունի։ Եւ իրօք, մարդկութիւնը արդէն այնքան փառաւոր պայացուցել է իւր հոգեկան կարողութիւնը և որ նա ընդունակ է հոգեպէս անսահման զարգանալ. այդ մարդկութիւնը այնքան շատ բան է արել բնութեան ուսումնասիրութեան և նորա ուժերը սանձահարելու գործում, այնպիսի հսկայական քաջերով է առաջ գնում մտաւոր զարգացման ճանապարհում, այնքան նոր նոր, մէկը միւսից ընդարձակ, հորիզոններ են բացւում նորա մտաւոր հայեացքի առաջ, որ «անկարելի» լիսուքը հէնց այժմ ստիպւած ենք շատ զգուշութեամբ գործածել. երեկա «անկարելի» այսօր կարելի է դառնում և իրագործւում,—այս ճշմարտութեան մէջ մենք այժմ ամեն քաջափոխում համոզւում ենք զբաղանապէս։ Իսկ եթէ այդ այդպէս է այժմ, երբ մեր միտքը, կարելի է ասել, դեռ ւերելապահան դրութեան մէջ է գտնւում, եթէ այդ այդպէս է այժմ, միթէ

մենք իրաւունք չ'ունենք ենթադրել, որ «անկարելի» բառը ժամանակով աւելի և աւելի կ'անհետանա մարդկութեան բառարանից և մարդը վերջապէս հոգեկան կարողութեան մի աչնպիսի բարձրութեան կը հասնի, որ նրա համար արդէն զարհուրելի չի լինել տարերքի կոյր ուժը: Վերջացնելով այս չօրւածը, աւելորդ չ'ենք համարում այստեղ մէջ բերել մի կտոր կոմբի նորերս լուս տեսած մի հետաքրքիր գրքից (Combes. Les civilisations animales):

«Եթէ մարդկութիւնը անկարող գտնւի հեռացնել իրանից տարերքի ուժերի ներգործութիւնը (որոնք երկիրը ոչնչացնել են ուզում) և երկրի նեղ սահմաններից դուրս գալ, այդ դէպքում ի հարկէ, նա (մարդկութիւնը) կը կորչի տիեզերապին ուժից, չը կարողանալով սանձահարել նորան: Բայց ամեն ինչ ստիպում է մեզ կարծել, որ դարերի մի երկար շարք ունի նա զեռ անցնելու (երկրիս վրայ) որ ապագայում կատարւելիք մտաւոր առաջադիմութեան շնորհիւ, նա այն աստիճան կը տիրանալ այդ տիեզերապին ուժերի վրայ, որ կարող կը դառնալ, այդ ուժերից օգտւելով, ապրել և առանց արեւի տաքութեան և առանց մթնոլորդի օդի և առանց ջրի, եթէ այս վերջիններիս կարօտութիւն ունենալ» (Երես 191): Մեր այն ընթերցողներին, որոնք կ'ասեն թէ այս բոլորը անկարելի է, մենք միայն մի կարճ հարց կ'առաջարկենք. «ինչո՞ւ»:

ԱՊՇԵՐՈՆՆԵԱՆ ԹԵՐԱԿՂՋԻՆ

ԵՒ

ՌՈՒՍԱՅ ԿԱՒԹԸ

ԳԱՂՈՒՍՏ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆԻ

Այժմ ալ ես չեմ վախենում քարէածուխի մօտագալ սպառւելուց. ժամանակիս ինդուստրիալի պահանջները որքան էլ մեծ լինեն, այժմ գիտենք որ եթէ քարէածուխը պակասելու էլ լինի, ամեն տեսակ ջրածուխներ՝ Անդրկովկասի և Ամերիկայի անքան առատ նաւթերը շատ լաւ կարող են վառելիք ծառայել ալ և ալ շոքեմեքենաների համար: Այսօր մենք ուզում ենք ուսումնասիրել այդ երկու նաւթերից աչն որ Անդրկովկասինն է:

Մի տասնեակ տարիներից դէս երկաթուղով ևն գնում Բաթումից Թիֆլիս և Բաքու: Այս վերջին քաղաքում, կապարանից դուրս գալուն պէս՝ մի թուրք կառապան ազգային հազուստով մեզ տարաւ Բաքուի Grand-Hôtel. Ես աշխատում էի, քաղաք մտնելուց առաջ, երևակալութեամբ պատկերացնել աչն հրաշալիքները, որ շուտով աչքովս պիտի տեսնէի. և ահա ես պատկերացնում էի մի հին պարսկական քաղաք, շահնշահերի և սարսափելի խաների տիրապետութեան լետքեր, չաւտենական կրակներ և կրակապաշտ գերբներ. խանի աղջկալ աշտարակը, որտեղից, եթէ պէտք է հաւատալ Կիւլմալի պատմածին, մի խանի սիրելի աղջկից վալը գլորւեց. վերջապէս հազար ու մի աւերակներ, հազար վիշտաւկներ, նոր անցեալի մնացորդներ, քանի որ Բաքուի վերաշինութիւնը միաչն երեկւանից է սկսել, բայց արդէն պատկառելի, որպէս մի սրբազան քաղաքի անցեալ, որպէս Երուսաղեմ կամ Ուրիմպոս: Աւաղ—ինչ չուսախաբութիւն:

Պարսկաստանից երկու քալ հեռու, կենտրոնական Ասիայից քսան ու չորս ժամալ ճանապարհի վրայ, ես գտալ մի նոր քաղաք, լաչն վտ-

դրոյներով, զարդարած բաւականի ցածր տներով, որպէս Ռուսաստանում առհասարակ, բայց շատ լարմար և անողջ կարճ ասած՝ սկզբում ևս դանաղանութիւն չէի գտնում Բաքուի, Օդեսայի և Պետերբուրգի մէջ, և, լուսախաբ եղած, ևս անիծում էի քանդողի լինգն ու բահը, բոլորովին չը մտածելով թէ նոր քաղաքը շինւած է հինի կողքին և ոչ թէ նորա աւերակների վերայ: Բայց չուտով նաւթի հոտը բռնեց քթածակերս և ինձ չիչել տուց, որ եթէ Բաքուն այլ ևս զերբների սրբազան քաղաքը չէ, նաև եւրոպական քաղաք էլ չէ նա: Մինեղալական իւզի և նաւթային այս երկրում, փողոցները ջրելու համար շահեցնում են նաւթի բաֆինաղների մնացորդներն անգամ: Հողը չուտով անփաւտանում է, փողոցները, ալդպէս ջրած և սրած, երբէք ոչ ցելս և ոչ փոշի ունին, իսկ ինչ վերաբերում է նոսրին—երևում է որ մարդս շատ չուտով սովորում է նրան:

Ալդպէս էր առաջին սպաւորութիւնը մի քաղաքից, որի առաջին շինութիւնները ամենաշատը քառասուն տարի է, իսկ մեծագոյն մասը՝ հազիւ քսան տարւաչ գոյութիւն ունին: Grand-Hôtel հիւրանոցը, ուր ևս վաղը իջաչ, թէև անքան կոնֆորտով չէ որքան Պարիզի կամ Լոնդոնի մեծ հիւրանոցները, բայց և անպէս բաւականին լաւ կահաւորւած էր, և, ընդհանուր առմամբ, ևս զանգատուելու ոչինչ չուէի ոչ անկողնից և ոչ ճաշից:

Ապշերոնեան թերակղզու պատմութեան մէջ ամենանշանաւոր առանձնաշատկութիւնը այն է, որ նա աշխարհքիս ամենահին կրօններից մէկի օրօրոցն էր. ալդտեղ ծնեց կրակի պաշտամունքը, Ջրագալտի (կամ Ջորտաստրի) Մաղդէութիւնը—մաղդեղանց կրօնը: Հաւատացեալների ասելով, այն բոցերը, որ դուրս են բղխում գետնից, ալբում են ջրհեղեղից սկսած և կը հանդէսն միայն երբ աշխարհքիս վերջը կը լինի: Ինչ և իցէ, հաստատ է, որ քսան ու հինգ կամ երեսուն դարերից դէս, Ապշերոնը և իւր կրակները հռչակւած էին հին աղբերի մէջ: Սուրբախանի տափաստանի ներատեղերը սրբազան տեղերն էին կրակապաշտների համար. ալդտեղ էին կառուցել մոզերը իրանց տաճարները, որոնց անքան շատ լաճախում էին մինչև փրկչական 12-երորդ դարը, այսինքն մինչև մահմեդականների արշաւանքների վերջը:

Արդէն 624 թւականին մաղդէութիւնը մահացու հարւած էր ստացել. Բիւզանդիայի Հերակլէս կալսրը, որ Մուղանի անապատներում լաղթեց պարսիկներին, հեղեղեց Ապշերոնը, և Երուսաղեմի առման վրէժը հանեց քանդելով կրակատները: Այդ անցքից տասներկու տարի վետոյ արաբները մտան Պարսկաստան, և, այդ օրից սկսած, մաղդէութեան անվերադառնալի անկումը սկսեց: Մահալն, հաւատացեալների մի մասը ապստաման զտաւ Ռոմիլդ կղզու վերայ, և մի քանիսն էլ փախան մինչ Հնդկաստան, որտեղ նոքա բաղմաթիւ մարդիկ իրանց կրօնի դարձրին: Այդ նորադարձները պակաս եւանդոտ չէին, որպէս ալդ ապացուցանում է պ. Նէլի միանգամայն ճշգրիտ պատմածքը. 1856-ին, տտում է նա, պ. Բուրէ ֆրանսիա.

կան զեսպան էր Պարսկաստանում. Թեհրանում սաստիկ խողերա բռնկեց: Խսկոյն, սովորութեան համեմատ, բոլոր ունեւոր պարսիկները թողին քաղաքը և գնացին զաշտերը ապաստանելու, 25—30 կիլոմետր հեռաւորութեամբ: Ֆրանսիական զեսպանութիւնն էլ բնականապէս հետեւեց այդ օրինակին:

«Մի երեկոյ տեսան որ Փրանսիական «բանակը» գալիս են երկու մարդ, պարսի շոր հագած, լղար, ճարթուած, սաստիկ կիզած արեգակից: Նոցա հարց ու փորձ արին: Նոքա պատմեցին թէ, երեք ասրուց զէս երկրպագելու համար սրոնում են կրակի տաճարը, որի մասին գիտեն որ մի մեծ լճի մօտ է գտանուում: Նոքա թողել են Բոմբէջ այս ուխտագնացութիւնը կատարելու համար: Երկար ժամանակ նոքա հետեւել են ծովափին, լետոյ կորել էին Թուրում կամ հնդկական անապատում. նոքա անցել են Բելուզեստանը, և այժմ շրջում են Պարսկաստանում, առանց ճանապարհը դտնել կարողանալու: Սակայն, նոքա խնայան որ Թեհրանում կը գտնեն իրանց հաւատակիցներէից ոմանց, և չոյս ունէին նոցանից տեղեկութիւն ստանալու... Մեր զեսպանը ուզեց նոցա պահել մի քանի օր նորից հարց ու փորձ անելու համար. բայց նորա մերժեցին: Մի քանի ժամ հանգստանալուց լետոյ, երկու գերբները (կրակապաշտներ) իրանց մահակը վեր առան և անչալտացան Կասպից ծովի ուղղութեամբ, ուր նոքա հաւաստութիւն ունէին գտնելու Բաքուի աջնքան ըղձացած տաճարը»:

Սուրախանի տաճարը, Բաքուից 15 վերստ հեռաւորութեամբ գէպի հիւսիս-արեւելք, մօտ երեսուն դար շարունակ գերբներէի կրօնադիւնն էր, և բոլոր ջանքը գործ էին գնում իրանց սուրբերկիրը պաշտպանելու համար: Յաջողութեան և անչալտութեան բաղմամբ փոփոխութիւններից լետ, նոքա տեսան այդ սրբատեղին աւերած ուռսաց կաւոր Պետրոս Մեծի ձեռքով 1723-ին. 1735-ին նոքա, գերբները, կրկին հաստատեցին ազանդ. բայց 1813-ին Գիւլիստանի դաշնը վերջնականապէս տւեց այդ երկիրը Ռուսաստանին: Գա՛ վերջին հարւածն էր, ուխտաւորները կամաց-կամաց անչալտացան, վերջին մոզը ինքն ևս 1850 թւականի մօտերքին հեռացաւ. և երբ ուռսաց ցարը 1888-ին այցելեց Անդրկովկասը, հարկադրւած էին Հնդկաստանից բերել պարսերին բերել տալ որ մազդէական ծիսակատարութիւնների մի ներկաչացումն տալին: Գերբ խօսքը զեռ. ևս կալ. նորա ծագումը անչալտ է, բայց համեմատել են արաբական քէրփր (ուժեղ), փիւնիկական Կարբարա և լուճական Կարբիէ խօսքերի հետ: Յալանի է որ կարբիական ստորերկրեալ աստւածները անսովոր հանդէսով պաշտուում էին Սամթրասի հրաբխալին կղզում և Հոռփում, միևնաջն ժամանակ, տեսնելով արեգակնապաշտալին խորհուրդները, որ փոխ էին ստնւած Պարսկաստանից:

Բաքուի հոչակի մի ուրիշ պատճառը հնումը նորա գիրքն էր Սքսուս գետաբերանի դիմաց: Եւ իրօք, օքսուսը, որ այժմեալ Ամու-Գարխան է,

Ստրարոն պատմաբանի օրերով կասպից ծովն էր թափուում. VI-րդ դարում այդ գետը սկսեց թափուել Օրալի լիճը, XVI-րդ դարում վերստից սկսեց ընթանալ իւր հին ուղղութեամբ, որից երկու դար չեսուղ, XVI-րդ դարում մի վերջին անգամ ևս փոխեց ուղղութիւնը: Բոլոր ճանապարհորդները համաձայն են, հին ուղղութեան վերալ գտնուած աւերակների մէջ տեսնել մնացորդներ բազմաթիւ քաղաքներից, որոնք առաջ ծաղկած էին, բայց կարծես մահի դատապարտուելին գետի լանկարծակի չորանալով. և նոյն իսկ Բաքուն շատ մնասուց այս փոփոխութիւններից: Դէմ առ դէմ կանգնած լինելով ալժմեանից արդէն անկեղծան մի ծովափին, նա նուաղ առ նուաղ մեռնում էր, և չը լինէր նաւթի շահագործութիւնը, առանց Սամարկանդի երկաթուղուն, նա թերևս կրէր անդրկասպեան քաղաքների վիճակը:

Նաւթագործութիւն ուսումնասիրութիւնը առանձին տեղ է պահանջում. մենք կը լինենք միայն նաւթի հին հուշակը աւանդութեան և պատմութեան լուծների մաս: Հերոդոտը չիշատակում է Յակինթի (այժմ Յանտէ), Պլինիոսը՝ Ագրիգենտի նաւթը Սիցիլիայում, Պլուտարքը՝ Նքքատանի և Բաբելոնի նաւթի աղբիւրները. նոքա անւանում էին հանքալին իւղը Պետրէլայոն, Լատիներէն՝ Պետրոլէում: Ըստ աւանդութեան, Մեղէ նաւթով ծեփեց իւր հակառակորդունի Կրէուզէի պատմւածանը՝ նորան ալրել տալու համար հարսանեաց դիցուհի հիմէնէի ճրագալուսի հարեանութեամբ. որպէս չափոն է, լուշկապարիկ Նեսոսը աղպէս վրէժխնդիր եղաւ Հերկուլէսին: Ձրի մէջ վառուղ կրակը անկասկած նաւթիցն էր: Զարմանալու է որ նաւթը աւելի վաղ ժամանակներում չի չիշատակում, քանի որ Մեծն Ալեքսանդրը իւր առաջ վառել սուց նաւթով ծեփւած մի խեղճ երեխայի և լուսաւորել սուց Բաբելոն քաղաքը, այն օրը երբ նա հանդիսաւոր կերպով մտաւ քաղաքը, կրակել տալով նաւթի երկու առուներ, որոնք չինւած էին զուգընթացաբար փողոցների երկալութեամբ: Աերջապէս հները դործ էին ածում նաւթը բեռնակիր անասուններին քոսից բժշկելու համար:

Բայց և աչնպէս, X-րդ դարուց առաջ խնդիր չկար Ապշերոնի աղբիւրների մասին: Արաբները առաջիններն էին որ խօսացին Բաքրի (որ Բաքուի արաբական անունն է) աղբիւրների մասին, և երկու միմիանց ժամանակակից ճանապարհորդներ՝ Ռիկուդ և Մարկո-Պօլօ հաստատապէս ասում են թէ Բաքուի նաւթը կազմում է նշանաւոր առետրի առարկայ Գիլանի, Մագանդարանի և ամբողջ Միջագետքի հետ մինչև Բաղդադ: Բայց միայն անցեալ դարուցն է սկսում Անդրկովկասեան նաւթի հուշակը. անգլիացի ճանապարհորդները, որոնք Հնդկաստանը տանող ճանապարհների չեռիցն էին ընկած, ամենամեծ հիացմունքով են խօսում նաւթի շահագործութեան մասին, որ այն ժամանակ կենդրոնացած էր Թերակղզու ծալրում գտնւած Աւետուց Կղզու վերայ: Եւ իրօք, այնտեղ հեղուկը գալիս էր մինչ ծովի մակերևոյթը, և նաւերի բեռնաւորումը աւելի ճիշտ էր: Աւետուց Կղզին տալիս էր միայն սև նաւթ, աւելի շատ թանձր որ

գործ էին ածում լուսաւորութեան և վառելիքի համար: Ճանաչում էին նաև սպիտակ նաւթը, աւելի թեթև և աւելի մաքուր, որ շատ էին գործածում բժշկականութեան մէջ և որ շահագործում էին նոյն իսկ Թերակղզու վերայ: Ռոսները, աւելցնում է Ջոնաս Հենւէյ (Jonas Hanway) 1754 թ-ին, խմում են նորան որպէս լիքեօր և զօրացնող միջոց. նա երբէք չի հարբեցնում: Ներքին գործածութեան համար նա հիանալի միջոց է և վեներական հիւանդութիւնների դէմ, որ աչքում լաճախ են կովկասում, որպէս արտաքին միջոց, նա շատ գործածական է սկորբուտի, լօղալին կաթածի և մկանունքների կծկութեան: Այս դպրում նորան պէտք է քսիլ միաջն հիւանդ տեղերը, որովհետև անմիջապէս նա անցնում է արիւնը և պատճառում է կարճատև, բայց շատ սաստիկ ցաւեր: Նա շատ լաւ է հանում կեղտը շորերից և շատ մեծ գործածութիւն կ'ունենար, եթէ գորանից չետ չը մնար զգւելի հոտ: Հնդկաստանում նորանից հիանալի ջրդեղ (vernis) են ստանում... Ահա արդարև նախընտրականի շատ գործածութիւնները արդէն XVІІI-րդ դարու կէսից սկսած. աճմ բժշկականութիւնը աւելի էլ լաճախ է գործածում, և քիմիան նորանից ամենաթանկագին հիւթեր է դուրս բերել: Աւելցնենք որ սև նաւթի և սպիտակ նաւթի մէջ բոլոր տարբերութիւնը որպիսութեան մէջն է: Աչժմ Սւետուոյ կղզին այլ ևս չի շահագործում, և ոչ էլ Չէլէկէնի կղզին և անդրկասպեան աղբիւրները. Բաքուի գործարանատէրերը հազիւ բաւական են Ապշերոնի հարստութիւնների համար:

Անգլիացի ճամբորդները, XVІІI-րդ դարում, մեծ դարմացքով խօսում են նաև այն օգուտի մասին, որ քտղում են բնիկները այն վառուղ գազերից, որոնք գոլանում են այդ զարմանալի թերակղզում: Այդ նոյն ածխաթիւտներն են, որոնց մի ժամանակ պաշտում էին Զօրալաշտի գերրները: Մանաւանդ Սուրախանում, բաւական է մատով գետինը փորել, և արդէն բղխում է ածխաթիւտի գազ, որը վառում է կրակին կամ լուցկին դիպչելով. որքան փորւածքը մեծ է, նոյնքան մեծ է և բոցը: Տեղացիների խոհանոցը հէնց այդ կրակն ունէր, այդ սաքով տան մի անկիւնը պահում էր որ գետինը փորեն, և, նալած դէպքին, օգուտում էին նորա կամ տաքութիւնից կամ լուսից: Լուսաւորութեան գործիքը մի խողովակ էր, որ մտցրած էր գետնի մէջ և որը կարող էր նկատուել որպէս Բուենզէնի rudiment du lee: Նոյն իսկ մեր օրերով այդ գազերը ծառայում են նաւթի ռաֆինադի և կիրի գործարանական պատրաստութեան համար: Այս վերջին գործողութիւնը շատ պարզ կերպով է կատարում, գետինը փորում են մի կամ երկու մետր (մէտրը հաւասար է թրքական գազի) խորութեամբ: Վտար ծածկում են կրաքարերով, որոնք աչնպէս են դարսւած լինում որ օդը միջով անցնի, և վառում են գազը. կրակի բոցը շատ ուժեղ է լինում և, մեծ քամու ժամանակ, կարող է հասնել երեք-չորս մետր բարձրութեան:

Չը պէտք է կարծել թէ գետնի այդ կազմութիւնը պատճառ է դառ-

նում հրդէհների չաճախութեան և վտանգաւորութեան. այդ կրակին տիրանալը շատ հեշտ է, մանաւանդ որ Նորա տաքութիւնը համեմատաբար թուր է. և բնիկները գիտեն սովորական զգուշութիւնները բանեցնել՝ ամենփորձանքից խուս տալու համար:

Անգլիացիք, մանաւանդ շնդկաստանը նաճելուց լեա, շարունակ ալցելում էին Կովկասը. 1821 թ-ին Իւլիլ (Ule) ճամբորդը, որ Ամուր-Գարիալի աւազանը հետազօտեց, զնահատում էր Բաքուի նաւթաղբիւրների տարեկան արտադրութիւնը 4,000 տոնն (ուսաց չափումով՝ 250,000 պուգ), 1800 թ ին այդ արտադրութիւնը 1500—2000 տոնն էր, որը մեծ քանակութիւն է, եթէ հաշւի առնելու լինենք յիստօրացիալի չը կատարելաչործւած եղանակները և ճանապարհների վատութիւնը: Խոկապէս նաւթը չէր թորում (distillé), այլ միայն ֆիզիքապէս մաքրում էր և դուռում ծովի ջրից, որը նաւթից թանձր է, չում նաւթը անցէին կայնում մի քանի աւազանների միջով, ծովի ջուրը նստում էր չտակում, և նաւթը բարձրանում էր վերեւ: Պարզ է որ այդ եղանակով շատ նաւթ էր կորչում և նաւթի մաքրելը շատ դանդաղ էր կատարում: Բացի դրանից, նաւթը, անախորժ հոտը չորերի առարկաներից երկար ժամանակ չէր անցնում:

Բաքուի կարեորութիւնը, Պարսկաստանի հետ ունեցած առևտրի տեսակէտից, միշտ մեծ է եղել, այսօր շոգենաւերը շաքաթը մի քանի անգամ դնում են Բաքուից Էնդելի, որտեղից ապրանքները ուղարկւում են: Թեհրան Ղազբինի վրալով Նամակները չորս օրում բերում են Թեհրանից Ղազբին, Նոնքան էլ պահանջւում է Ղազբինից մինչ Ռէշտ, և 24 ժամ էլ՝ Ռէշտից Բաքու: Այս ժամանակը շատ կը կրճատւի, երբ շինւած կը լինի երկաթուղին Հաջի-Աբուլից մինչ Թէհրան, ճիւղաւորութեամբ զէպի Ռէշտ. ճանապարհորդը պատուութիւն կ'ունենայ լեա՝ դառնալ անցնելով Անդրկասպեան երկաթուղին Սախաբադի վրալով մինչ Ուզուն-Աղա, որը երկաթուղու գծի գլուխն է Կասպից ծովի կողմից:

Երկաթուղիներ թուրքմէնների անապատներում և Գէոլիլի թաղաւորութեան մէջ! Ինչ գեղեցիկ երազներ են զօքս ապագայի համար! Բայց այդ երազները պօռլէկտներ են և այդ ապագան միանգամայն մօտ է՝ դուրս վերջանալուց առաջ, Բաքուն Նորից ձեռք բերած կը լինի իւր անդեալի ամբողջ բարգաւաճութիւնը, ապահովւած լինելով որ կենդրոն կը լինի կենդրոնական Ասիայի առևտրի աղատելով ամեն հոգսից այս կամ այն անապատային գետի հոսանքի մասին. հաստատ հիմքերի վերալ կառուցւած երկաթուղին այդ անապատելի փոփոխութիւններին ևս ենթակալ չէ:

Բայց եթէ առևտուրը օգտւում է այս նոր ճանապարհներից, ուղմա-դիտութիւնը. որ նոցա չինել է տւել, մի բոլորովին այլ տեսակի շահ է գտնում: Մենք, որ այս պարզ պատմեւածքի մէջ ուզում ենք հեռու կենալ ամեն քաղաքական վիճարանութիւններից, առաջ կը բերենք եզրակացութիւնները պ. Մարւինի, որի հեղինակութիւնը կենդրոնական Ասիայի

վերաբերեալ բոլոր զինւորական և քաղաքական հարցերում անվիճելի է ճանաչած Անգլիայում:

«Բաքուն է լինելու, ասում է նա, հիմքը բոլոր ապագայ արչաւանքների կենդրոնական Ասիայում, աշնտեղից են ուղարկում զօրքերը և պատերազմական միջոցները Ախալի և Մերւի գարնիլոնները: Կրասնօլոդսկը, Կասպից ծովի արևելեան ափի վերայ, միայն մի կալարան է ճանապարհի վերայ: Մի պատերազմի ժամանակ Բաքուն է լինելու կենդրոնը զօրքի միջոցներ հասցնելու համար:

«Աճառականական տեսակէտից, քանի որ բոլոր առևտրական ճանապարհները ծովն են որոնում, Կասպից ծովը բնական վաճառատեղին է Սիր-Գարիալի, Ամու-Գարիալի պրովինցիաների և Պարսկաստանի հիւսիսային մասի նորա նաւահանգիստը, որը մի ծոցի խորքումն է և լաւ պաշտպանած է հիւսիսային քամիներից և 9 կիլոմետր լայնութիւն ունի, ամեն կողմից հիանալի է: Բաքուն է նաև որ անդրկովկասեան երկաթուղուց ամենամեծ շահն է ստանում. նորա ազգաբնակիւթիւնը ուր 12,000 էր 1870 թ-ին, 15,000 էր 1879-ին և 50,000 էր 1883 ին, այժմ հասնում է 100,000 հոգու, և դեռ ամեն օր էլ աճում է. ծովային առևտրական շարժումը աշխարհից արդէն աւելի մեծ է քան Սոքոտայինը և Բալթիեան ծովի ուսաց նաւահանգիստներինը: Այդ զարմանալի բարգաւաճումը լաւ դրացում է երբ անցնում էք նաւահանգիստի նոր ծովափերը, որոնք լիքն են ապրանքներով և զործիքներով՝ նաւերը չեա բեռնաւորելու համար. դրում էք որ այդ հարստութիւնը հաստատ է և որ այդ առատութիւնը նախագուշակում է մի աւելի ևս մեծ առատութիւն, հասկանում էք որ Բաքուն է Ասիայի emporium-ը, երբ ամեն քաղաքիոխում հանդիպում էք Սորասանի բուրդը և մետաքսը, պարսկական և թուրքմէնական դորգեր, Խոկանդի և Սամարղանդի հրաշալի ապրեչումեղէնը, և ամեն տեսակ ներկագործական բոյսեր, դեղին ցորեն, ինդիգօ, զխտտ, չը խօստած Սերգաւասի հոշակած ափսոնի մասին: Ղիչդ է, Բաքուն, նման Բաթումին. շատ վնասուց տրանսիտ առևտրի վերացնելով, բայց Ասիային պէտք է Բաքուն, որը չի վախենում ունենալ իբր հակառակորդ, մի երկրորդ Տրապիզոն:

Ամեն ինչ ուրեմն դէպի լաւն է. անցեալը խրախուսիչ է, ներկայ փալլուն, ապագան՝ շրայնոր: Միայն թէ, ինչպէս չկազ երկինք առանց ամպի, Բազուի բարգաւաճումը չարուցից զարհուրելի և վտանգաւոր նախանձներ: Մի միաձայնութեամբ պատիւ է բերում իրանց և որ զոգալ է տալիս ոռոս վաճառականներին, անդլիացիք պատերազմի մէջ մտան իրանց կապիտալներով՝ Պարսկաստանը ֆինանսական նւաճելու համար:

Հակառակ Ֆրանսիացիներին, որոնք չեա են կանգնում կենդրոնական Ասիայից այս պատրւակով թէ նոքա աշնտեղ հասարակաց խնդիր չունին, նոցա հարեանները չամանչի միւս կողմում, անդլիացիք՝ բազմացնում են

առևտրական ձեռնարկութիւնները, հասարակաց մեծ շինութիւնները, ճանապարհները և ջրանցքները. նոքա ունին նաւագնացութեան մենիրաւունքը Կարունի վերայ (որ Շատ-էլ-Արաբի մէջն է թափուով), ուրեմն և ունին խալահանի առևտրի մենիրաւունքը. նոքա կազմակերպուած են Imperial Bank of Persia, (Պարսկաստանի կալսերական բանկ), որը իւր ճիւղաւորութիւնները տարածուած է ամբողջ Պարսկաստանի վերայ, մի խօսքով, նոքա ամրանուած են Օմանի ծովի և Պարսից ծովի ափերի վերայ, որ ապահով չաջողութեամբ ղրմեն Մազանդարանի վերայով Կասպից ծովի նաւամանր:

Նապոլէօնը, որի հրաշք գործունէութիւնը և ընդարձակ հանճարը չափնի են, իւր տիրապետական ձգտումները չէր սահմանափակուած միայն Եւրոպայով. Հնդկաստանի դէմ անելիք արշաւանքի զազափարը նորան միշտ զբաղեցնում էր: 1807 թ-ին, Լահաստանի և Պրուսիայի արշաւանքների հոգսերով զբաղուած ժամանակ, շնա ուղարկեց Պարսկաստան մի ղրպլումատիական և ղինւորական դեսպանութիւն, որի ղրուխ նշանակեց գեներալ Գարգան'ին:

Նոյն ինքն Նապոլէօնից աւելի համարձակ պ. Մարւինը հարց է դնում, թէ ինչու անգլիացիք չը պէտք է մասնակից լինեն նաւթի տրանպորտի և Կասպից ծովի նաւագնացութեան մէջ, որ ալժամ մասնաւորների կամ ռուսաց «Կովկաս և Վերկուրի» Ընկերութեան ձեռքումն է: Անգլիացիք առաջինն էին որ հետազօտեցին Կասպից ծովը. ուրեմն նոքա պէտք է և նորա հարստութիւնների տէրը լինեն: Օտարօտի, անշուշտ, բայց վերին աստիճանի բրիտանական եզրակացութիւն: Բայց Մարւինը ուրիշ հոգսեր ունի աղտեղ. ռուսաց պատերազմական նաւատորմի ղր Բաքուի նաւահանգսքսան ու չորս ժամուած կարող կը լինի առանց աղմուկի ամբողջ ընդմենտներ փոխադրել Մազանդարան՝ Պարսից ծոցի ճանապարհի վերայ: «Այդ, ասում է նա, անգլիական ղրպլումատների շամառ տրամարութիւնն է (persistent imbecility) կարծեմ, թէ Պարսկաստանը ընդունակ է ընդդիմադրութեան». մի ղորագունդ առանց արդիւքի կարող էր նորա մի ծալրից միւսը անցնել. ինչ կը լինի, ասում է նա, երբ պ. Նոլէլի նախագծած երկաթուղին կը կապէ Կասպից ծովը Պարսից ծոցի հետ? Այդ ճանապարհը, 1,100—1,200 կիլօմետր (մօտ նոյնքան վերստ), որ աւելի կարճ է քան քարւանների ճանապարհը Ռէշտից մինչ Բուշիր (1,600 կիլօմետր). Երևանից սկուելով՝ կ'անցնի Արաքսի հովիտը մինչ Լենքորան Կասպից ծովի վերայ, դէպ հարաւ. ալն ժամանակ ռուսաց աղդեցութիւնը կը տարածւի Կասպից ծովի վերայ բոլոր կողմերից: Այս բոլորը ասելով, Մարւինը ի նկատի ունի Պարսկաստանը իւր 7 միլիօն բնակիչներով, որոնք չեն ցուց տալիս ոչ կենսունակութիւն և ոչ աղատութեան սէր:

Մինչ ալժ՝ Ռուսաստանը առանց աղմուկի, բայց արագ իւր ձեռքն է գցում ամբողջ Պարսկաստանի առուտուրը՝ ռուս վաճառականները ղեռ

չեն կարող մրցել իրանց հակառակորդ գերմանացի, աւստրիացի և ֆրանսիացիների հետ, բայց թերևս ժամանակը հեռու չէ, երբ սոքա կը տեսնեն հողը իրանց ոտի տակից խլւած: Պարսկաստանը արտահանում է Ռուսաստան իւր արդիւնքների մեծագոյն մասը. Նիժնի-Նովգորոդի տոնավաճառին և պարսկական ապրանքների գինը ամեն տարի լինում է 15 միլիոնի չափ:

Այդ Վոլգան է և միջադետային ջրանցքներն են որ այդ աստիճան նպաստում են առևտրական չարաբերութիւններին Ռուսաստանի և Պարսկաստանի մէջ. նաևերը գնում են Ռէշտից մինչ Պետերբուրգ կասպից ծովով, Վոլգայով մինչև Ռըբինսկ և ջրանցքներով Ռըբինսկից մինչ Նէւա նաւերով, որոնք կարող են տանել 400—500 տոնն (30,000 պուլից աւելի): Այդ գետային ճանապարհի առևտրական մեծ կարևորութիւնը անվիճելի է՝ Վոլգայի վերաջ տարին կատարում է փոխադրութիւն 11 միլիոն տոննի (ուրեմն մինչ 700 միլլիոն պուլ): ամենաշատը լինում է Նիժնի տոնավաճառի ժամանակ, որի հոչակը համաշխարհային է: Եւ ահա Մարսինին երազ է գալիս թէ Հնդկաստանի իւր հալրենակիցները, որ չը հաշւած կանանց և երեխաներին, թւով 150,000 տղամարդ են, որպէս ոչ հաստատւած, այլ բանակ զրած ժամանակաւորներ, հեռու իրանց մալր-հալրենիքից ահռելի հարևանից: Նա կարծում է թէ ապրում է այն ժամանակներում, երբ մի 5—6 կոնտորներ կը ներկայացնեն կործանւած կալսերութեան մնացորդը, որպէս այժմ ֆրանսիական Պոնդիշերին և կարակալը (Հնդկաստանի արևելեան ափում) չիչեցնում են Դիւպլէքսի չաջողութիւնները: Եւ Մերը, դառնալով մի երկրորդ Բաքու, և ունենալով 500,000 բնակիչ, կը միացնի ռուսացած Հնդկաստանը Եւրոպայի և Ասիայի Ռուսիաների հետ!...

(Կը շարունակւի)

ՄՄԲԱՏ ԶԱՅԱԶԻԶԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾ-ՀՐԱԳԱՐԱԿԱՆԻՕՍ

ԵՂԻՇԷ ՄԱԳԱԹԵԱՆԻ

(Հարսւնակուծիւն 1)

III

Անտարակոչս, Նահազիղեանի սիրելի հեղինակների շարքը չէ վերջանում բանաստեղծների անուններով. քիչ թէ շատ նա ուշադիր էր անշուշտ և զիտնական գրականութեանը, մանաւանդ այն ճիւղերին, որոնք մտաիկ յարակցութիւն ունէին խր մասնագիտութեան հետ. և թէպէտ մենք չենք կարող նոյն ճշդութեամբ որոշել զանազան զիտնականների և մտածողների ազդեցութիւնը Նահազիղեանի վրայ, բայց այդ ազդեցութեան ներկայութիւնը կողմնակի կերպով խոստովանում է մեր հեղինակն ինքը. այսպէս օրինակ, Նահազիղեանի գրքոյի մէջ մենք գտնում ենք յիշատակութիւն «յրջամիտ» Բոկլի յայտնի պատմական երկասիրութեան և Չ. Սո. Միլլի և Կունսօֆիշէրի աշխատութիւնների մասին:

Աւելորդ է ասել, որքան օգտակար պիտի լինէր մեր բանաստեղծի համար օտար գրականութեան ուսումնասիրութիւնը: Պիտելու է, որ յիշած ուռւս և եւրոպացի մտտենագիրներից համարեա ոչ մէկը այսպէս կուշած «միջակներից» չէ. Շէքսպիր, Բայըլըն, Գեօթէ, Հէյնէ, Լէօպարդի, Բերանսէ, Պուշկին, Լերմոնտով, Բոկլ, Միլլ... այս անուն-

1) Տե՛ս «Մուրճ» № 3 և 5:

ների հետ անխզելի կերպով կապուած է տիեզերական մատենագրութեան յառաջադիմութիւնը: Բայց մի բան որ արժանի է խորին ուշադրութեան, մի բան որ մեր ձեռն է տալիս մեր բանաստեղծի ստեղծագործութիւնների բանալին—այն է որ Շահազիզեանի սիրած գիտնականներից ոչ մէկը մետաֆիզիկ չէ, և բանաստեղծներից ոչ մէկը զուտ գեղարւեստական չէ: Նկատեցէ՛ք, որ այնպիսի գեղարւեստական հանճարներ, որպիսիք են Քեթէ ու Պուշկին, համեմատաբար աւելի փոքր բաժին ունին Շահազիզեանի պօէզիայի մէջ, քան Բայունը ու Լերմոնտովը, որոնք թէև իրանց գեղարւեստական տաղանդով ստոր են կանգնած առաջիններից, սակայն իրանց բանաստեղծական արտադրութիւնների մէջ կենդանի արձագանք են կրել ժամանակակից հասարակական և քաղաքական շարժումներին. ահա՛ մի նշան Շահազիզեանի տաղանդի հրապարակախօսական բնաւորութեան:

Վէպի հրապարակախօսութիւնն էին հրաւիրում մեր բանաստեղծին և իւր ժամանակի պոլիտիկական և սոցիալական փոփոխութիւնները թէ Ռուսաստանում ընդհանրապէս և թէ Արևմտեան-Եւրոպայում: Այդ փոփոխութիւնները շափազանց թարմ են ընթերցողների չիշողութեան մէջ, որպէս զի հարկ չինէր այստեղ կանգ առնել մանրամասնութիւնների վրայ: Յիշենք միայն, որ այդ ժամանակը բանաստեղծների օրհնած երկրի և հիւսիսային մեծագոր տէրութեան ազգային վերածնութիւն և միաւորման դարաշրջանն էր. կարող էր միթէ Շահազիզեանի հայրենասէր հոգին այդ՝ աշխարհ թնդացնող լեղափոխութիւններին ու բիր բարենորոգումներին ձայն չը տալ՝ այն էլ վերածնող պետութեան կենտրոնում; ճորտութեան կապանքներից ազատուած բազմամիլիոն ազգաբնակչութեան երկրորդ մայրաքաղաքում:

Բայց բացի բուն պատմական անցքերից՝ Շահազիզեանի տաղանդի զարգացման և աշխարհայեցողութեան վրայ հզոր ներգործութիւն է ունեցել և ժամանակակից ուսաց գրականութիւնը: Նախորդ շրջանում ուսաց գեղեցիկ դպրութեան մէջ Գոզլի շնորհիւ հաստատուած ուսանողական ուղղութիւնը այժմ խոր արմատներ էր արձակել մանաւանդ վիպագրութեան մէջ. մի խումբ երիտասարդ հեղինակներ, զանազան կողմերից մօտենալով ժողովրդի կեանքին,

Ճշգրիտ գծերով պատկերացրին նրան մի շարք գեղարևեստական գրաւածներում, որոնք հասարակութեան ճաշակն ու միտքը կրթելուց զատ, պատուաւոր տեղ պատրաստեցին ուսուսաց վէպի համար ընդհանուր գրականութեան հանդիսարանում: Միաժամանակ նոր հոսանք ընկաւ և պուբլիցիստիկայի և կրիտիկայի մէջ: Պարբերական մամուլը իւր յառաջադիմական և ազատամիտ օրգանների բերանով մի կողմից համարձակ և անողորմ քննադատութեան ենթարկեց նախարէֆորմեան Ռուսաստանի կարգերը, միւս կողմից խրախուս և աջակից եղաւ վերանորոգել կայսրի կառավարութիւնը, ընթերցող դասի առաջ նորա իմաստուն գործառնութիւնների ու մտադրութիւնների անկեղծ և անխարդախ թարգմանը հանդիսանալով: Բէլինսկու էսթէտիկական քննադատութիւնը, որ սահմանափակոււմ էր գրական երևոյթների լոկ գեղարևեստական գնահատութեամբ, չը կարողացաւ գոհացնել նոր գաղափարներով համակաւծ գրողների սերնդին, առաջ եկաւ մի ուրիշ կրիտիկական դպրոց, որ ջանք էր անում թափանցել նաև հեղինակի անձնական և հասարակական իդէալների շրջանը: Ինքը ուսուսաց գրական քննադատութեան նահապետը ստիպուած եղաւ տեղի տալ այդ ուղղութեան առաջ և իւր գործունէութեան արևմուտքին՝ հրաժարեց իւր նախկին մոլորութիւնների մի նշանաւոր մասից: Այսպիսով, նոր թագաւորութեան սկսելովը ասպարէզը մնաց Դորբոյիւբովին և Պիսարևին: Յայտնի է, որ իրանց միակողմանի և երբեմն ծայրայեղ տեսութիւններով հանդերձ, այդ տաղանդաւոր քննադատները ունէին այն բացարձակ առաւելութիւնը, որ ձգտում էին գրականութիւնը ծառայեցնել կեանքին, և զուցէ ոչ մի ժամանակ ուսուսաց իրական կեանքի և գրականութեան կապը այնքան զորեղ չի եղել, որքան չիմեական և վաթսունական թւականներում:

Ահա հէնց ուսուսաց բելլետրիստիկայի այդ սէպարական ուղղութեանն ընդհանրապէս և գրական քննադատութեան նոր՝ օգտալնդիր (ուտիլիտար) պրինցիպին մասնաւորապէս աշակերտում է և մեր բանաստեղծը: «Կեցցէ սուրբ գործը» երգի մէջ Շահազիզեանը ցաւով է մտաբերում այն ժամանակը, երբ ինքը «անհոգ քնարի լարերով» երգում էր միայն սիրոյ գեղեցիկութիւնը», և պարծանքով է շեշտում, որ այնու ամենայնիւ շուտով զօրացաւ, խորտակեց ինքնահաւան մեղաչի բռնութիւնը և ուխտեց «լինել մշակ հասարակաց պիտոյքի»:

և երգել «գործ և վաստակ»։ Այդ անտարակոյս մի ակնարկութիւն է «Ազատութեան ժամերի» վրայ, ուր, արդարև, սէրը, զգայական սէրը, շափազանց լայն տեղ է զբաւել. սակայն աշակերտական նստարանի վրայ, ի հարկէ, Շահազիզեանը դժւար կարող էր հաշտեցնել բուն երիտասարդական կրքերը, տեսական խելքի թելադրութիւնների հետ։

Միևնոյն ուտիլիտար վարդապետութեան արձագանքը հնչում է և «բռնաւոր Սուլթան» և «Պոչէտ», նիւթապաշտ և քաղաքացի» բանաստեղծութիւնների մէջ։ Առաջինում բանաստեղծը վերցնում է մուզանների գլխից «էսթետիկների» հնարած խորհրդաւոր օրէջը, յայտնելով, որ երգիչը պէտք է ցաւակից և խնդակից լինի իւր ժողովրդին։

Եւ այժմ պոչէտն այլ երազում չէ,
 Որ նա որդի էր վերին երկնքի ¹⁾
 Եւ նորա հոգին պիտոյ է լուէ,
 Ուր բան էր վատթար խեղճութիւն ազգի:
 Եւ թէ ծնել էր, որ լինի թարգման
 Քաղցր մեղկուութեան և անգործութեան,
 Եւ յոգևորւած, քնարի հետ խօսէր
 Երբ նա երգում էր միայն գինի և սէր,—
 Ո՛չ, նա փոխել էր այդ ծուռ գաղափար:
 Նա բաժանորդ է ազգի ցաւի հետ:
 Եւ ահա այս խօսքս թնդում է քնար.
 Նա՛ իս քաղաքացի, և ապա՛ պոչէտ:

Իսկ երկրորդում՝ քաղաքացին, որին պատկանում է վերջին խօսքը, բնութեան տեսարանների վրայ զմայլած պոչէտին կանչում է քաղաք «հասարակի բաղդն ու օգուտը» երգելու։

Դու այն ժամանակ անդամ ես ազգի
 Եւ արժանի ես մեր սուրբ յարգանքի.—
 Այս քաղաքացին ասաց պոչէտին,
 Շտա՛ւ պ քայլերով գնաց իւր գործին:

Այսպիսով, մեր հեղինակը նաև զեղարևտի մէջ ուզում է

¹⁾ Մեր անմահ քերթողհայրը միևնոյն միտքը յայտնում է իւր աղնւազարմ մեկենասին: (Խորենացի, III, 65):

մնալ ազգի անդամ և պարտաճանաչ քաղաքացի: Այդ ցանկութիւնից մինչև հրապարակախօսութիւնը հեռու չէ. մի քայլ է՛լ և ահա սոփարը դառնում է պուբլիցիստ:

Կարելի չէ՞ արդեօք նախադուշակել, ի՞նչ հրապարակախօսութեան հետ պիտի կապէր Նահազիզեանը իւր բանաստեղծական գործունէութիւնը: Ընտրութեան համար անհրաժեշտութիւն չը կար դուրս գալու մայրաքաղաքի սահմաններից. «Ճռաքաղ» կամ «Հիւսիսափայլ» — ահա այն զելէմման, որի առաջ պիտի կանգ առնէր գործի և աշխատութեան ծարաւի ապաղայ բանաստեղծը: Քանի դեռ վերջնականապէս չէին մշակել ու ձևակերպել Նահազիզեանի տեսութիւններն ու իդէալները, քանի զրականութիւնը նրա համար լոկ ազատ ժամերի զբաղմունք էր, պարզ է որ նա կարող էր աշխատակցել անխտիր սրան կամ նրա՛ն. և իրողութիւնն այս է, որ մեր բանաստեղծը իւր առաջին փորձերից մի երկուսը — զրաբառոտանաւորներ — տպագրել է «Ճռաքաղում»: Սակայն, չը խօսելով այդ ոտանաւորների շնչին քանակութեան մասին, բաւական է նկատել, որ զրանք իրանց բովանդակութեամբ իսկապէս ոչինչ կապ չ'ունեն Սսերի օրգանի ուղղութեան հետ, և զուցէ նրանց՝ «Ճռաքաղում» լոյս տեսնելու պատճառն այն է, որ «Հիւսիսափայլը» չէր հիւրընկալում իւր էջերում զրաբառ գրւածներ: Յամենայն դէպս, «Աւտնի վշտի» մէջ արած հետեւեալ հեղինական ակնարկութիւնը, վերաբերւում է և «Ճռաքաղում» տպւած զրաբառ փորձերին:

Թէև երբեմն: սիրոս զբաւեց

Խրթին կանոնքը խրթին արեւտի,

Բայց զարգանալով խելքըս չընդունեց.

Յետ ուղարկեցի, — ապերա՛լսա որդի:

Մենք տեսանք, որ Նահազիզեանի այդ զարգացումը կատարեց զուգընթացաբար նրա հասակի հետ միասին՝ բաղմատեսակ հանգամանքների ներգործութեան տակ: Լազարեանց ձեմարանի դասընթացը բոլորելուց յետոյ՝ Նահազիզեանը ամփոփւած չը մնաց իւր անձի մէջ. մի կողմից ուշադիր աչքով հետեւելով ժամանակակից կեանքին, մի ուրիշ կողմից նա լրացնում էր իւր զիտութեան պաշարը ընտիր հեղինակների ընթերցանութեամբ: Միևնոյն ժամանակ նա սերտ շարաբերութիւններ էր պահպանում և Մոսկւայի հայհա-

տարակութեան, մանաւանդ համալսարանական ուսանողների հետ, որոնցից մի քանիսը իւր նախկին դասընկերներն էին ¹⁾: Այդ ուսանողների մասին էր ասում Նազարեանցը. «դոքա են մեր թարմ ծիլերը և ընծիւղները. դոքա են իմ առաջին սիրելիքը»: «Եւ զոցա համար, — պատմում է Նահազիզեան, — Նազարեանցը առանց յոգնելու ման էր գալիս հայոց տներում, վաճառական ժողովարաններում, հաւաքում էր ամեն տեղից շատ կամ փոքր արծաթ և մատակարարում իւր պակասաւոր ուսանողներին»: Բայց ուսանողների և Նազարեանցի կապը լոկ նիւթական չէր, այլ աւելի՛ բարոյական: Այդ ուսանողները անցնում էին միւսնոջն դպրոցը, ուր տարիներ առաջ անցել էր և Նազարեանցը, ծառայում էին միւսնոջն գաղափարներին, որոնց ծառայել էր մի ժամանակ և շարունակում էր ծառայել Նազարեանցը. նրանք ոգևորում էին միւսնոջն յոյսերով և ձգտումներով, որոնցով ապրում ու ոգևորում էր Նազարեանցը: Ի՞նչ էր ուրեմն Լազարեանց ձեմարանի պրոֆէսորը այդ ուսանող երիտասարդութեան մէջ: Նրա բարձր զիրքը, նրա հասակը, նրա անունը, նրա գիտութիւնը, նրա բարոյական արժանաւորութիւնները — ամեն ինչ նախապատրաստել էր նրան մի բնական ուղեցոյց և առաջնորդ լինելու՝ դեկավարութեան կարօտ այդ յուսալիր հայ երիտասարդութեան համար: Փամանակն այնպէս էր, որ ուսանողութիւնը կազմում էր հայկական ինտելիգենցիայի ամենազօրեղ տարրերից մէկը. մնացած

1) Նահալիզեանի դասակիցներից մէկն էր և Լերմոնտովի (Деромонъ-ի թարգմանիչ՝ վաղաթառամ բանաստեղծ Մ. Սաղաթեան: «Այս վաղամեռիկ քանքարաւոր երիտասարդի մահը ականաւոր կորուստ պիտոյ է համարել մեր այժմեան բանաստեղծական ազքատ զրահանութեան համար» — գրում էր Մ. Միանսարեանցը մեղանից քոաներեք տարի առաջ: «Մուրճ» ամսագիրը այդ ժամանակահատից դէս առաջինը եղաւ որ նորից լիչեցրեց ընթերցող հասարակութեանը Սաղաթեանի անունը: Աջնուհետև մեր սարբերական թերթերից մէկ («Մշակ») Լերմոնտովի մահուան լիւրճամեակը լրանալու առիթով առաջարկեց առանձին գրքուկով հրատարակել Սաղաթեանի թարգմանութիւնը: Այդ ժամանակաշարմար առաջարկութիւնը բանձն առաւ կատարել «Տարադ»-ը իւր էջերում արտասպելով «Կեր»: Բայց և այնպէս, ցանկալի է ունենալ Սաղաթեանի (ինչպէս և կոմս Էմմանուէլի և ուրիշների) բոլոր գրւածները (եթէ կան առանձին գրքում ամփոփած և քանաստեղծի պատկերով և կենսագրութիւնով զարդարած:

ինտելիգենտ ոչժերը բաւականաչափ պատրաստութիւն և հեղինակութիւն չունէին ռուսահայոց մտաւոր վերածնութեան կարապետներ ներկայանալու: Եթէ չը հաշուենք Նազարեանցի ընկեր Խաչատուր Աբովեանի և ժամանակակից Մարկոս Աղաբէկեանի գործունէութիւնը, պէտք է խոստովանել որ ռուսահայոց ինտելիգենցիացի ընդհանուր ձգտումներն ու ակնկալութիւնները չիմնական և վաթսնական թւականներին՝ ամբողջապէս կենտրոնացան «Հիւսիսափայլի» խմբագրի գործունէութեան մէջ: Սակայն «Հիւսիսափայլը» չիշած ձգտումների և ակնկալութիւնների լոկ հրապարակախօսական արտայայտութիւնն էր. այն ինչ այդ ձգտումների և ակնկալութիւնների բանաստեղծական ամփոփման համար անհրաժեշտ էր մի Շահազիզեան իւր «Ա. և Ն. ի վշտով և զանազան բանաստեղծութիւններով»:

(Վերջը միւս համարում):

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԱՅՆՐԻԽ ՊԵՍԱՆՈՑՅԻՆ ՀԱՅ ԳՐԱԿԱ- ՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Նորա «Լինհարդ եւ Գերտուդ» գրքի հայերէն թարգմանութեան առիթով):

„Ich will Schulmeister werden“ ՊԵՍԱՆՈՑՅԻ

ՅՈՎ. ԲԱՐԻՈՒԴԱՐԵԱՆԻ

Մեր հայոց մանկավարժական գրականութիւնը զուրկ է մանկավարժական աշխատութիւններից, դասական գրածքների թարգմանութիւններից: Մենք զոցա մասին չենք էլ մտածել, այլ աշխատել ենք կցկտուր տեղեկութիւններ տալ կրթութեան մասին: Այսօր իմ առաջն է զրած Պեստալոցցու հարուստ գրականութեան առաջին նմուշը: Նախ քան այս գրքի մասին գրելու, ասենք մի քանի խօսք Պեստալոցցի մասին: Յովհաննէս Հաչնրիխ Պեստալոցցին ծնւել է յունւարի 12 թ. 1746-ին Յինրիխ քաղաքում: Վեց տարեկան հասակում կորցրեց նա իւր հօրը, որ բժիշկ էր և կրթեց շատ սահմանափակ շրջանում՝ իւր բարեպաշտ մօր և հաւատարիմ աղախին Բարելի միջոցաւ: Մօր բարեպաշտութիւնը մեծ ազդեցութիւն ունեցաւ փոքրիկ Հաչնրիխի վերաջ: Բայց աւելի մեծ կրթական նշանակութիւն ունեցաւ նորա պապը, որը զիւղական քահանայ էր և միևնոյն ժամանակ շատ ջանք էր դնում աղքատների խնամութեան և կրթութեան վերաջ: Փոքրիկ Հաչնրիխը քիչ չէր այցելում իւր պապին, ամենաքիչը տարւաւ մէջ մի երկու ամիս նորա մօտն էր գտնւում և նորանից շատ բան լսում ու սովորում: Հաչնրիխը չէր կարողանում մոռանալ գործարանների բանւոր երեխաներին, որոնց տեսել էր պապի զիւղում: Ուսումնարանում սգեորում էին նորան Բողմեր և Բրազիլիներ ուսուցիչները հին հերոսների համար: Ռուսուի Էմիլը նորա պաշտած զիրքն էր, բայց նորա մէջ վառւել էր կամք, միայն խեղճերին և աղքատներն օգնել, ինչպէս և

անում էր նորա պապը, ուստի և այդ պատճառով սկսեց ուսումնասիրել աստուածաբանութիւն: Նորա առաջին քարոզը եկեղեցում շատ անպաշտով անցաւ. նա կակազում էր և տեղ տեղ իւր մտքերի կապը կտրում էր: Պետալոցցու առաջին փորձի անպաշտութիւնը ստիպեց նորան թողնել աստուածաբանութիւնը և սովորել իրաւաբանութիւն: Նա մտածում էր, որ այդ վերջինով աւելի լաւ կարող է պաշտպանել ճշւած ժողովրդի իրաւունքները: Սակաջն անպաշտ փորձերն և իւր մի ընկերոջ մեռնելուց առաջ արտասանած խօսքերն համոզեցրին նորան, որ հարկաւոր է փորձ և որ փորձւած անձնաւորութիւնը միայն կարող է այդ ընտրած ասպարէզում գործել: Պետալոցցին հիւանդացաւ, և նրան խորհուրդ տւին ընդհատել ուսումն, զնալ մի զիւր, ուր և իրան նւիրեց հողագործութեան: Նա 1768-ին ձեռք բերեց Յիւրիխի վաճառականական տան միջոցով մի անմշակ հող Արգոլում և շինել տւեց մի տուն: 1769-ին սլաւիկեց ցիւրիխեցի մի հարուստ վաճառականի աղջկայ չեա Աննա Շալթհեզ անունով: Նա թէև ալտեղ հողագործութեամբ էր պարապում, սակաջն վճուեց նաև բանալ մի վարժանոց աղքատ երեխաների համար, և շուտով հաւաքեց 50 փոքրիկ երեխաներ: Ամառը պարապում էր իւր աշակերտներով հողագործութեամբ, իսկ ձմեռը դաս էր տալիս, սովորեցնում, կրթում էր նոցա: Իպէս շուտով նա պէտք է անբախտանար: Կնօջ կարողութիւնը զոհելով ուսումնարանի համար, 1780-ին փակեց դպրոցը և նա ստիպւած էր թողնել իւր կալւածքը: Պետալոցցիի բարեկամները համարում էին նորան արդէն կրած մի մարդ և լիբաւի, 18 տարի ապրեց նա շատ նեղութիւնների մէջ:

Թողնելով հողագործութիւնը, նա նւիրեց գրականութեան: 1780-ին լոյս տեսաւ նորա առաջին երկասիրութիւնը «Abendstunde eines Einsiedlers» (Միակեացի իրիկնամօմը): Շատերն այս աշխատասիրութիւնը շատախօսութիւն անւանեցին, ուստի Պետալոցցին մտածեց իւր մտքերն որոշ ձեւակերպութեան ենթարկել և հրատարակեց 1781-ին մի ուրիշ աշխատութիւն «Աինհարդ և Վերտուդ, մի զիրք ժողովրդի համար» վերնագրով: Այդ գրքի մէջ ցոյց տւեց նա իւր տաղանդը և ժողովրդի մէջ մեծ հրչակ տալու: Այդ աշխատութեան չափորութիւնը տպորելով նորան, նա հեղինակեց մի այլ գիրք «Բրիստոֆը և Էլշան»: Պետալոցցու նպատակն էր, որ այս գրքովը լինի դասագիրք մարդկութեան ընդհանուր բէալական դպրոցի, այն է՝ բնական դպրոցի: Սակաջն այդ նպատակին չը կարողացաւ ծառայել գիրքը, ըստ որում գրքի երկար ճառերը շատ ձանձրացուցիչ են, թէև մէջը մեծ մտքեր են արտադրուած: Նոյն տարին զուրս եկան «Չւիցերական թերթ» շաբաթաթերթի մէջ մի լօղւած «Die Figuren zu meinem ABC-Buche», մի չարք առակներ և մի լօղւած «Հետազօտութիւններ բնութեան ընթացքի մասին մարդկային սեռի զարգացման մէջ»: Այս աշխատութեան մէջ զանազանում է երկր ստորգութիւններ մարդկային զրութեան, որոնք նե՝ «մարդուս բնական, ընկերական և բարոյական գրութիւնները»:

Տասն և ութ տարի հազար մի նեղութիւններ կրելուց լստոյ, վեղափոխութիւնը ձգեց նորան կրկին հասարակական գործունէութեան մէջ: Պետտալոցցին 52 տարեկան էր և ցանկանում էին տալ նրան տեսչի պաշտօն Արգաուրի սեմինարիալում: Սակաւն ալ չը կատարուեց. 1798-ին, երբ Կանտոնը, Ունտերվալէն Ֆրանսիացիք ալրեցին ու անսուղատ դարձրին, բաղմաթիւ որբ երեխաներ թափառում էին այս ու ալնտեղ, քաղցը լազեցնելու համար: Կառավարութիւնը ստիպւած էր մտածել զորա մասին, ուղարկեց Հալնրիխ Զոկկէին և Պետտալոցցուն: Նորա հաւաքեցին 80 երեխաներ և զոցա ապրուստն ու կրթութիւնը շատ դժւարին բան էր, նամանաւանդ նիւթական սուղ միջոցներում: Ալտտեղ ևս նորա գործունէութիւնը երկար չը տևեց, ըստ որում ալն սենեակները, ուր երեխաներն էին կրթւում, պէտք է վիճարական հիւանդանոցի փոխադրէր. ուստի և ստիպւած էր իւր սիրելի որբերին արտասուքը աչքերին, ճանապարհ ցոյց տալ: Իսկ ինքը Պետտալոցցին զնաց տկարութեան պատճառով, հանքային ջրերով լալտնի մի քաղաք: Երկար այս ու ալն կողմը թափառելուց լստոյ նա հրատարակեց 1801-ին իւր հալեացքները դասատուութեան և զպրոցական գործի վերաբերեալ «Ինչպէս է Գերտրուդը սովորեցնում իւր երեխաներին» վերնագրով մի գրքում, և ընտրեց իւր գործունէութեան համար Իֆերտոնը (Yverdon): Ալտտեղ ստացաւ նա «մ ո ղ ո վ ղ ա կ ա ն մ ա ղ ա ռ է» կոչումն, նորան ալցելում էին մինչև անգամ օտար երկիրներից թաղաւորներ, զիտնականներ, զրոզներ, ի միջի ալոց և փիլիսոփալ Հերբարտն, աշխարհագէտ Րիտտէր, Շտերն, Ռյոխման, Գելլըրիւկ, Յիլլեր, Շտալներ և Պլամանը: Այս վերջինը որ ալցելեց նորան 1804 թ., հետևեալ կերպով է նկարագրում Պետտալոցցուն. «Նա կատարելապէս բնութեան մարդ է, միջակ հասակի և հազուաթի մէջ շատ անհոգ և կեղտոտ: Գէմքն է չեչոտ և շարաբերութեան մէջ շատ բարի է, և երեխայի պէս շողոքորթող բնաւորութիւն ունի. հոգով անհանգիստ է, ոչ մի սեղ զաղար չունի, ուստի և մի երկար խօսակցութիւն անկարող է համբերութեամբ լսել. սակաւն ամբողջ օրեր զիտէ նստել իւր գրասենեակում և թեւադրել ինչպէս մտքերը գալիս են. ապա լստոյ ալ թեւադրածը կարդում ու սրբագրում էր ալնքան, մինչև որ ինքը գոհ կը մնար: 1809-ին իւր վարժանոցի ուսուցիչների թիւը 15 էր և աշակերտներինը 165: Ալտտեղ ևս վիճակւած չէր նորան մինչև մահ գործել, նախ սր ծագել էին խռովութիւններ ուսուցիչների մէջ, ապա 1814-ին վախճանւեց Պետտալոցց ու հաւատարիմ կիներ: Խեղճ ծերունին արտասանեց իւր կնոջ դաբադի վերաջ՝ «Մենք բոլորից վաճառւած և ծաղրւած էինք, հիւանդութիւնը և աղքատութիւնը մեր զլուխը կոացրել էր և մենք կերել ենք մեր չոր հացը արտասուէքը մեր աչքերին. բալց ինչ բան տուց մեզ ալն ուժն, զիմանալ կեանքի բոլոր հարւածներին»: Ահաւասիկ այս աղբւրից էինք ստանում ուժ, սիրտ առնում, հաւատում իրար և մխիթարում, մատնացոյց անելով միևնույն ժամանակ իւր ձեռքին բռնած Աւետարանը:

Պետտալոցցին արդէն թուլացել էր, նա չէր կարողանում հաշուել այն գազափարի հետ, թէ իւր սիրելի Գերտրուզը վախճանել է: Պետտալոցցիի դպրոցի ուսուցիչները մէկը 1818-ին հրատարակեց Նորա բոլոր գրւածներն, որից զուտ արդիւնք ստացւեց 50,000 զուլդէն: Պետտալոցցին այդ փողով որոշեց մի որբանոց հիմնել Յլինդիում: Իւր ծերութեան հասակում նա գրեց նաև մի երկասիրութիւն «Իմ կեանքի վիճակը» վերնագրով, որի մէջ նա խօսում է գլխաւորապէս իւր դպրոցի մասին: 1827-ի սկզբներին Պետտալոցցին սաստիկ հիւանդացաւ: Այդ հիւանդութիւնը տեւեց գրեթէ մի ամիս և 17-ին փետրւարի 1827 թ. վախճանւեց: Նորա զերեզմանաքարի վերայ փորագրւած են հետևեալ խօսքերը. «Ամեն ինչ ուրիշների համար, իսկ իւր համար ոչինչ»:

Պետտալոցցին իւր ամբողջ կեանքը ծառայեցրեց մի գաղափարի, այն է՝ ժողովրդի կրթութեան: Նա ներկայանում է որպէս հայր խեղճ և կրթութեան կարօտ ամբոխի. նա համոզւած էր, որ իւրաքանչիւր անհատ, լինի նա աղքատ, ու ստոր դասակարգից և անընդունակ, պէտք է կրթւի, որ մարդկութեան պիտանի անդամ դառնալ: Նա ասացուցեց որ տարրական դասաւանդութիւնը, բոլոր դասաւանդութիւնների հիմնաքարն է: Նա պահանջում էր զարգացումն մարդկային բոլոր ոլթերի, նա գտաւ որ մարդկային ընդհանուր կրթութիւնը հիմքն է բոլոր մասնագիտական զարգացման: Ամեն դասաւանդութեան սկիզբն էր նորա համար՝ զխտորութիւնը: Նա ոչ թէ միայն ստեղծեց Գերմանիայում մի նոր ձև դասաւանդութեան, այլ նորա զլիսաւոր ծառայութիւնը այն է, որ նա ցոյց տուց թէ ժողովրդի կրթութիւնը և ուսումը ազգային պէտք է լինի: Պետտալոցցին մանկավարժութեան պատմութեան մէջ նոյն տեսակ աստղն է, ինչպէս Կոմենիոս, Խուսսօ, Հերբարտ:

Գառնանք «Լինհարզ և Գերտրուզին»: Այս աշխատութիւնը Պետտալոցցու ամենատարանգաւոր գործն է: Նա ուզում է աչտակ ցոյց տալ, որ մաչերից և նոցա կրթութիւնից կախումն ունի մի ընտանիքի, հասարակութեան և պետութեան բարեկարգ վիճակի մէջ գտնելը: «Նս կամենում եմ ժողովրդի կրթութիւնը շանձնել մաչերին», այս է այն գաղափարը, որով ամբողջ երկասիրութիւնը ներշնչւած է: Պետտալոցցին ներկայացնում է Գերտրուզին, որպէս մի իղէալ, որը դարձնում է տունը Աստուծոյ տաճար, մանուկների սիրտը ու գլուխը կենդանացնում է լոգէալական կրթութեան հոգը: Չը նախելով որ այս գիրքը արծարծում է աչտախի բարձր գաղափարներ, նա ճշմարիտ ժողովրդական գիրք է. նա նկարագրում է ժողովուրդը, թէ ինչպէս է նա ապրում և սննդւում: Մենք գրքի մէջ տեսնում ենք մի հաստիկուոր կալւածատէրի, որին զիւղացիք հարկ են վճարում: Գիւղի շրջակայքում ծաղկում է աւաղակութիւնը: Նւ Բոնալ զիւղի տանուտէր

Համայնքը, որը միևնույն ժամանակ պանդոկապետ է և իւր տիրոջ հաւատն է վաղեւում, բոլոր թշուառութիւնների արմատն է: Այդ մարդը, որ մեծ ուժ է կազմում, ոտնակոխ է անում գիւղի բնակիչներին պատուը, կլանում է նոցա կարողութիւնը. նա մի խօսքով գիւղը անբխտացնում է: Այդ պատմութեան մէջ երևան են գալիս ուրիշ անձնաւորութիւններ, ինչպէս, օրինակի համար, որմնաղբիւր Լինարդը, որ մի բարի մարդ է, սակայն ընկել է տանուտէրի ճանկերը և որին սա փողեր տալով ծառայեցնում է իւր նպատակներին: Իսկ որմնաղբի կին Գերտրուդը, նկատելով իւր մարդու այդ վիճակը, զանգատուում է կալւածատէր Արներին. այդ վերջինը հրամայում է Լինարդին շինել գերեզմանատան պարիսպները: Տանուտէր Արների խօսակցութիւնից հասկանում է, որ գիւղում մի նոր ոգի է երևում, սատար վճռում է իւր ընկերների հետ պանդոկում այդ ոգուն պատժել: Բայց և այդ խմբի խօսակցութիւնից պարզ երևում է, թէ ինչպէս նոքա իրար հետ ներքնապէս անհամաձայն են և իրար հաւատ չեն ընծաղում: Չ'երկարացնելու համար լալոնեմ միայն այն, որ վերոյիշեալ չարամիտները, կեղտոտութիւն չի մտում, որ չ'անեն. բայց վերջը ամենայն ինչ բացում է: Վերջը Արները, գիւղական քահանան, բամբակ գզող Մայերը և շատերը գալիս են այն և զրակացութեան, որ մի բարի վերանորոգումն գիւղական հանգամանքների, կարող է միայն կրթութեամբ և դաստուութեամբ տեղի ունենալ: Գլխուպէնը վճռում է՝ «ես ուզում եմ դպրոցի վարպետ լինել», և առնում է գիւղի ուսումնարանը իւր ձեռքը, որը մինչև այդ ժամանակ գրեթէ աչքից ընկած էր: Սակայն այդ գործը իւր ձեռքն անելով, մտնում է նա Գերտրուդի բնակարանը սովորելու նորանից՝ հաւատարիմ դաստիարակչուհուց սովորելու: Նա տեսնում է, ինչպէս Գերտրուդը առաւօտները երեխաների հետ Աւետարան է կարդում և ջերմութանը ազօթում, ինչպէս ամբողջ օր խօսակցութիւնը այդ երեխաների հետ՝ կարգացածի գլխաւոր մտքերն են. նա տեսնում է, թէ ինչպէս երեխաները մօր առաջնորդութեամբ այգում գործում են: «Այր պարոնները Գերտրուդից հեռացան, ասացին նորան, որ վաղն էլ կը գանք»: Նա պատասխանում է նոցա. «Ինչու համար» Գուր վաղը և միշտ էլ նոյնը կը տեսնեք, ինչ որ այժմ»: Գլխուպէնը պատասխանում է՝ «Այն ինչ որ միշտ նոյնն է, նա տեսողական է և զաւրտեանական, իսկ ինչ փոփոխւում է՝ նա անցողական է, ամուր չէ: Այդ դէպքից չետո՞ք է Գլխուպէնը իրան նւիրում է դպրոցին: Կրթութեան պատուը հասունանում է և ամբողջ գիւղը բարեփոխւում է: Իշխանն ևս լսում է այս բարի գործի մասին և դողում է նոցա ջանքը՝ բարեխաւացնելու ժողովրդի դիւստորապէս խեղձ, աղքատ և որբերի վիճակը:

Ահաւասիկ այս է «Լինարդ և Գերտրուդի» բովանդակութիւնը: Սորա հիմնական գաղափարն է՝ իւրաքանչիւր ժողովրդի բարելաւութիւնը, նորա լուս վիճակը միայն կախումն ունի կրթութիւնից: Այս աշխատութիւնը թէև կարելի է դնել Թուօթի «Էմիլի» շարքում, բայց չի կարող այդ վերջինին

հաւասարել, ըստ որում վերջինս անխորտակ է հեղինակի ամբողջ մանկավարժական ծրագիրը, մինչդեռ այստեղ միայն մի մեծ գաղափարի իրագործման մասին է խօսքը: Այս գրքի նշանակութիւնը այնու ամենայնիւ մեծ է և չեղափոխական ազդեցութիւն ունի և ամբողջ գերմանական ազդը շնորհակալ է Պետալոցցուն այդ աշխատութեան համար:

Գառնանք ալժամ մեր հայկական թարգմանութեան: Թէ որ աստիճան կարնոր է հայերիս համար «Լինհարգ և Գերտուր», աւելորդ է քացատրել, նա պէտք է նաև մեր ժողովրդի ընթերցանութեան զիրք լինի: Խօսքներս մասնաւորենք, սակալն, միայն ալժմեան թարգմանութիւնով, որ հրատարակել է Թրիֆլիսի հայերէն գրքերի հրատարակող ընկերութիւնը: Յաւօք սրտի պէտք է ես չաշտնեմ, որ ընկերութեան հրատարակածը չի կարող ալն պահանջները գոհացնել, որ իսկականին է վիճակած: Սորա գլխաւոր պակասութիւնն է համառօտութիւնը. Պետալոցցու «Լինհարգ և Գերտուր»ը շարք ու փորձական ձևով է գրած և տեղ տեղ ներկայացնում է հրաշալի դիւրոգներ, իսկ ուսերէնի կրճատումն պատմողական, բաց և անհամ մի գիրք է: Պետալոցցու գրածքի արժանաւորութիւնները մէկն էլ չորս ճոխ ոճն է, իսկ թարգմանութեան մէջ բացակա է այդ վերջինը: Թող ամեն ընթերցող ինքը գատէ, արդեօք մի տաղանդի գործ կարելի կրճատել, և կը լինի նա նոյնպէս մի ստեղծագործութիւն: Ոչ, նա կը նմանի մի թխած շարագրութեան: Գուցէ ընթերցողն այս զիրքը չի ճանաչէ, առնենք ուրիշ օրինակներ, եթէ կրճատենք Սոփոկլէսի, Շեկսպիրի, Շիլլերի, Գէօթէի, Իլիկենսի, Նալլհադէնի, Ֆէլէրբախի Ալֆոնս Դոգէի, Չախար-Մադրիսի, Պուչկինի, Տուրգենևի, Դոստոյեւսկու և այլ գրողների երկիրը, արդեօք նոյնը կ'առնենալինք, թէ աւելի մատը: Ինչ կարող էր լինել եթէ մենք Գոստոյեւսկու «Преступление и наказание» ըստ մեր կամեցածի համառօտէինք: Կը լինէր մի անհամ գրածք, որի ընթերցանութիւնը ինքը ցոյց կը տար, որ այս գործը չ'ինծու է և չէ արդիւնք տաղանդի: Այս տեսակէտից նախած, ներկալ թարգմանութիւնը մի նպատակ է մեր զրականութեան, և ես կ'առաջարկեի, որ մի բարի մարդ լանձն առնէր կատարեալ թարգմանելու այս հրաշալի երկը, որ միջազգային ժողովրդական մի գիրք է: Միւս կողմից պէտք է նկատել որ ալժմեալ թարգմանութեան լեզուն ևս ազաւազած է, սահուն և կոկ չէ:

Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ վերոյիշեալ թարգմանութիւնը հայոց հրատարակչական ընկերութեան հրատարակութիւնն է, ուստի թող կը տալի ինձ առաջարկել այդ ընկերութեան ուշադրութեանը մի քանի ուրիշ հրաշալի գերմանական և ուրիշ սուղերի մանկավարժական գրքեր, որ արժանի են թարգմանելու:

1 Մարական դպրոց, գործ Յովհաննէս Ամուս Կամենիտսի:

2 Ինչպէս Գերարուզը սովորեցնում է իւր երեխաներին, գործ Հալքրիխ Պեսսարոցցու:

3 Էմիլ, գործ Ռուսալի:

4 Զրոյցներ երեխաների և նոցա բարեկամների համար գ. Չալցմանի:

5 Krebsbüchlein oder Anweisung zu einer vernünftigen Erziehung der Kinder, Նոյն հեղ.:

„Faciám, mi popule, si te idem facienten prius wiederó“.

(Ես կ'անեմ, հայրիկս, եթէ առաջուց տեսնեմ, որ դու էլ նոյնը անում ես):

6 Karl von Karlsberg oder das menschliche Elend, Նոյն հեղ.:

7 Konrad Kiefer, oder Anweisung zueiner vernünftigen Erziehung der Kinder. Նոյն հեղ.:

8 Ameisenbüchlein, Նոյն հեղ.:

9 Die deutsche Jugenderziehung 1891 գործ Գուսֆելլի:

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ի Թ Ի Ի Ն

ՇՄԻՆՏ, ՖԵՐԴԻՆԱՆԴ. — «Ռէչնեկէ աղւէսը», գերմաներէնից թարգմանեց Փիլիպպոս Վարդանեան: Երես, տառ № 12 Թիֆլիս, Յ. Մարտիրոսեանի տպարան: 194 էրես, գինն է 60 կ.:

«Ռէչնեկէ աղւէսը» մի հեղինակի գործ է. նրա վրա միջին դարերի ընթացքում աչիատել են մի շարք անչալտ գրողներ. չալտնի է միայն չորսի անունը, որոնք գրել են գրքի հազիւ մի քառորդը: Միջին դարերում կազմած այս գիրքը չետոյ պատմեցին զանազան հեղինակներ, օրին. Գեօթէն փոխադրեց նրան հեկղամետրների. պատմողներից մէկն է և Ֆ. Շմիդտը. Իսկական միջնադարեան «Ռէչնեկէի» բովանդակութիւնը հետեւեալն է. Ռէչնեկէն աղքատացած ասպետ էր. նա ապրում էր կիսաւեր Մալպերտուս ամրոցում իւր ամուսնով ու որդիներանցով. նրա ընտանիքը չաճախ ստիպւած էր սովատանջ լինել. գիտենալով պերճախօսութեան ուժը, Ռէչնեկէն փորձեց խօսքով հանգստացնել իւր քաղցած որդուն, բայց այս վերջինը չ'ենթարկեց նրա պերճախօսութեանը, այլ ընդհակառակը սկսեց աւելի բարձր աղաղակել և ահա աղւէսին մնում

է միայն մի բան, կամ գողութեամբ, կամ խորամանկութեամբ ձեռք բերել այն, ինչի նա պահանջ ունի: Այդպիսով աղւէսը ընդհարումն ունեցաւ զալլի հետ և հէնց սկզբից մի լուսահատ կուր սկսեց նրա հետ: Գալը գանգատում է թագաւորին որի գերը կատարում է առիւծը: Նկարագրելով Ռէչնեկէի ճանապարհորդութիւնը զէպի արքայի պալատը, հեղինակը օգտուում է հանգամանքից՝ ներկայացնելու առիւծի պալատական կեանքի նկարագիրը. ամենից առաջ նա կանոց է առնում ի հարկէ արքայի վրայ, որը նշանաւոր է իւր վսեմ չիմարութիւնով. թէև սառչինչ չի անում, բայց չամառ կերպով մաքառում է իւր արքայական իրաւունքների համար և զանաւորութեամբ լսում է պալատականների կեղծարութիւնները: Արքայի գլխաւոր խորհրդականը արջն է, ծանրաշարժ, բայց սարսափելի որկրամուլ մի արարած, որը ոչ այնքան մտածում է տէրու-

թեան գործերի որքան ալն բանիմասին, թէ ինչ կերպով բաւարարութիւն տալ իւր ստամոքսին: Արքայի սիրելին, ամբողջ պալատի իղէալը, պճնասէր, զեղեցիկ, պալատականի իսկական տիպարը՝ լէօպարդն է (ընծառիւծը) որը թող է տալիս արքային հաճոյանալ իր կնոջը: Գլխաւոր դատաւորը եղջերուն է, որը իւր պողբերից զէնը ոչինչ չի տեսնում, բայց դրա փոխարէն նրա կալմածքը բոլորին հիացնում է իւր լրջութեամբ. հէնց այդ բանի շնորհիւ է, որ նա դատաւոր է դառել. լետոյ գալիս է պալատական հոեաորը՝ էջը, որը նշանաւոր է իւր խլացնող պերճախօսութիւնով. նա ալնպիսի բարձր ձայնով է քարոզում, որ նրա քարոզը լսելի է լինում մի ամբողջ մղոն տարածութեան վրայ: Այսպէս ուրեմն արքայի պալատը գալիս են աղէսը ու գալլը և խնդրում են, որ իրանց դատէ. զլիսին ծանրութիւն չտալու համար, ալնքան դիմում է միջին դարերում ընդունւած դատաստանական մեծամարտութեանը. ասպարէզ են դուրս գալիս. գալլի մազերը կատաղութիւնից բիզ բիզ են կանգնել, նրա աչքերը լցւած են արիւնով, իսկ աղէսը իւր մօրաքրոջ խորհրդով ածիլել էր մարթու մագերը և իւզով օծել մարմինը: Աղէսը խոյս է տալիս գալլից, ցանկանալով նրան լողեցնել, աչքերին թող է փչում և երբ գալլը լողնած ու կուրացած աւաղից ու փոշուց վաւր է ընկնում, աղէսը չարձակում է նրա վրայ և սկսում է կրծել. բայց նա ալնքան դրաւում է իւր դերով, որ չի կարողանում լետ փախչել.

գալլը բռնում է նրա թաթից և ալնպէս ուժեղ կծում է, որ աղէսը ուշաթափում է. սա չաղթւած է և արքան նրան մահւան է դատապարտում, վարդապետները միջամտում են և նա ներումն է ստանում ալն պայմանով, որ իւր մեղքերը ապախարելու համար վանք մտնի. աղէսը սկսում է ձգնել և ինչպէս ջերմառանգութեամբ է ձգնում! Բայց այս բոլորը երկար չէ տևում: Ալնքի բազում շրջող չաղ հաւերը գալթակղեցնում են նրան և նա ուտում է մէկին: Աղէսը դատի ենթարկւեց, արտաքսւեց վանքից և անիծեց եկեղեցուց. վերագառնալով տուն, նա սարսափ է բերում միւս կենդանիներին: Արքան պաշարում է աղէսի ամբողջ տարի. լողնած երկար պաշարումից, առիւծը ընդունում է խաղաղութեան պայմանները, ընդունում է աղէսին իւր ծառայութեան մէջ և իրա ամենամօտիկ անձն է դարձնում. իսկ վարիանտներից մէկում Ռէլնեկէն նոյն իսկ թագաժառանգ է նշանակւում և ժամանակով ալնպիսի իմաստուն թագաւոր է լինում, որ նոյն իսկ Հռոմի պապը հրաւիրում է իւր մօտ՝ նրանից իմաստութիւն սովորելու համար:

Մենք չենք բերում միւս էպիզոդները, զա կ'երկարացնէր մեր գրախօսութիւնը. բաւականանում ենք որոշելով, զբքի ընդհանուր նշանակութիւնը. Ռէլնեկէ աղէսը մի դառն սատիրա է ուղղւած ֆէօզալիզմի, ասպետութեան, և հոգևորականութեան անառակութեան զէմ: Բոլորը, ինչի առաջ խոնարհում էր միջ-

նադարեան հասարակութիւնը, այն է արքայական իշխանութիւնը, նորա արդարադատութիւնը, ասպետութիւնը, մենամարտութիւնով դատ վճռելը, կուսակրօնների կարգերը, վերջապէս նոյն ինքը Հռոմի պապը, ծաղրի ու խաչտառակութեան է ենթարկուում: Բոլորին չաղթում է խորամանկութիւնը և քաղաքագիտութիւնը, որը մարմնացած է աղէտի մէջ: «Ռէչնիկէ Աղէտը» վկայում է ֆէօդալական աշխարհի լուծւելը իւր իրաւունքներով ու հիմնարկութիւններով և նոր բուրժուազիայի դարեւորջանի սկսւելը, երբ արքայական իշխանութեան և քաղաքային համայնքների միացած ճիգերով՝ հարւած հասցրեց միջնադարեան ֆէօդալիզմին, մի հարւած, որից լետոյ նա այլ ևս չը կարողացաւ ոտի կանգնել»: (Средневежковая литература, лекция профессора Н. И. Стороженко).

Շմիդտը, ինչպէս վերև նկատեցի,

պատմում է նոյն նիւթի մասին և նա պատմում է հետաքրքիր կերպով, բայց նրա պատմութիւնը ազատ չէ մի քանի նշանաւոր պակասութիւններից. ամենից առաջ Շմիդտի «Ռէչնիկէ» մէջ բացակայում են միջնադարեան տիպերից շատերը, այստեղ խօսք չը կայ ոչ Հռոմի պապի, միջնադարեան այս նշանաւոր հիմնարկութեան մասին, ոչ հողերու կանների, ոչ ասպետութեան մասին և երկրորդ՝ միւս տիպերը, եթէ դուրս էլ են բերւած, ալդ արւած է այնքան անորոշ ու թույլ գծերով, որ անկարելի է դուշակել, թէ ո՞ր դասակարգի ներկայացուցիչ է այս կամ այն կենդանին: Միակը, որ պարզ է դուրս բերւած, դա միջնադարեան արդարադատութիւնն է, երբ չաղթող էր հանդիսանում ոչ թէ արդարը, այլ ճարպիկը:

B.

«ՌՄՄՍ ԲՈՅԱՐԻՍ» (ճշգրիտ անցք), Թարգմանութիւն Մոսկւա, տպ. Բարխուդարեանի, 1891 թ., 32 երես, գինն է 3 կոպ.:

Գործողութիւնը կատարւում էր չունական կղզիներից մէկի վերայ, տաճկական իշխանութեան օրերում, մեղանից մօտ 500 տարի առաջ: Խաւար ու բարբարոս ժամանակ էր. ոչ ոք ապահով չէր իւր կեանքի, պատի ու կալքի համար. վիրաւորում էին յարգու ամենասրբազան զգացմունքները, իսկ ժողովուրդը լուծթեամբ ու համբերութեամբ տա-

նում էր ալդ բոլորը. ոչ ոք չէր վրձնում թոթափել իրանց վրայ ծանրացած լուծը. հարկաւոր էր մի համարձակ, ուժեղ կամքի և սուրբ զգացմունքների տէր մարդ և ալդպիսին առաջ եկաւ. դա Թոմաս Բոցարինն էր: Նա նոյնպէս ալրւած ու դաղւած էր տաճիկներից. տաճիկ հարկահանները խաւարեցրին նորա սիրելի մօր վերջին ընկերը, տաճիկ զաղին

ընձութեամբ իւր հարեմբ տարաւ նորա սրտին ամենամօտիկ անձնաւորութիւնը, նորա միակ քրոջը: Եւ նա վճռեց իւր վրէժը հանել: Բայց նա սովորական վրէժառուներից չէր. ուրիշը նորա տեղ կը բաւականա՜նար միմիայն զադիի սպանուով, ալն մարդուն սպանելով, որը անմիջապէս խոր վիրաւորանք էր հասցրել իրան. բայց Թոմասը աւելի հեէր տեսնում, նա տեսնում էր, որ իրան հասցրած չարիքի խկական պատճառը ոչ թէ զադին կամ հարկահանն է, այլ ալն հաստատութիւնը, որը ստեղծել առաջ է բերել զրանց, ալն է տաճիկ կառավարութիւնը. հանելով իւր անձնական վրէժը տաճիկական կառավարութիւնից, նա դորանով հանում էր և ալն հասարակութեան վրէժը, որը ալնքան անգամ վիրաւորւած ու անարդւած էր այդ իշխանութիւնից. դորանով նա դառնում էր հասարակական վրեժառու, նորա արածը ստանում էր հասարակական նշանակութիւն և ահա ինչու պատմութիւնը այսօր մոռացել է հազարաւոր ուրիշ վրէժառուներին, բայց պատկառանքով վիշում է Բոցարիսի անունը. Բոցարիսը չըջապատեց իրան համախոհներով, բոլորը պատրաստ էր. հարկաւոր էր չարմար դէպք և չարմար բողէ, և այդ օրը եկաւ. տարիներով սրտի խորքերում կուտակւած ու սնւած անբաւականու-

թիւնը վըռթկաց վառօդի նման. ապաստամբութիւնը արագ տարածւեց ամբողջ կղզու վրայ. տաճիկները վընտւեցան կղզուց և ւի քանի փորձեր եղան տաճիկներին կողմից վերականգնացնել իրանց իշխանութիւնը, բայց այդ փորձերը ապարդիւն անցան լոյնների կատաղի ընդդիմադրութեան շնորհիւ: Ազգաբնակութիւնը սկսեց աղատ շունչ քաշել. բայց այդ երկար չը տևեց. երկրի լիազօր կառավարիչ նշանակւել էր Բոցարիսը. այս բանը դուր չէր գալիս կղզու մեծամեծներին և նրանցից մէկը, սուլթանի խոստումներից դրւած, Թոմասուրեց Բոցարիսին. նորա մահից չեսու առաջ և կան հինգ վեց կառավարիչներ. զրանցից ամեն մէկը ուզում էր ինքը գլխաւորը լինի. առաջացաւ մի ինքնատուկ կուիւ, որից օգուտ քաղելով տաճիկները նորից տիրեցին կղզուն և սրով ու կրակով կղզու մի ծայրից մինչև միւսն անցան:

Գիրքը կտրգացւում է հետաքրքրութեամբ: Ինչ վերաբերում է Թարգմանութեան լեզւին, նա աղատ չէ թերութիւններից. օրինակ կան այսպիսի սխալ ոճեր. «չաս դահլաջ մի տար» (երես 7)—ասում են զահլաջ տանել և ոչ տալ), «ինչ ևս երկար գլխիցդ դուրս տալիս», պէտք է ասել «ինչ ևս գլխիցդ երկար ու բարակ դուրս տալիս», և այլն:

B.

Վ. ԼՍԻՆԿԵՎԻՉ. — «ԵՐԿՐԱՇԱՐԺ ԵՒ ՀՐԱՖՈՒՂԽ»: Ժողովրդական ընթերցանութեան համար. թարգ. ուս. ձեռագրից Մառանկոգեան: Թիֆլիս տպ. «Արօր». 1891 թ. 48 էր. 4-ծալ փոքր, գինն է 6 կոպ.:

Երկրաշարժը և հրաբուլխը պատկանում են այնպիսի երկրաբանական երևույթներին, որոնք զարմանք ու սարսափ տարածելով՝ առանձին տպաւորութիւն են թողնում հասարակ ժողովրդի վերայ: Չը կարողանալով բացատրել իրան այդ սարսափելի երևույթների պատճառը ժողովուրդը դիմում է երևակալական-առասպելական աշխարհը և մոլորում անհեթեթ նախապաշարմունքների լաբիրինթոսում: Այս պատճառով դժուար է գտնել ժողովրդականացնելու համար երկրաբանական երևույթներից աւելի լաջող և շարմար նիւթքան վերույիշեալները: Թէև այս երկու երևույթները միշտ չեն կապւած լինում իրար հետ, սակայն պարզ ըմբռնելու համար մէկը, պէտք է իմանալ և միւսը.

Պ. Լիւնկեվիչի պատմածքը պարզ է և հետաքրքրական: Պարզութեան համար հեղինակը տեղ տեղ չափազանցութիւնների մէջ է ընկնում: Երկուսից մէկը, կամ գրքուկը գրւած պէտք է լինի հասարակ ժողովրդի համար, որ հազիւ գրել կարողալ գիտէ ու շատ չնչին զարգացում ունի և այն ժամանակ թէ պատմելու ոճը, թէ մեկնութիւնները ու լեզուն բոլորովին ուրիշ կերպ պէտք է լինի, կամ թէ ժողովրդականացրած զբոքուկը գրւած է լինում արդէն գրականական ոճին ու լեզուն ընտելա-

ցածների և փոքր իշատէ զարգացածների համար, որոնց արդէն տարրական աշխարհագրական տեղեկութիւններ չաւտնի են: Այս գրքուկի ընդհանուր պատմածքը կարող է մատչելի լինել երկրորդ տեսակի ընթերցողների համար: Եթէ այսպէս է, ուրեմն աւելորդ է բացատրել այնպիսի տարրական բաներ, որ «Բաթումը Սև ծովի ափին է» և այլն, որովհետև այն ընթերցողը, որը առանց բացատրութեան հասկանում է ի՞նչ է «դադ», «կղզի», «ովկիանոս» և այլն, կարծում ենք տեղեկութիւն կ'ունենալ և նորա մասին թէ Բաթումը Ասսպից ծովի եզերքին չէ, կամ Պոլիս գնալու համար Բաթումում չուզենաւ պէտք է նստել և անցնել Սև ծովով:

Պատահած երկրաշարժների ու հրաբուլխների սարսափելի նկարագրութիւնը դրքուկում աւելի մեծ տեղ են բռնում, քան պատճառների բացատրութիւնը և, բացի այդ, Հայաստանում և Արևմտում պատահած երկրաշարժների մասին համեմատաբար քիչ է ասւած: Բացատրութիւնները երբեմն այնքան էլ լիակատար չեն, օրինակ ասւած է. «դուք գիտէք որ հողագնդի ներսում կալ կրակահեղանիւթի լաւալի մի ամբողջ ծով: Եթէ դա ծով է, ուրեմն, նա էլ ուրիշ ծովերի նման կարող է փոթորիկներ և ալեկոծութիւններ ունե-

նալ, որոնց ժամանակ հրեղէն ալիքները զիպչում են երկրի կեղևին և սաստիկ տապալում նորան»: Բայց բանը նրանումն է որ «ուրիշ ծովերը» ալեկոծում են և փոթորիկ ունենում ոչ այն պատճառով որ «ծով» են, այլ այն պատճառով որ օդը տեղափոխւելով չուժկու խփում է նորա մակերևութին. արդեօք երկրի ներսում էլ նոյն պատճառից է ալեկոծում կրակահեղանիւթ լաւայի ծովը—կը հարցնի ընթերցողը:

Թարգմանութիւնը ընդհանրապէս ծանր է և չունի այն կենդանութիւնը ինչ նկատում էր «Պատիկ է բայց չստիկ է» գրքովում: Տեղ տեղ թարգ-

մանիչը բառացի է նետել ուսական ձեռագրին. օրինակ էտնա լեառը—τορα Θηρα—որ ուսերէն իգական սեռին է պատկանում, այս հարազատ թարգմանութեան մէջ էլ իւր սեռը պահպանել է «գեղեցկուհի էտնա» դառնալով:

Ընդհանրապէս, ինչպէս «Պատիկ է բայց չստիկ է» գրքովի առիթով նկատել էինք, պ. Լուսինովիին չաջողում է ժողովրդականացնել բնագլխական նիւթեր, ուստի ցանկալի է որ նա: չարունակի լրացնել այս՝ բովանդակութեամբ շատ պակասաւոր ճիւղը մեր ժողովրդական գրականութեան մէջ:

Լ. Ս.

ԼԵՐՄՈՆՏՏՈՎ, Մ. ԻԻՐԵՒ., Թարգմանութեամբ Մ. Սատաթեանի.— «ԴԵԻ», արևելեան վիպասանութիւն: Թիֆլիս, տպարան Արօր Տ. Նազարեանցի: Հրատարակութիւն 50 «Աղբիւր» և «Տարազ» հանդէսների: Քառածալ, 57 էրես, տառ № 12. գինն է 30 կոպէկ:

Առհասարակ դժար բան է օտար լեզուից մի գեղարեստական գրածք թարգմանել: Աւելի ևս դժարանում է գործը, երբ գեղարեստական բովանդակութիւնը արտաչափուած է ոտանաւոր ձևով: Պէտք է ոչ միայն ճիշտ և գեղարեստորէն փոխադրել բնագիրը, այլ և պահպանել հեղինակի տաղաչափական ոճը: Աւելացրէք դորա վերայ Լերմոնտովի ոտանաւորի բլբլեղանման գեղեցիկ, ամփոփ ու կտրուկ ոճը և հայկական տաղաչափութեան անմշակ դրութիւնը Սատաթեանի թարգմանելու ժամանակ և կը տեսնէք, թէ ինչ զրժ-

ւարութիւնների պէտք է չաղթի և բխտասարգ թարգմանիչը:

Ասել, թէ Սատաթեանը բոլոր դժարութիւններից չաղթող է դուրս եկել,—սխալ կը լինէր: Այն, ճիշտ է, այլպիսի չափազանցութեան մէջ ընկնողներ, բայց այդ պէտք է վերադրել գլխաւորապէս այն հանգամանքին, որ նրանք երևի թարգմանութիւնը չեն համեմատել բնագրի հետ: Իսկ Սատաթեանի թարգմանութիւնը արժէր և պէտք էր համեմատել բնագրի հետ, որովհետև շատ լաւ թարգմանութիւն է, ոչ այնպիսի թարգմանութիւն, որ ամբողջապէս

անչաջող կտորներից ու կոպիտ սխալներից է կազմւած, ինչպէս առհասարակ լինում է մեզնում, այլ աչնպիսի թարգմանութիւն, որի անչաջող տեղերը պէտք է փնտռել և կարելի է մէկ-մէկ թւել:

Ես այդ համեմատութիւնը տող առ տող արեցի և համոզւեցի, որ կան աչնպիսի հատւածներ, որոնց թարգմանութիւնը կարելի է կլասսիկական համարել, բայց կան և անչաջող կտորներ ու մինչև անգամ սխալներ:

Թարգմանութեան քննադատութեանը չ'անցած մէկ-երկու խօսք ասենք հրատարակութեան մասին: Ինչ ասել կուզի, որ շատ լաւ բան է արել հրատարակիչը, որ առանձին գրքովով տպագրել է այդ հիանալի բանաստեղծութեան գեղեցիկ թարգմանութիւնը, այն էլ գեղեցիկ թղթի վերաւ, մաքուր տպով և բանաստեղծի բաւական չաջող պատկերով, բայց չի կարելի չը նկատել, որ նոյնքան, եթէ ոչ աւելի, ուշադրութիւն պէտք էր դարձնել և հրատարակութեան բովանդակութեան վերաւ, — աղաւաղել Վերմոնտովի հրաշալի ոտանաւորը կէտադրութեան կամ տառա-սխալով՝ աններելի չանցանք է:

Ահա մեր նկատած տպագրական սխալները: Երկրորդ մաս:

«Նրեկոյեան արդէն ծածկել էր բոլոր թանձր մոսալի օդեղէն քօղով».
դ է, եր, 27):

Պէտք է լինի—«մռալը»:
«Անարիւն սրտումս նորից վառեցաւ
«Անսպասելի կայծը ջերմութեան
դ. ժ. երես 33):

Պէտք է լինի—«անսպասելի»:

«Եւ մերթ քարի պէս մետաքս է ճնշում» (Գլ. ժ. երես 38):

Պէտք է լինի—«միտք»:

«Նա (Աստուած) գբաղած է երկնի « երկրի
Եւ մեզ նալելու ժամանակ չուենի
(Գլ. ժ. երես 38):

Պէտք է լինի—«Նա զբաղած է երկնի, «չ երկրի...»

„ОНЪ ЗАНЯТЪ НЕБОМЪ, НЕ ЗЕМЛЕЙ!“
«Ճակատիցք քեզ արժանաւոր երկնային հրոյ հետքը կը սրբեմ».
(Գլ. ժ. երես 42):

Պէտք է լինի—«ճակատից»:

«Գուցէ չը դիտես, թէ արդեօք: Ինչ է կարճատես կեանքը մարդկային ս ու ի,

Միայն արիւնի նա վրդովմունք է».
(Գլ. ժ. երես 43):

Պէտք է լինի—«մարդկային սէրի»:
Ահա ուսուերէնը՝

„Иль ты не знаешь, что такое Людей минутная любовь?—
Волнение крови молодое!“.

Կէտադրութեան բաղձաթիւ սխալներից մի օրինակ բերենք.

«Վաղուց է միտքս միշտ չփոթւելով
Քաղցր անունի լուում էր ինձ ձայն

Երբ որ գրախոսում երջանիկ էի, իմ համար պակաս դու էիր միայն».
(Գլ. ժ. երես 34):

Աջատեղ երկրորդ տողի վերջում պէտք է միջակէտ լինի, որ հասկացւի, թէ երրորդ տողը կապւած է չորրորդի և ոչ թէ երկրորդի հետ: Զօ չալտնի է թէ տտորակէց

մարդուս կեանքը կարող է կախւած լինել:

Առհասարակ կէտադրութեանը սրբազրիչները պէտք է արհամարհանքով չը վերաբերեն, — „ПОВѢСИТЬ НЕ НАДО, ПОМИЛОВАТЬ“! ստորակէտը տեղափոխելով կարելի է շինել — „ПОВѢСИТЬ, НЕ НАДО ПОМИЛОВАТЬ“!

Անցնենք թարգմանութեանը:

Ինչպէս ասացի կան հաուածներ, որոնց թարգմանութիւնը կարելի է կլաստիկական համարել: Աղղպիսի հաուածների մէջ, մեր կարծիքով, առաջին տեղն է բռնում առաջին մասի ամբողջ է. զլուխը, որ կարող է մրցել բնագրի հետ և որ արժէ արտեղ ամբողջապէս բերել:

«Ակառ է ասողը կէս գիշերային, վկայ են ելքն ու մուտքն արևու, Որ ոչ մի իշխան պարսից աշխարհին»

Չէ տուել համբուր աղղպէս աչերու: Տաք օրերի մէջ, ոչ մի ժամանակ Հով շատրւանը Շահի հարէմում Չէ զովացրել աղղպիսի հասակ Մարգարտանման ցողովը իւր փալուն:

Դեռ ոչ մի անգամ երկրպին ձեռներ Չեն հիւսել աղղպէս գեղեցիկ մաղեր:

Քանի որ զրախաը աշխարհից գնաց, երդում եմ որ զեռ, ոչ մի ժամանակ,

Աղղպէս գեղեցիկ մի կոյս չէ ծաղկած

Հարաուղ կողմի արեգական տակ»: Շատ գեղեցիկ են թարգմանւած առաջին մասում հետևեալ զլուխները:

Գ. սկսած «կեանք, չքեղութիւն».
Ե, Չ, է, ԺԲ, ԺԳ և ԺԶ:

Երկրորդ մասի թարգմանութիւնը ընդհանրապէս աւելի թու է. բայց աղղպի էլ կան հիանալի կտորներ:

Բ. զլուխում անլաջող են միայն վերջին երկու տողը.

«Հրապուրում էր նորան, դէպի իւր կոչում էր նորան... բայց ուր»:

Գ. զլուխը ամբողջապէս լաւ է, բաւական լաւ են Չ և Թ զլուխները:

Ժ. զլուխում կլաստիկական կերպով է թարգմանւած Գեի երդումի սկիզբը մինչև՝

«Եւ քեզ ընտրելով սրբուհի ինձ նոր, Իշխանութիւնս սաքիղ տակ դրի».
և վերջը սկսած՝

«Եւ սպասաւոր իմ հոգիների Բոլոր ամբոխը ոտքդ կը բերեմ».
Նախ քան անլաջող կտորներին

անցնելը, լիչինք, որ թարգմանութեան մէջ պակաս են դանազան զլուխներում հետևեալ տողերը.

Մասն առաջին.
Ա. զլուխ.— Когда объясняя ко-
мета

Улыбкой ласковой привѣта
Любила помѣняться съ нимъ»:

Պէտք է կարծել, որ այս տողերը թարգմանւած են եղել, բայց տպագրութեան մէջ անհոգութեամբ բաց են թողնուել: Աղղպէս կարծելու հիմք է տալիս այն, որ—

«Երբ, Քերտլքէի պէս, էր նա լուսաւոր

Աշխարհի անմեղ բնակարանում.»
Տողերը չ'ունեն իրանց համապատասխան լանգուղ տողեր, որոնցից մէկը, երևի, թարգմանութեան մէջ

վերջանում է (ասողը) գիտաւոր
բանով:

Գ. գլուխ.—վերջին երկու սողը.

«И на челѣ его высокомъ
Не отразилось ничево».

Ժ.Գ. գլուխ.—Են̄ վերջումն
Են̄ քանի մասնումն

Рука на гривѣ замерла».

Երկրորդ մասն.

Ժ. գլուխ.—Եր. 38—«Եւ մերթ
քարի պէս միտքս է ճնշում»... սողից
լետոյ չեն թարգմանւած երկու սող:

«Надеждъ погибшихъ и страстей
Несокрушимый мавзолей!»

Ժ.Գ. գլուխ.—Символь премуд-
рости туманной,

Глубокихъ думъ забытый слѣдъ».

Ժ.Ե. գլուխ.—Պօէմի վերջումն—

«Եւ շատ վաղուց է, որ շիրիմները...
սողից ասալ պահաս են չորս սող.

«Услыша вѣсти въ отдаленѣхъ

О чудномъ храмѣ въ той странѣ,

Съ востока облака однѣ

Спѣшать толпой на поклоненье;»

Թարգմանութեան բոլոր անպաշտ
տեղերը մէկ-մէկ թւել ասելորդ կը
լինի,—կը բերեմ միայն մի քանի

օրինակներ:

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

XI.

„Но презрѣлъ молодой же-
нихъ

Обычай праѣдовъ своихъ“.—

ԺԱ.

«Բայց մատաղ փեսան հեռա-
ցաւ ալմմ

Իւր նախահայրերի սովորութիւ-
նից»:

XV.

„Твоя слеза на трупъ безгласный
Живой росой не упадетъ;

Она лишь взоръ туманитъ ясный,
Ланиты дѣвственныя жжетъ!“

ԺԵ.

(Մի թափեր ցօղերը քո պարզ
աչքերի),

«Գիտկի վերալ անբարբառ ու լուս-
երէք չեն ըն կել նորա կեն-
դանի:

Նորա պարզ աչքեր մթնացնում
են,

Կուսական աչտեր միայն ալրում
են»:

Անպաշտ է թարգմանւած ալլ
զլիւում, մեր կարծիքով,—«На воз-

душномъ океавѣ...“ բառերով սկսող
ամբողջ հրաշալի հատւածը:

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ր Ր Դ

VII.

„И звуки тѣ лились, лились,
Какъ слезы, мѣрно, другъ за
другомъ“;

Է.

«Ձայներն անընդհատ լցւելով
լցան

Մէկ մէկու լեանից արտօսրի նման»:

„И чудо! изъ померкшихъ глазъ
Слеза тяжелая катится...

Понынѣ возлѣ кельи той
Насквозь прожженный виденъ
камень

Слезую жаркою какъ пламень,
Не человѣческою слезой...“!

VIII

„...Съ душой открытой для
добра...“

„...Страхъ неизвѣстности нѣмой“

Ժ. գլխում ամենաուժեղ, պա-
թեալիք տեղերը անլաջող են թարգ-
մանւած, եթէ չը հաշուենք երգումի
սկիզբն ու վերջը, որ առաջ վիշե-
ցինք: Ահա օրինակներ...

„Я тотъ, кого никто не любить,
Но все живущее клянетъ...

Тебѣ принесъ я въ умиленьи
Молитву тихую любви,
Земное первое мученье
И слезы первыя мои.

„Но злобы мрачныя забавы
Не долго правился мнѣ“.

„...За стѣной високой...“

„Оставь же прежнія желанья
И жалкій свѣтъ его судьбѣ...“

«Ես նա եմ ահա...»

XII.

„...Бродилъ съ чугунной доской“.

Մի քանի տողեր սխալ են թարգ-
մանւած: Ահա իմ նկատած սխալ-

I.

„Не зналъ ни страха, ни сом-
нѣнья...“

«Եւ ինչ հրաշք էր, որ աչքիցն աղօտ
Իսկոյն թափեցա՞ն ջերմ արտասուքը.
Եւ մինչև ցալժամոյն իսկ խուցի մօտ
Կալ արտասուքից ալրւած քարը»:

«Մինչև բարութեան հողին նւխ-
րած...»

«Մի ահ ու սարսափ անլաջտ, ան-
մեկին...»

Որ մինչև ցալսօր ոչ ոք չէ
սիրում,

Որ բոլոր աշխարհ անիծա-
նում է...

Բերել եմ ահա խանդաղատագրին
Իմ մեղմսախառն (!) սիրու խոն-
դիրը,

Քեզ արտասուքս բերի առաջին,
Եւ իմ առաջին երկրալին կիրքը»:

«...Բաց տխուր խաղերը չա-
րագործութեան
Երկար ժամանակ ինձ հա-
ճուչ չեղան»

«Բարձր պատի տակ...»

Ճակատագրին թող զու ուրևն
Թշուա աշխարհը, իղձերդ նախ-
կին»:

Ժ.Բ.

«Կոչնակի հետն էր չըջում միա-
սին»:

ները: Առաջին մասում:

Ա.

«Չը գիտէր կասկած, ոչ ոյս չա-
րութեան»:

II.

„И зло наскучило ему...“

Բ.

«Նա չար գործերից զզուեցաւ
խսկոյն...»

III.

„И глубоко внизу чертѣя,
Какъ трещина, жилище змѣя,
Вился излучистый Дарьялъ.“

Գ.

«Եւ ահա Դարեալ զետը զալա-
րուն,
Մի օձաբնակ ճեղքածքի նման,
Լեռների ներքե խորին անդդում
Ներկում է սև-սև մի շերտիկ
երկայն»:

Դարեալը կիրճ է և ոչ թէ գետ.
Դարեալի մէջով հոսում է Տերեկ
գետը, որի նկարագրութիւնը խսկոյն
հետևում է այդ տողերին:

«Փաչլուն ալիքները նկատում
էին...»:

„Слѣдя мелькающія волны“

Տերեկը ալգտեղ «փաչլուն» չի.
мелькать կը նշանակի աչքի առա-
ջից արագ-արագ անցնել:

IV

„Роскошной Грузин долины
Ковромъ раскинулись вдали“.

Դ.

«Լայն հովիտները պերճ վրաս-
տանի
Բնութեան չքեղ գորգով ծած-
կեցան»:

VI

То вдругъ помчится легче пяти-
цы...“.

Զ.

«Թռչունից թեթև վեր վաչր է
ստանում...»:

« Լեզգիների մէջ կենջ կողմից վեր
վաչր թռչելը չի գովում, այլ, ընդ-

հակառակը, պահանջում է որ պարը
սահուն լինի»:

VIII

„Въ послѣдній разъ она плясала...
Увы! завтра ожидала
Ее, наследницу Гудала,
Свободы рѣзвое дитя,
Судьба печальная рабыни...“

Ը.

«Հուշալի ժառանգ մի հատիկ
գուտորը
Վերջին անգամն էր, աւանդ, կա-
քաւում,
Ազատութեան առողջ մանուկը
Սպասում էր նորան վաղ առա-
ւօտուն.
Սպասում էր նորան... ողբալի
օրհաս...»:

<p>Հայցական ДИТЯ (մանուկին) իբր թէ «աղատութեան առողջ մա- թարգմանիչը կարծել է ուղղական նուկը» ոչ թէ Թամարի համար է ա- (մանուկը) և ալնպէս է դուրս եկել ւած, ալ նորա փեսացուի:</p>
--

XIV

ԺԴ.

<p>«Хранили слѣдъ тревоги бранной Морщины смутлаго чела .</p>	<p>«Որի խորշոմած թիւագուն դէմքը Չհացնում էր սարսափանք ու վախ»:</p>
---	--

<p>Մի քիչ առաջ (գլ. ԺԱ) հեղի- նակը գովել էր իշխանին—«իշխանն անվեհեր», «արժւի նման». պարզ է,</p>	<p>որ тревога բառը սխալ է թարգ- մանւած:</p>
---	---

Ե Ր Կ Ր Ո Ր Գ Մ Ա Ս Ո Ւ Մ

<p>Գ. զլխում пороѣ (երբեմն) թարգ-</p>	<p>մանած է—միշտ:</p>
---------------------------------------	----------------------

VII.

Է.

<p>«Она подвняль взоръ: ея окно, Озарено лампадой, блещеть; Кого-то ждетъ она давно .</p>	<p>«Տեսաւ, որ կուսի սիրուն աչ- քերը Կանթեղի լուսից փալատակում են, Եւ կարծես նոքա մինի գա- լուտը Անհամբերութեամբ վաղուց սպա- տում են»:</p>
---	---

<p>Հեղինակն ասում է, որ Գեը չըջելով պարսպի մօտ տեսնում էր կուսի լուսամուտը, իսկ թարգմանիչը ստիպում է նրան տեսնել կուսի աչ-</p>	<p>քերը, որ նա դժւար թէ կարողա- նար տեսնել: Բացի դրանից՝ ինչու «կարծես»:</p>
--	--

X.

Ժ.

<p>«И тайно вдругъ возненавидѣль Безсмертіе и власть мою... ...Не жить, какъ ты, мнѣ стало больно... И страшно—розно жить съ тобой. ...И я людьми не долго правиль, Грѣху не долго ихъ училь; Все благородное безславиль</p>	<p>«Յանկարծ ես իմ մէջ կարծես ատեցի Իմ անմահութիւն ու իշխանու- թիւնը: Չապրելն իմ համար ցաւալի թւաւ: Ապրելն առանց քո անեղ երկցաւ: ...Իսկ մարդոց վերայ սակաւ իշ- խեցի,</p>
--	---

И все прекрасное хулилъ,
 Не долго... Пламень чистой
 вѣры
 Легко навѣкъ я залилъ въ нихъ...
 ...Надежда есть: ждетъ пра-
 вый судъ;
 Простить онъ можетъ, хотъ
 осудить!
 ...О, пощади!... какая слава!..
 На что тебѣ душа моя!
 ..Какъ здѣсь, ихъ дѣйстви-
 тельное ложе...
 Не смято смертнаго рукой!»...

Սակաւ ուսուցի նոցա մեղք գոր-
 ծել,
 Շատ ուշ ժամանակ բարին
 ատեցի,
 Սիրուն էակները արհա-
 մարհեցի:
 Սակալն հեշտութեամբ նոցա
 մէջ լցի!
 Մաքուր հաւատոյ բոցը չաւի-
 տեան...
 ...Յոյս կալ, կը լինի արդար դա-
 տաստան,
 Թէպէտ և անշուշտ կը դատա-
 պարտէ,
 Գոնեա կարող է ներել, թէ կամի:
 ...Ոհ, խնայիր ինձ... ինչ վառք
 ինձ համար,
 Վեղ ինչ է պիտոյ իմ հոգին
 թշւառ...
 Վանի ալստեղ են, դեռ ոչ մի
 անգամ
 Մահկանացուի ձեռք չէ մօտեցած
 Անկողիններին նոցա կուսական»...

«Չ'ապրել» կը նշանակի մեռնել, իսկ «չ'ապրել քեզ նման» կը նշանակի—չ'ապրել աջպէս ինչպէս դու ես ապրում:—«Ուշ ժամանակ» և «կարճ ժամանակ» բոլորովին տարբեր մտքեր են արտապատում: «Սակալն» միտքը փոխում է. — Գեռ նրա համար է կարճ ժամանակ ազգ գովելի դործերով զբաղել, որ ովհետև շատ հեշտութեամբ է հանգցրել (և ոչ թէ «լցրել») մարդկանց մէջ հաւատի բոցը:—«Սրբար դատաստանը» («անշուշտ դատապարտել») չի կարող հէնց ալն պատճառով, որ արդար է:—Քամարի հոգին գոխքի բաժին դարձնելը, եթէ վառք համարէր, կարող

էր համարել Գեռ համար և ոչ մի ղէպքում Քամարի համար:—Քամարը Գեռից հարցնում է, թէ ինչով է իւր հոգին աւելի թանկ նրա համար քան ուրիշ կոյսերի հոգիները, որոնց անկողիններին, ինչպէս իւր անկողինին («ինչպէս այստեղ»), դեռ ոչ մի մահկանացուի ձեռք չէ մօտեցած. իսկ թարգմանութիւնից աջպէս է հասկացում, որ Քամարը խօսում է իւր վանքի կոյսերի մասին և ալն էլ աջպիսի կոյսերի, որոնց անկողին, քանի վանքումն են (իսկ առանջ) դեռ ոչ մի անգամ մահկանացուի ձեռք չէ մօտեցած:

XV.

ԺԵ.

«Съ одеждой брэнною
земли
Оковы зла съ нея ниспали».

«Թամարի վրայից չարի կապանքը
Բնկան հագուստի հետ ի
մխախն»:

Խօսքը («հողեղէն հագուստի») աշխնքն մարմնի մասին է և ոչ թէ հասարակ հագուստի:

Թարգմանութեան ալդ պակասութիւններին պէտք է աւելացնել և ալն, որ «ինչ, ահա, իսկոյն, արդէն, կարծես» և ալն աղպլիսի խօսքեր աւելորդ գործ են անուամ ոտը կամ չանգը տեղը բերելու համար:

Մի պակասութիւն էլ ունի ալժմ թարգմանութիւնը, որի վերաբերմամբ թարգմանիչը ամենին մեղաւոր չէ: Թարգմանութեան մէջ չաճախ պատահում են հնացած, զրաքառ ձևեր, բառեր, որոնք ալժմ արիսարիւմ են և ականջ են ծակում, օրինակի համար. «Անցանել, իջանել, հարկանել, հեծանել, տեսանել, մտանելիս արեուն ի մալր, անիծանել, հասանել, թողուլ, զգնուլ, թուռցանում, դարձոց, կուրացոյց, պիտու է, աղօթք առնել, առաջինքը, դաշնակ (թրի մտքով), վէս, կիրք (տանջանքի մտքով), եռանդուն (տաքի մտքով) և ալն:

Ահա Սատաթեանի թարգմանութեան պակասութիւնները, որոնք աւելի քան հաւասարակչուում են նորա հաղազիւտ արժանաւորութիւններով:

Վերջացնելով մեր նկատողութիւնը պէտք է ասենք, որ ընդհանրապէս խօսելով ալդ թարգմանութեան գլխաւոր արժանաւորութիւնն է ալն, որ թարգմանիչը ամ-

բողջ պօէմում պահպանել է հեղինակի ոճը, հաւատարիմ է մնացել բնագրին առանց բառացի թարգմանութեան ծայրաչեղութեան հասնելու և միևնույն ժամանակ զրել է բուն հայկական ոճով: Պօէմը թարգմանութեան մէջ ընթերցողի վերաջնոյն սպաւորութիւնն է գործում, ինչ որ բնագրում, եթէ չը հաշւենք մի քանի հատածներ, որ թարգմանիչը չի կարողացել ալն ուժով արտայայտել, որ չատուկ է Վերմոնտովին: Ալդ ցաւալի է մանաւանդ ալն պատճառով, որ ոչժը Վերմոնտովի մեծ տաղանդի բնորոշ չատկութիւնն է: Եթէ Պուշկինի գրածքներում ընթերցողին գրաւում է պատկերների գեղեցկութիւնը, Վերմոնտովի բանաստեղծութիւնները կախարդում են նրան վեհ (գրանդիօզ) պատկերներով և բուն զգացմունքներով: Գրան համապատասխան տարբերում է և նրանց տաղանդի արտաքին կողմը, — Վերմոնտովի ոտանաւորը ալնքան գողարիկ չէ որքան Պուշկինինը, բայց աւելի զօրեղ է:

Առհասարակ կարելի է նկատել, որ Սատաթեանը աւելի լաւ է թարգմանել ալն կտորները, ուր ոչ ալնքան ուժ, որքան գեղեցկութիւնը նշանակութիւն ունի: Եթէ հաշտուենք նրա հետ, որ Սատաթեանի ոտանաւորը չունի ալն ուժը, որ չատուկ է Վերմոնտովին, պէտք է ասենք, որ տաղանդի կողմից Սատաթեանը բոլո-

րովին արժանաւոր թարգմանիչ է
 լերմոնտովին: Եւ խկապէս, մարդ
 զարմանում է կարդալով Ստտա-
 թեանի թարգմանութիւնը, — ճիղի սչ
 մի հետք: Ոտանաւորը անբան սա-
 հուն և աղտոտ է, որ, կարծէք, թարգ-
 մանչի համար ամենաթեթիւ բանն է
 եղել որոշեալ մտքերի ու պատկեր-
 ների արտապատութիւնը տաղաչա-
 փութեան պահանջներին չարմարեց-
 նել: Գեռ աւելի, կարծէք նա ամե-
 նեին չի էլ աշխատել չարմարեցնել,
 այլ հէնց ինքն իրան է կազմել
 ոտանաւորը:

Այս բոլորը աչքի առաջ ունենա-

լով, մեր կարծիքով, մեծ համարձա-
 կութիւն կը լինի ձեռնարկել Գեռի
 երկրորդ թարգմանութեանը, համար-
 ձակութիւն, որ կարող է արդարաց-
 նել միազն կատարեալ չաջողութիւնը:
 Բայց այդ բաւական անհաւանական
 է: Մեր կարծիքով, աւելի լաւ կը
 լինէր, եթէ մեր երիտասարդ բանա-
 ստեղծներից մէկը խմբապետ Ստտա-
 թեանի թարգմանութեան անչաջող
 մասերը և փոփոխէր հնացած ձևերը:
 Ի հարկէ խմբապետը տաղանդի թէ
 աստիճանի և թէ բնաւորութեան
 կողմից բաւական մօտ պէտք է լինի
 Ստտաթեանին:

ՆՈՐ ՍՏԱՅԻԱԾ ԳՐԳԵՐ

- 1) А-въ Т.—Семейная сцена, этюдъ изъ армянск. провинціальной жизни. Шуша, Тиф. Арм. Духовн. вѣдом., 1891 թ., գինն է 5 կոպ.:
- 2) ՀԻԻԳՕ-ից, Վիկտոր.—Նղբալը Եղբոր դէմ: Փիֆլ., 1891 թ., տպ. Արոր Տ. Նաղարեանի գինն է 7 կոպ.:
- 3) ԼՈՒՆԿԵԻԻԶ, Վ.—Նրկրաչարժ և հրաբուխ: Ժողովրդ. ընթերցաթեան համար: Փիֆլ., տպ. Արոր Տ. Նաղարեանի, 1881 թ., գինն է 6 կ.:
- 4) ԳՈԼԴԵՆԲԵՐԳ-ից փոխադրեց Գր. Նրդնկեան.—Թւարանական խնդիրներ և օրինակներ, տարրական դասընթացք: Մասն առաջին, խնդիրներ և օրին. առաջին հարևրեակի թւերով և ամենահասարակ կոտորակներով: Ա և Բ տարի: Հրատարակութիւն Կենդրոնական Գրավաճառանոցի: Փիֆլիս, տպ. Մ. Վարդանեանց, գինն է 30 կոպ.:
- 5) ԱԼԼԻՍԱՆՆԵԱՆՅ, ալրի Մարգարիտ.—Հակական գեղադրութիւն (Գեղագիր ալրով):—Կենսագրութիւնով հեղինակի, գրած պ. Լէօից: Փիֆլիս, տպարան Արոր Տ. Նաղարեանցի: 1891 թ., գինն է 2 ռուբլի:
- 6) ԳՈԳՈԼ.—Տարաս Բուլբա (համառօտ փոխադրութիւն): Շուշի, տպ: Մ. Մահտեսի—Յակօրեանցի, 1891 թ., գինն է 5 կոպ.:
- 7) Եժ, Տ.—Լուսադիմին (թարգմանութիւն): Հրատարակութիւն Ս. Պետերբուրգի հազ ուսանողների, Մոսկւա, տպ. Մ. Բարխուդարեանի, 1891 թ., գինն է 1 ռուբլի:
- 8) ЛЕРМОНТОВЪ, М. Ю — „Демонъ“. изданіе ред. иллюстр. журналовъ „Агбюръ и Таразъ“. Тифлисъ, тип. Ароръ Т. Назарьянца, 1891 թ., գինն է 30 կոպ.:
- 9) ՋանՊջոլլո, Յոնց.— «Լայնջը». Յրոտյ ԵսյքՅոնս, Օջոլոնո, ԵտաՅՅ. Ձ. Պահածոնս, 1891 թ.
- 10) ԱՐԱՍԻԱՆՆԵԱՆՅ, ԱԻԵՏԻՔ.—«Արևելեան ազգերի հին պատմութիւնը»: Փիֆլիս, տպ. Ռոտինեանցի, 1891 թ., գինն է 1 ռուբլի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՍՍԻԱՅ ՔՐՈՆԻԿ

ԿՈՆԴԱԿԸ ՏԵՂԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԽՆԴՐՈՒՄ: —ԵՐԳՄԱՆ ԽՆԴԻՐԸ:

Կաթողիկոսական տեղակալի իրաւասութեան սահմանների խնդիրը իւր ամենաէական մասերում արդէն վճռւած պէտք է համարել, գոնէ որքանով որ այդ խնդիրը կարևորութիւն է ներկայացնում ներկալ ժամանակում: Պրոֆէսոր Իւրի Գամբարեանի լօղւածը, տպւած տեղական «Նովոն Օբոզրենիե» ուս թերթում համար 2606 եկաւ վկայելու խնդրի նախընթաց լօղւածումս արած քննութեան տեսակէտների և արած եղրակացութիւնների ճշդութիւնը:

Պրոֆ. Գամբարեանի լօղւածը, նոր նիւթ չը տալով տեղակալական խնդրի մասին, ներկայացնում է մի ուրիշ հետաքրքրութիւն: Նա մի փալտն դաս տւեց մեր տեղական մամուլի արողիցիաներով գործող մասին, թէ ինչպէս կարելի է և պէտք է լաւ դատի սլաշապանութիւնը կապել մտածողութեան գիտնական խտտութեան հետ մի կողմից, և մանաւանդ անաչառութեան հետ զէպի անձնաւորութիւնները՝ միւս կողմից: Նշանակւած լինելով «Արձագանքի» համար, որ լարդելի գիտնականին իւր դատի կողմնակից էր համարում, նոյն այդ զիտնականը դաս տւեց «Արձագանքին», հասկացնելով որ այլ բան է գատելեղած նիւթերի հիման վերայ, և այլ բան՝ գատել «Արձագանքի» մարդկանց բերանացի վկայութիւնների հիման վերայ: Եւ զեռ «Արձագանքը»,—տրտնջում է թի ուսուսաց իրաւագէտը շեղւել է իւր սկզբնական համոզմունքից!

Տեղակալական խնդիրը նոր լուսարանութեան կարօտ չը լինելով, աջուամենաջիւ տեղիք տւեց հետազօտութեան, թէ որքան ձիւդ է թէ կաթողիկոսները կոնզակներով նշանակել են տեղակալներ: Ընթերցողները արդէն գիտեն ևս ինչ նշանակութիւն կամ տալիս այդ զէպքում, քանի որ

Ներկայ սահմանադրութիւնով տեղակալի անձնատրութիւնը անպատճառ կապւած է Մինոզի ճախանդամի անձնաւորութեան հետ: Աչնպէս որ եթէ իսկապէս սպալիսի կոնդակներ զուլթիւն էլ ունենան, խնդրի լուծումը դրականապէս ոչնչով չէր վախել: Ահա ինչու տեղակալի իրաւունքների խնդիրը ես հարկ համարեցի միանգամայն բաժանել կոնդակների խնդրից, կոնդակներ, որոնց զուլթեան վերայ աչնքան պնդում էին ալժմեալ տեղակալ սրբ. Երեմիային տեղակալ չը ճանաչողները: Բայց չը ճալած աչն բանին, որ ես ոչինչ նշանակութիւն չէի տալիս կոնդակներին այս գէպքում, հարկ համարեցի աչնու ամենաչիւ անցեալ չօղւածումս կառկած ել կոնդակների զուլթեան մասին:

Բանից դուրս եկաւ, որ ես իրաւունք ունէի կոնդակների զուլթիւնը կասկածի տակ կենթարկելու: Այդ մտքով արգարե մի թէ երկու չօղւածներ լրջ տեսան նաև սարբերական մամուլի մէջ, բայց ամենից արժանին է մի ձեւապիր գրւածք, որ այս բոպէին ձեռքիս տակն է ե որը սկսում է ալպէս.

«Նս քրքրեցի բոլոր աչն պաշտօնական թղթերը, որ կարողացալ ձեռք բերել: 1836-ից զէսը, աչն է՝ Պոլոթենիայի հաստատուելուց շետու, իւրաքանչիւր կաթողիկոսի մահից շետու նշանակել է Տեղակալ միշտ ե հանապաղ, առանց որ ե է բացառութեան, Մինոզի օրադրութեամբ (ПОСТАНОВЛЕНИЕ): Տեղակալ եղել է միշտ ե սուանց բացառութեան՝ Լջմիածնում ներկայ եղող Մինոզի անդամներից աւագագոյնը: Յովհաննէս, Ներսէս, Մասիէոս, Գէորգ կաթողիկոսների մահից շետու եղել են տեղակալներ՝ Բարսեղ, Ղուկաս, Աւրանեանց Յովհաննէս, Վեհապետեան Գէորգ, Միրտիչ Բարամեանց ե Մակար, դարձեալ Միրտիչ, դարձեալ Մակար ե երբորդ անգամ Միրտիչ եպիսկոպոս կամ արքեպիսկոպոսները: Ոչ մի կոնդակի շիշատակութիւն չը կալ, ալ իւրաքանչիւր անգամ տեղակալը եղել է Մինոզի առանձին օրադրութեամբ: Բոլոր տեղակալները կամ տեղապահները Մինոզում կրել են «Տեղակալ Ասենապետի» արտորտը, իսկ Մինոզից դուրս՝ «Տեղակալ, Տեղապահ, Տեղակալ Մալր-Աթուտ, կաթողիկոսական կամ Հտրապետական Տեղակալ» արտորտները, առանց խորութեան, թէ պաշտօնական ե թէ ոչ պաշտօնական դրութիւնների մէջ:

Հէնց որ 1882 թ-ին մեռնում է Գէորգ կաթողիկոսը, եթէ Մակարի իբր թէ ունեցած կոնդակը զուլթիւն ունենար, պէտք է որ ճա լինէր անմիջապէս Տեղակալ: Բայց ինչ կնք տեսնում: Իսկոչն Մինոզում օրադրութեամբ Տեղակալ է հրատարակում Միրտիչ արքեպիսկոպոս Բարամեանց, Մինոզի աւագագոյն անգամը: Բայց Գէորգ կաթողիկոսը զեւ կենդանութեան ժամանակ առաջարկել էր Մակարին իբրև Մինոզի անգամ: Հէնց որ Մակարի Մինոզի անգամութեան հաստատութիւնը դալիս է, Մակարի իբրև ստադպոյն, աւելի աւտոք քան թէ Միրտիչ արքեպիսկոպոսը, գալով Լջմիածին, գասնում է Տեղակալ «օրադրութեամբ Մինոզի»:

որի մէջ չի առած թէ Մակարը Տեղակալ է, որովհետեւ կոնդակ ունի,— կոնդակի փշատակութիւն չը կազ ոչ պաշտօնական քաղաքացիութեամբ (Արարատ) ամսագրի) և ոչ օրագրութեան մէջ,— ալ միայն որովհետեւ ազգէս է պահանջում Պալաթներին, Վրալ է համարում Արեքտանդր III կառներ թագադրութեան հանդէսը, Մակարը Մալր-Աթուրի կողմից իրրի ներկայացուցիչ գնում է Մոսկաւ Աինոզը իսկոյն ժողովում է և նորից օրագրութեամբ Տեղակալ է ճանաչում ներկալ աւագագոյն անդամին՝ Վերտիչ արքայականութիւն: Մակարը վերադառնում է Մոսկաւից, և ահա Աինոզը նորից օրագրութիւն է կազմում, որով տեղակալութիւնը անցնում է Մակարին: Ընտրութիւններից լատ, երբ Ներսէս Պատրիարքը ընտրում է սուսիին կաթողիկոսացու, Մակարը... թողնում է Էջմիածին և գնում իւր թիւնը՝ Քիչնէ: Ահա Աինոզը նորից ստիպւած է օրագրութիւն կազմել և տեղակալութիւնը լանձնել Վերտիչ արքայ: Բարամեանցին, որ և մնում է Տեղակալ մինչև Մակարի ընտրելը և օժելը: Ահա այս տեղակալութեան ժամանակ է, որ Վերտիչ արքայ. արձակում է Նահապետեանին ձեռնարանի տեսչութիւնից և Մակարը իրաւունք չը համարեց բողոքել:

Կան զգացմունքներ որ անհատական են, կան որ ազգային են, կան որ կրօնական են, կան որ դուա ճշմարտասիրութեան զգացմունքներ են: Այլ բոլոր տեսակի զգացմունքները խառն են այն բանի մէջ, որ ես կ'անուանեմ Խզմիրեան գործ:

Եղեղութիւնը սա է: Թիֆլիսի նահանգական դատարանում լուծիս 12-ին քննուած էր մի գործ, որի համար կանչւած էր իւր վիպի ի միջի ալոց նախ պ. Գրիգոր Խզմիրեանցը: Երգեցնելու համար ներկալ էր հալ քահանան, որին, սակայն, նախագահը առաջարկեց երգեցնել հալ-լուստարչական վիպիներին ուսուերէն լեզուով: Քահանան առարկեց թէ հալոց բարձրագոյն հոգևոր իշխանութեան հրամանով արգելւած է հալ քահանային երգեցնել ուրիշ լեզուով քան հայերէն: Պր. Բըկովը ալ պատճառով հետապրեց հալ քահանային և առաջարկեց հալ վիպիներին՝ երգել իւր, սոյն է՝ նախագահի մօտ, օրէնքով սահմանւած կարգով: Պր. Խզմիրեանցը առարկեց թէ, օրէնքով, ինքը իրաւունք ունի առաջարկել, որ հետապրած քահանայի տեղը կանչելի մի ուրիշ քահանայ իւր դաւանութեան, և որ ալ պատճառով նա հրամարում է նախագահի մօտ երգել: Նախագահը պ. Խզմիրեանցի ալ վարմունքը ընդունում է իրրի անհնազանդութիւն նախագահի կարգադրութեանը, և ալ մարով դանդաւ է լարուցանում դատարանի կողմից հալարար դատարարի մօտ պ. Խզմիրեանցի դէմ:

Եւ ահա լուծիս 10-ին Թիֆլիսի III-րդ վիճակի հալարար դատարանում քննուած էր պ. Գր. Խզմիրեանցի գործը, ներկայութեամբ ահազին բաղմութեան:

Ինչի վերադ էր հիմնում դատախազը իւր մեղադրանքը պ. Իզմիրեանցի դէմ: Պատժական օրինադրքի 29-երորդ լօղւածի վերադ: Բայց բանից զուրս եկաւ որ այդ լօղւածը խօսում է միայն անհնազանդութեան մասին կառավարչական և ոստիկանական իշխանութիւնների կարգադրութիւնների դէմ: Մինչդեռ դատարանական իշխանութիւնը ոչ կառավարչական և ոչ էլ ոստիկանական իշխանութիւն է: Եւ իւօք, Ռուսաց օրէնսդրքի 2-րդ հատորի 3-րդ մասի 12-րդ լօղւածը ասում է թէ ռուսաց պետութեան մէջ իշխանութիւնը բաժանուում է երեքի՝ կառավարչական (правительственная власть), ոստիկանական (полицейская власть) և դատարանական (судебная власть) իշխանութիւնների¹): Իզմիրեանցը, անհնազանդ գտնւելով դատարանական իշխանութեան, չէր կարող ուրեմն դատուել պատժական օրինադրքի 29-րդ լօղւածի հիման վերադ, որը խօսում է միմիայն կառավարչական ու ոստիկանական օրինական (ЗАКОННЫЙ) կարգադրութիւնների դէմ ցոյց տւած անհնազանդութեան մասին:

Իսկ այն լօղւածը, որը խօսում է երգման մասին, է՝ քրէական դատավարութեան կանոնադրութեան 715-երորդ լօղւածը (Статья 715 устава уголовного судопроизводства).

Ի՞նչու վերը բերած լօղւածները ի պաշտպանութիւն պ. Իզմիրեանցի դատի, վերցրած են նոյն ինքն պ. Իզմիրեանցի խօսքերից, որ նա արտասանեց հաշտարար դատաւորի դահլիճում չուլիսի 10-ի նիստում: Եւ չը նաչւած որ պ. Իզմիրեանցը այնու ամենայնիւ մեղաւոր ճանաչւեց հաշտարար դատաւորի օղնականի կողմից և դատապարտւեց 25 րուբլի տուգանքի, բայց նորա փաստաբանութիւնը այնու ամենայնիւ համոզեցուցիչ էր բոլոր նորա լսողների համար և ընթերցողների համար այն բոլոր ռուս թէ հայ թերթերի, որոնք տպւեցին այդ նիստի տրձանագրութիւնը:

Մի շատ բնակորոյ միջնադէպը լուսաբանեց ամբողջ գործի տենդենցիան: Պր. Իզմիրեանցը, իւր փաստաբանութիւնը սկսելուց առաջ, պահանջեց որ հաշտարար դատաւորը կարդալ նահանգական դատարանում պատահած դէպքի արձանագրութիւնը: Եւ նա կարդաց: Այդ արձանագրութեան մէջ աււած է, թէ պ. Իզմիրեանցը, մերժելով դատարանի նախադահլի կողմից երդումն ընդունելու, պահանջեց, որ նախագահը հրաւիրէ մի այլ քահանայ, որպէս զի նորանից, հայ քահանայից՝ ռուսերէն երդումն ընդունէ:

Պարոն Իզմիրեանցը բողոքեց դորա դէմ, ասելով թէ նա առաջարկել է նախագահին, որ եթէ սա կամենում է, հրաւիրէ մի այլ քահանայի:

1) Նկատենք, որ իշխանութիւնների այդ բաժանումը, որի անհրաժեշտութիւնը փայլուն կերպով ցոյց տւեց XVIII-րդ դարու հւնչակաւոր հեղինակ Մոնտեսքիտին, մէկն է այն էական յաւանջութիւններից, որ իրավորեւ են եւրոպական պետութիւնները:

որ նորանից երգումն ընդունէ, բայց ոչ թէ ուսերէն, այլ հալերէն լեզուով: Պր. Իզմիրեանցի այդ խօսքերի վերայ՝ հաշտարար դատաւորը վրայ բերեց թէ՛ աչգ հանգամանքը գործի համար էական նշանակութիւն չի կարող ունենալ (обстоятельство это для дѣла существовавшаго значенія имѣть не можетъ):

Յալտնի է թէ հանգուցեալ Հալրապետը, Մակար կաթողիկոսը ինչ հրաման էր տուել ըրոր հալ-լուսաւորչական քահանաներին երգման մասին, իւր մահից քիչ ժամանակ առաջ: Նա հրամայել էր որ հալոց քահանաները դատարաններում հալ վկաներին երգեցնեն հալերէն լեզուով, թէ չէ՛ այդ քահանաները կարգալուծ կ'անւեն:

Լրագրական քննադատութիւնը խնդրի մեր տեղական ամբողջ մամուլի մէջ՝ ռակալն թէ հալ թէ ուս՝ ընդունեց բանակուել ձև «Մշակ»-ի խմբագիր պ. Արծրունու և մի ինչ որ պ. Տոկարսկու մէջ, մէկը «Մշակ» լրագրում, միւսը՝ պաշտօնական «Վաւկազ» ուսւ լրագրի ոչ-պաշտօնական մասում: Ամենքին սակալն պարզ էր, որ Տոկարսկու գրութիւնը պէտք էր ընդունել իբր մի փորձ՝ եթէ ոչ արդարացնել նահանգական դատարանի վարմունքը Իզմիրեանցի դէմ օրէնքների հիման վերայ, դէթ ազատել այդ վարմունքի տենդենցիան, նորա ամենքի համար լաւ տեսանելի աստաւը համակրելի գոյներով դուրս բերելով:

Իբր թէ ինչ հարկ կալ որ լուսաւորչականը հալերէն երգւի իւր քահանալի մօտ, եթէ երկուսն էլ գիտեն ուսերէն լեզուն, քանի որ երգումը (իբր թէ) կրօնական արարողութիւն չէ, ալլ մեծ մասամբ քաղաքացիական ակտ է (гражданскій актъ): Կարծես եթէ քաղաքացիական լինի մի գործողութիւն, ուրեմն անհրաժեշտ հարկ կալ այդ գործողութիւնը կապել ուսաց լեզւի հետ, և հալերէն լեզուով կատարած գործողութիւնը իբր կը կորցնի իւր քաղաքացիական բնաւորութիւնը: Իբր թէ հալերէն, վրացերէն, թուրքերէն արտասանած խօսքը կը լինի ոչ քաղաքացիական, բայց եթէ նոյն խօսքը արտասանելի ուսերէնով՝ նա հէնց դորանով կը դառնալ քաղաքացիական:

Խնդիրը ինքն ըստ ինքեան շատ կարօտ է պարզ բացատրութիւնների, որովհետև մենք ամենքս հետաքրքրւած ենք ալն մի բանում, որ երկրիս մէջ արդարագատութիւնը զո՛չ չը գնալ ծուռ հասկացած սկզբունքների և կամ զո՛չ չը գնալ չօղուտ ալնալիսի շահերի, որոնք ոչինչ գործ չունին արդարագատութեան հետ:

Արդարագատութիւնը միմիալն մի միջոց ունի իւր գործը կատարելու համար—ձշմարտութիւն իմանալը: Արդարագատութիւնը չի ճանաչում ոչ բացառիկ կրօն, ոչ բացառիկ լեզու, ոչ բացառիկ ազգութիւն: Ըշմարտութիւնը երեան հանելու համար՝ նա ամեն միջոցի դիմում է, բացի ակնալտնի անբարոյական և կամ անբարոյականացնող և մարդկալին արժանապատուութեանը հակառակ միջոցներից: Ըշմարտութիւնը խօստովանացնելու համար՝

կարելի է մէկին միայն հարց տալ—և դա բաւական կարող է լինել. միւսից ճշմարտութիւնը դուրս կորզելու համար բաւական չէ միայն հարց տալ, այլ նորանից պէտք է պահանջել որ աղնիւ խօսք տալ. երբորդից հարկ կալ պահանջելու, որ իւր ծնողները արեւով կամ գերեզմանով երզէ և երեսը խաչակնքէ. չորրորդին այդ բոլորն էլ բաւական չէ. նորան հարկաւոր է մի աւելի ևս խիստ փորձութեան ենթարկել: Եւ այսպիսով անապտել են, որ մարդկութեան անապին մեծամասնութեան համար այդ ամենաարմատական միջոցը՝ քահանայի առջև, խաչով-աւետարանով ու Աստուծու անեղ դատաստանի անուշով երզուելն է: Դա կրօնական երզումն է, որ ընդունել է նաև ուսուսաց օրէնսդրութիւնը բոլոր այն մարդկանց համար, որոնց կրօնը կամ եկեղեցին ընդունում է երզումը իբր սրբութիւն:

Արդ, հալոց լուսաւորչական Եկեղեցին ընդունում է երզումը, և ինչպէս է նա ընդունում.—միմիայն այն ձևով, ինչպէս այդ հաստատու են այդ Եկեղեցու պետերը՝ կաթողիկոսները, համաձայն այդ Եկեղեցու աւանդական կամ օրինական կարգերին:

Այդ ոչինչ չի նշանակում, եթէ հալոց լիզուով կատարուող երզումը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի թարգմանութիւն ուսերէնից: Բայց դա մի թարգմանութիւն է, որը ընդունել է հալոց լուսաւորչական Եկեղեցին: Այդ է գլխաւորը, որովհետև այդ հանգամանքն է գրաւականը, որ այդ երզման մէջ չկալ ոչ մի խօսք, որը ընդգէմ լինէր Հայաստանեայց Եկեղեցու վարդապետութեան, որն և դաւանում է հալ լուսաւորչականը: Թէև մի թարգմանութիւն է նա, բայց նա հալ լուսաւորչականից ընդունում է ոչ որպէս ուսուսաց կրօնական երզում, այլ հալ լուսաւորչականի կրօնական երզում, իւր սեպհականը և ոչ օտարինը:

Նկատեցէք որ երզումն միմիայն կրօնական կարող է լինել: Նրբատում են երզումն, էլ հարկաւոր չէ աւելացնել կրօնական անականը, որովհետև ոչ-կրօնական երզումն չի կարող լինել հէնց այնպէս, ինչպէս չի կարող լինել ոչ կրօնական մկրտութիւն: Կարելի է վերացնել երզումն, բայց երզումը աշխարհական դարձնել չի կարելի: Աշխարհական երզումն չկալ: Նրդուել խօսքը մի տերմին է, որի չատուկ նշանակութիւնը խօսքի հետ կապւած կրօնական ծիսակատարութիւններն են: Նման քարոզ խօսքին, որը ընդունւած է ասել միմիայն այն ճառերի մասին, որ արտասանում են հողերականները, նիւթը աւետարանից վերցրած լինելով: Աշխարհական մարդը կարող է քարոզ կարգալ, բայց աշխարհական քարոզ մի աբսուրդ է, անմտութիւն է: Աշխարհական քարոզ չկալ և չի կարող լինել, որպէս չի կարող լինել աշխարհական երզումն, թէև աշխարհական մարդը կարող է նաև երզուել:

Ինչ միտք ունի ներկալ խնդրի համար այն, թէ երզման մէջ քաղաքացիական տարր կալ և թէկուր թէ երզման մէջ գերակշիռ է քաղաքացիական տարրը: Խնդիրը սա է թէ երզումը ինքը կրօնական է թէ ոչ,

Թէ չէ պսակի խորհուրդի մէջն էլ կալ քաղաքացիական տարր. բայց կարող է լինել արդեօք քաղաքացիական կամ աշխարհական պսակ? Ոչ երբէք: Պսակեւելը կրօնական արարողութիւն է և երբէք պսակեւել չի կարելի աշխարհական ձևով: Կարելի է միայն ամուսնանալ քաղաքացիական ձևով: Կարելի է վերացնել պսակը, բայց աշխարհականացնել նորան չի կարելի: Քաղաքական ամուսնութիւնը նոյնքան չարգելի է որքան և կրօնականը, բայց պսակի խորհուրդը միմիայն կրօնական ձև է պահանջում և ոչ աշխարհական: Նոյնն է և երդումը, որ իւր ձևի համար միայն կրօնական է: Խլեցէք ձեռք—նա դադարում է կրօնական լինելուց, և նա դադարում է երդում կոչելուց: Մեղանում օրհնում են և տուներ, և առանձին բնակարանը, և մրգերը, երբ նորա սկսում են հասունանալ. կարելի է օրհնել տալ անգամ առանձին գործողութիւններ կամ գործեր, որպէս մի գործի սկզբնաւորութիւն՝ լինի նա սուտրական, գործարանական թէ պատերազմական: Եւ այն ընդունւած ձևը կրօնական է, չնայած որ կրօնականին համապատասխան կանոնաւ աշխարհական ձևեր՝ օրհնելու համար. մեր, աշխարհականներին շնորհաւորութիւնները և բարեմաղթութիւնները մի գործի չաջողութեան համար, անգամ այդ մաքուր ձաչկերովներ սարքելը և կենացներ խմելը և այլն ինչ բաներ են, եթէ ոչ աշխարհական ձևեր նոյն զգացմունքները արտապատելու համար, ինչ զգացմունքներ որ արտապատում են, երբ Աստուծո զօնութիւնն են կանչում գործի չաջողութեան համար, այսինքն երբ դիմում են օրհնութեան քահանայի կողմից այն կրօնի և եկեղեցու, որը դաւանում է մարդ: Այդ օրհնութիւնը պարտաւորիչ չէ ոչ ոքի համար. կամքի բան է՝ ով կ'ուզէ օրհնել կը տալ. բայց ով օրհնել է տալիս—նա պարտաւոր է ընդունել նաև օրհնելու ընդունւած ձևը և զորա հետ կապւած ծէսը:

Այս օրինակները ևս բերի միայն ցոյց տալու համար, որ մի որ և իցէ կրօնական արարողութեան մէջ կարող է լինել և կամ անստուծաւ կալ մի բան, որ աշխարհական ձևերով էլ արտապատել կարելի է. բայց որ այդ շատ հասկանալի բանը աշխարհականութեան մեզ իրաւունք չի տալիս ասել թէ այն արարողութիւնը կրօնական չէ: Ոչ, և հազար անգամ ոչ. կրօնականը մնում է կրօնական, որ ունի իւր չատուկ բովանդակութիւնը և իւր բովանդակութեանը պատշաճեցրած արտաքին ձևը—ծէսը:

Երգման մէջ քաղաքացիական բնաւորութիւն տեսնել ցանկացողները մատնանիչ են անում նաև այն բանի վերայ, որ երդումը քաղաքացիական հետեանքն եր ունի, օրինակ՝ սուտ երկուողը պատժուում է ոչ կրօնական, այլ քրէական օրէնքներով: Կատարեալ սովետութիւն՝ Նիթէ դա մի ապացոյց լինի, նաև մկրտութիւնը պէտք է որ քաղաքացիական ակտ համարել, որովհետև մկրտութեան վկայական աւուրը և կամ մանաւանդ չը մկրտւած ուսուր, ուսաց օրէնքներով, և պատժուում է

Ա քաղաքացիական շատ թանկագին իրաւունքներից գրկում է: Նոյնը և ամուսնացած բազմ չը պսակւած մարդը:

Խնդրի աչք մասը միանդամաչ պարզած համարելով, ևս կ'անցնում աչն բանին, թէ կարելի է արդեօք վերացնել երդումը թէ ոչ:

Երդումը ինչու համար է? Նորա համար է, որ մարդուս վերայ գործենք ամենամեծ ճշումը՝ ճշմարտութիւնը խոստովանացնելու համար: Կան մարդիկ, որոնց վերայ երդումն էլ չի ազդում, բայց օրվնսդիրը մեղաւոր չէ, որ մարդկութիւնը չի աւել աւելի ազդու միջոց մարդկանց ստիպելու համար որ ճշմարտութիւնը խոստովանեն: Իսկ է, եղել են ժամանակներ, երբ նոյն խկ քրիստոնէական մի եկեղեցի, որպիսին է հռովմէական կաթոլիկ եկեղեցին՝ երդումից դատ, կասկածւածին ամենասարտափելի մարմնական պատիժների էր ենթարկում՝ ճշմարտութիւնը խոստովանեցնելու համար: Գա ինկւիզիցիան էր, որի էութիւնը ամենքին չապտնի է: Բայց վտաղ բանից երեսց, որ այդ մարմնական վարհուրելի տանջանքները չեն հասնում իրանց առաջադրած նպատակին, և որ վարհուրած և ա՛ն ու զոզի մէջ ընկած մարդը խոստովանում է ոչ թէ ճշմարտութիւնը, այլ աչն, ինչ հաճելի է գատաւորին, ուրիմն շատ անգամ և մեծ մասամբ սուտ է խոստովանում՝ տանջանքից ազատւելու համար: Այդ և ուրիշ շատ փորձերը բերել են լուսաւորւած մարդկութիւնը աչն համոզմունքին, որ երդումը կղած միջոցներից աչն է, որ միաժամանակ և զօրեղ է և համեմատապէս ամենից բարոյական: Ահա հէնց այդ պատճառով է, որ երդումը ճշմարտութիւնը խոստովանեցնելու ամենալաւ միջոցն է ճանաչւած:

Բայց ում համար արդեօք? Չէ որ կան մարդիկ, որոնց համար երդումը բոլորովին աւելորդ է ճշմարտութիւնը ասելու համար. չէ որ շատերի համար բաւական է մի պարզ հարց և նոքա ճշմարտութիւնը կը խոստովանեն. կան և շատերը, որոնց համար արդէն բաւական է եթէ միաչն խոստանան կամ ազնիւ խօսք տան թէ ճշմարտութիւնը կը խոստովանեն:

Աչն, այդ բոլորը ճիշդ է. աչն, ճիշդ է որ բարձր բարոյական զգացմունքներով մարդիկ կան, որոնց համար երդումը աւելորդ է: Բայց այդ բոլորը ամենևին չի ապացուցանում, որ դատարանում աչգպիսի մարդիկ չը պէտք է երդում տան եթէ միաչն իրանց կրօնը աչգ թուլ է աալիւս: Եւ ինչու նոյն իսկ աչգպիսիսինների համար պարտաւորիչ պէտք է լինի երդումը: Աչն պարզ պատճառով, որ դատաւորը չի կարող իմանալ, թէ ով է ներկա եղող վկաներից ճշմարտախօսը և ով է նա, որի վերայ միաչն երդումը կարող է ազդել:

Երդումը սակաչն ազդող միջոց է ճշմարտութիւնը խոստովանեցնելու միաչն աչն ամենքի համար, որոնց դաւանած կրօնը ընդունում է երդումը: Աչն կրօնները, որոնք հերքում են երդումը կամ մեղք են համարում Աստուծոյ և ա՛նեղ զատաստանի անունով երդելը — պարզ է որ աչգ կրօն.

Ների հետևողներից անկարելի է երդում պահանջել: Երդումը սուրբ բանի տեղ չը դնելով, այլ կրօնների հետևողների վերաջ երդելը ազդեցութիւն չի կարող ունենալ: Ահա ինչու ուսաց նոր օրէնսդրութեան հիմնադիրները ոչ միայն չեն պահանջում, այլ և չեն ընդունում երդումն այն կրօնի մարդկանցից, որը երդումն չի ընդունում, օրինակ ուսաց սուրբ օրենի կոչւած աղանդաւորներից:

Բայց ինչպէս է այս բոլորը կապում արդեօք լեզւի խնդրի հետ: Եթէ, արդարադատութեան շահերի համար, երդումը պարտաւորիչ պէտք է լինի բոլոր այն կրօնների հետևողների համար, որոնք երդումն ընդունում են, պարտաւորիչ պէտք է լինի արդեօք նաև որ այդ երդումը այս կամ այն լեզուով լինի, թէ ոչ:

Ահա մի հարց, որը ժողովրդի ստաւր մեծամասնութեան համար ամենին խնդիր չի կարող լինել. ահա մի հարց, որի դիմաց ժողովրդի ահագին մեծամասնութիւնը կը կանգնի սառած, այն աստիճանի նրան խորթ կը թւի մի արդարի հարցմունք: Բայց և այնպէս հարցը դրւած է և որ գլխաւորն է՝ այդ հարցից խնդիր է չինւած դատարանական բարձրագոյն շրջաններում: Խնդիրը շատ ծանրակշիռ է. այդ հասկանում է և զիտէ ամեն հասկացող մարդ: Երկրիս արդարադատութիւնը մեծապէս հետաքրքրւած պէտք է լինի թէ այդ խնդրին բարձր շրջաններում ինչ ուղղութիւն պէտք է տրւի: Եւ մամուլի պարտքն է, հնարաւոր եղածին չափ, խնդրի պարզելուն նպաստել: Անուրանալի է որ այդ խնդրի այսպէս կամ այնպէս վճռելը բարձրագոյն տեղում առանց հետեանքների չը պէտք է անցնի արդարադատութեան գործի վերաջ մեր երկրում, և մանաւանդ մեր երկրում, ուր սուտ երդումը ժամանակիս ցաւերից մէկն է վաղուց ի վեր:

Ինչպէս է դրւած հարցը արդեօք? Տեղական «Նովոս Օրոգրեննիս» ուսութեամբ տեղեկացնում է այդ մասին այսպէս՝ «Մենք լսել ենք, որ Թիֆլիսի նահանգական դատարանի նախագահը զիմել է արդարադատութեան մինխտրութեանը այս հարցի պարզարանութեան համար թէ ուսուսերէն խօսող օտար ճաւատները պէտք է արդեօք դատարաններում երկրեցնեն բացառապէս ուսուսերէն լեզուով» (...должныли иновѣрцы, говорящіе по-русски, приводиться къ присягѣ въ судахъ исключительно на русскомъ языкѣ):

Պարզ է, որ այստեղ երդման այն ֆորմուլան, որ կարդացում է վկաներին՝ դատարաններում հալ քահանայի կողմից ընդունւում է լոկ որպէս թարգմանութիւն ուսուսերէնից: Դա սխալ է. հալ-լուսաւորչականի ընդունւած երդումը ամենին ուսուսաց երդումը չէ, որքան էլ երկուսի իմաստը և խօսքերը նոյնը լինեն: Հալի ընդունւած երդումը միմիայն այն է, որ ընդունել է Հալաստանեալց և կ ե ղ ե ց ի ն:

Դուք կ'ասէք՝ իսկ եթէ վկայն հայերէն չը գիտէ: Եթէ հայերէն չը գիտէ, և վկայն պահանջում է որ հասկանայ քահանայի բոլոր ասած-

ները՝ նրան պէտք է օգնէ մի թարգման, բոլորովին անպէս, ինչպէս թարգմանն է օգնում դատաւորին, երբ վերջինս ռուսերէն չը գիտցող մի հալին, թուրքին կամ վրացուն, ֆրանսիացուն, անգլիացուն հարցմունքներ է տալիս և նոցա ցուցմունքները թարգմանում ռուսերէն:

Գորանով բաւարարութիւն արւած կը լինի նրանց, որոնք հալերէն չը գիտեն: Բայց ես բոլորովին հակառակ եմ համարում կրօնական երգման իմաստին, եթէ հալ-լուսաւորչականին, թէկուզ ռուսերէն գիտցող հալին՝ հարկադրեն որ ռուսերէն երգէ: Ես աւելի հեռուն եմ գնում և պնդում, որ ան հոգեբանական դերը ի նկատի ունենալով որ կատարում է երգումը դատական գործերում, պէտք է արդեւ լի հալ-լուսաւորչականին ռուսերէն երգելը, բոլորովին անպէս, ինչպէս արգելում է առհասարակ երգելը ան մարդկանց որոնց կրօնական դաւանանքը չի ընդունում երգումը: Այդ է պահանջում դատարանական շահը:

Եթէ երգումն պահանջողը արդարագատական շահն է,—և այդ այդպէս էլ է,—ան ժամանակ ես ոչ միայն չեմ հասկանում թէ ինչու պէտք է իշխանութիւնը ստիպէ հալ-լուսաւորչականին, մահմեդականին, և այլն երգել ռուսերէն, այլ և չեմ հասկանում թէ ինչպէս կարելի է ազատութիւն տալ երգողին որ սա երգէ իւր ընտրած լեզուլ, թէ կուզնորա ընտրած լեզուն լինի իւր ամենալաւ գիտեցածը կամ իւր մանկութեան լեզուն: Եթէ երգման գործում ան, ինչ ազդում է մարդու վերայ, հէնց նորա կրօնական մասն է, ալիքն ան, ինչ կապում է մարդու իւր կրօնի և եկեղեցու հետ, և եթէ եկեղեցու լեզուն որոշած է, էլ ինչպէս կարելի է թող տալ որ երգողը ինքը ընտրէ ան լեզուն, որով նա պէտք է երգէ: Հէնց երեակակցեք մի մարդ, որը խտտակրօն հալ-լուսաւորչական է, բայց որը վրացախօս է Հէնց կարելի է երևակայել, որ մի ազգային մարդ կ'ուզենայ վրացերէն՝ երգել, եթէ մտադիր է ստել: Գատարանում նա ուլ սուտ վիպութիւնից պէտք է վնասի, ամենան իրաւամբ կարող է պահանջել որ այդ հալ-լուսաւորչական վրացախօսը հէնց հալերէն բնագրի վերայ երգէ: Իսկ որ այդ արարողութիւնից վնաս հարկ կը դատուի այդ հալ-լուսաւորչականին վրացերէն բացատրել կատարւած արարողութեան իմաստը—այդ խօմ երգման գործին չի կարող վնասել:

Ես շատ լաւ գիտեմ, որ լեզւին նշանակութիւն չը տալները իրանց արդարացնում են նորանով թէ հաւատը չատուկ լեզու չունի, և որ Աստուած Աստուած է, կուզի նա Աստուած, Dieu, Gott, Богъ թէ Ալլահ: Այդ ճշմարիտ է, և ճշմարիտ է ոչ միայն լուսաւորւածի համար, այլ և ողջտի համար. բայց բանը նրանումն է, որ երգումը միայն հաւատի բան չէ. հալ-լուսաւորչականը հրէայի հետ մի հաւատի է՝ միաստուածութեան մէջ, բոլոր քրիստոնէաների հետ մի հաւատի է՝ աւետարանի մէջ, բոլոր քրիստոնէաւոր ուղղափառների հետ մէկ է՝ Հուստամբի մէջ, բայց և անպէս հալ-լուսաւորչականը հրէական կրօնին չի պատկանում և նա չի պատկա-

նում հաթոյրկական, չի պատկանում լուծական, չի պատկանում ուսաց ուղղափառ. և կ ե ղ ե ց ի ն ե ր ի ն: Հաւատը լեզու չունի, բայց եկեղեցին, իբր հաստատութիւն, ունի իւր ընդունած լեզուն կամ լեզուները: Արեւելեան ուղղափառ կրօնին պատկանում են և լույները և ուսուցները. բայց աչն ժամանականկող կրք ուսաց ուղղափառ եկեղեցին սկսեց կազմել լուծական եկեղեցուց անկախ եկեղեցի, ուսաց եկեղեցին այլ ևս պարտաւոր չի համարում հետեւ լուծաց պատրիարքի կարգադրութիւններին, և չընտաւ որ կրօնները մէկ է, բայց որովհետեւ եկեղեցիները ջոկ են՝ երգումը կարող է այլ լինել՝ ուսաց ուղղափառ եկեղեցուն պատկանողի համար: Եւ լուծաց պատրիարքը չի այլ ևս երզման թուղթ շարադրում ուսուցների համար, թէկուզ դա լինի և ուսաց լեզուի: Երգումը բոլոր քրիստոնեաների համար մէկ չէ, այլ նա առանձին-առանձին է ամեն մի քրիստոնէական եկեղեցու համար: Հաշտուսաւորչական եկեղեցու լեզուն հայերէն է, երգումն էլ հայերէն է և պէտք է լինի: Երբ որ կը կազմւի հաշտուսաւորչական մի ջոկ եկեղեցի զիցուք ուսուցիչն լեզուի, աչն ժամանակ միաչն պարտաւորիչ կը լինի ալլալիսի կրօնական համայնքին պատկանողի համար երգել ուսուցիչն լեզուի: Իսկ մինչև որ ալլալիսի բան չը կալ—հայերէնը պարտաւորիչ կը լինի բոլոր հաշտուսաւորչական թէ քահանաների և թէ ալլ կրօնը զաւանդների համար: Եւ իդուր չի հրամայում ուսաց նոր օրէնսդրութիւնը առ 20 նոյեմբ. 1864 թականի իւր 365-ըդ լօրւածով թէ՛ վկայները երգեցնում են իրանց եկեղեցու ձէսերով:

Լ Ո Ւ Ս Ի Ն Ի

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՌԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ, ԻՏԱԷԻԱՆ ԵՒ ԱՆԳԼԻԱՆ, ՖՐԱՆՍԻԱՆ
ԵՒ ՌՈՒՍԻԱՆ

Վաղուց քաղաքական աշխարհը այնքան չի եղել զբաղւած զաշնադրական խնդիրներով, որքան ներկայ ամիսներում: Մի այնպիսի ժամանակ, երբ շատերը, առանց հիմնաւոր պատճառների, սպասում էին թէ երեք պետութիւնների: Գերմանիայի, Աւստրիա-Ունգարիայի և Իտալիայի մէջ զաշնակցութեան պայմանաժամը լրացած լինելով՝ նա այլ չի նորոգւել, և կամ որ զոնե Իտալիան կը հեռանայ այդ զաշնակցութիւնից, Արիսպի չաջորդ մինիստր զիբրուզինի մինիստրութեան ժամանակ, — պատահեց բոլորովին հակառակը. երեքպետեան զաշնակցութիւնը ոչ միայն նորից կապեց, այլ և նա մի նոր ոյժ ստացաւ շնորհիւ Անգլիայի, որը Իտալիայի հետ, բերանացի խօսք անկասկած, բայց դուրս և դրաւոր համաձայութիւն է կայացրել, մի համաձայնութիւն, որը ոչ միայն հակառակ չի կարող լինել երեքպետութեան զաշնակցութեան, այլ և մի տեսակ նորա լրացուցիչ ակտը պէտք է նկատուի: Յայտնի է, որ Իտալիան միացել է Գերմանիայի և Աւստրիա-Ունգարիայի հետ զլիսաւորապէս իրան պաշտպանելու համար Միջերկրական ծովի վերայ Ֆրանսիայի դէմ, այսինքն այն երկրի, որի դէմ է մղւած երեքպետեան զաշնակցութիւնը իւր սրի մի ծայրով:

Ուրեմն երեքպետեան զաշնակցութիւնը ոչ միայն նորոգեց մի հինգ տարով ևս, այլ և նա ուժեղացաւ կողմնակի մասնակցութիւնով Անգլիայի, քանի որ որ և է կերպով կապւելով զաշնակցութեան անդամներից մէկի հետ, Անգլիան առաջուց պէտք է իմացած լինէր այդ զաշնակցութեան պայմանները և սրանց տւած լինէր իւր հաւանութիւնը անգլիական տեսակէտից:

Յուսախաբութիւնը ուրեմն շատ մեծ էր երեքպետեան զաշնակցութեան հակառակորդների կողմից: Եւ որքան մեծ էր այդ յուսախաբութիւնը, նոյնքան էլ զօրեղ պէտք է լինէր նորա արտապայտու-

Թիւնը: Եւ ահա Ֆրանսիայի և Ռուսիայի տարիներով իրար մէջ սնուցած բարեկամական զգացմունքները բերին հասցրին նոյն այս յուլիս ամսում Կրօնշտատում, Պետերբուրգում և Մոսկւայում այն մանիֆեստացիաներին, որոնց հանդիսաւորութեան և սրտակցութեան շափով երբէք երկու ազգեր իրար չեն ողջունել և չեն արտայայտել իրար հետ բարեկամ մնալու ցանկութիւնը:

Ֆրանսիական զինուորական նաւատորմի էսկադրայի այցելութիւնը Ռուսաստանի առաջին պատերազմական նաւահանդիստ Կրօնշտատին և այդ էսկադրային բուռն ողջոյններով ընդունելը ռուսաց կառավարութեան և ժողովրդի կողմից — ուղղակի հետեանք է երեք պետեան դաշնակցութեան վերահաստատման Գերմանիայի, Աւստրիա-Ունգարիայի և Իտալիայի մէջ, և բարեկամական համաձայնութիւնների կայացնելուն Իտալիայի և Անգլիայի մէջ անցեալ ամիսներում:

Այսպիսով զուտ քաղաքականութիւնը նորից իւր բոլոր ոյժով մակերևոյթի վերայ բարձրացաւ և մի առժամանակ յետ մղեց բոլոր ուրիշ եւրոպական հարցերը: Բնական է, որ ամենքը հետաքրքրւած են այս հարցերով թէ արդեօք ինչ պէտք է սպասել եւրոպական պետութիւնների այս որոշ խմբումներից, ինչ ձգտումներ կարող են նոքա ունենալ, որքան մնացուն են նոքա, ինչ ազդեցութիւն կ'ունենան նոքա եւրոպայի ապագայի վերայ և կամ մանաւանդ մօտիկ ապագայի համար ինչ հետեանքներ են խոստանում նոքա:

Այս հարցերը իրանք-իրանք են դնում լուսաւոր աշխարհի առջև, և նոցա վերայ լռելեայն կամ հրապարակօրէն խորհում են կամ խօսում ամենքը: Իսկ վերջին ամիսը նոքա էին գլխաւոր նիւթը քաղաքական թերթերի:

«Մուրճ»-ի ընթերցողներին լաւ յայտնի պէտք է լինի այն նշանակութիւնը, որ մենք միշտ տւել ենք այն քաղաքական դաշնակցութիւններին, որոնց մէջ Գերմանիան ունեցել է առաջնորդող դեր: Մենք միշտ խոստովանւել ենք և հարկաւոր ենք համարել պարզ և զրական կերպով յայտնել մեր կարծիքը, որ Գերմանիայի դաշնակցութեանը Աւստրիա-Ունգարիայի հետ մի զլուխ-գործոց էր նախկին գերմանական կանցլէր իշխան Բիամարկի և որ նա, հիմնւած լինելով երկու պետութիւնների ոչ վաղանցուկ քաղաքական շահերի հետ, մի նոր դարազլուխ է կազմում եւրոպական արտաքին քաղաքակա-

Նութեան համար: Նայն այդ կարծիքը, որ մենք մեր առաջին խկ յօդաձուժմ որոշ կերպով յայտնել ենք և որին վերապառնալու քանիցս առիթներ ենք ունեցել, պէտք է կրկնենք և այժմ, բացարձակ կերպով յայտնելով, որ Վերմանիայի դաշնադրութիւնը Աւստրիա-Ունգարիայի հետ այն քաղաքական մեծ ակտերիցն է, որոնց փոփոխութեան վերայ դժար կարող են ազդել մասնաւոր քաղաքական դէպքերը: Այժմ այդ դաշնադրութեան կենսունակութեան համար ապացոյցներով խօսելը աւելորդ է. 1879 թւականին կապած լինելով, ահա արդէն տասներկու տարի է, որ նա տեւում է և այդքան տարիներում Եւրոպայի քաղաքական հանգամանքները և զօրեղ թշնամութիւնները ոչ միայն չը կարողացան խախտել նորա հիմունքները այլ դեռ ընդհակառակը միայն նորանոր հիմունքներ ստեղծեցին նորան ամրացնելու և նորից մի հինգ տարով շարունակելու համար: Այն բոլոր մարդարէութիւնները որ անում էին այդ դաշնակցութեան մասին, շինծու էին և ոչ-անկեղծ:

Բայց այն, ինչ կարելի է ասել գերմանական-աւստրո-ունգարական դաշնակցութեան մասին, անպայման կերպով չի կարող վերաբերել նաև եռապետան դաշնակցութեան մասին, որի անդամներից երրորդը՝ Իտալիան է: Երեք անդամներից սա նա է, որի վերայ ամենից շատ կարող են ազդել հանգամանքները և որը կապած է իւր երկու դաշնակիցների հետ միմիայն այնպիսի շահերով, որոնք թանկ չեն ոչ Վերմանիայի և ոչ Աւստրիա-Ունգարիայի համար: Իտալիան կապել է նոցա հետ՝ պաշտպանութիւն գտնելու համար Ֆրանսիայի դէմ Վիժերկրական ծովի վերայ: Արդ, որ Վերմանիայի և ոչ մանաւանդ Աւստրիա-Ունգարիայի համար նւիրական չեն կարող համարուել Իտալիայի այդ ձգտումները: Միակ բանը, որի համար իրանց հետ միացրել են նոքա Իտալիային, այդ այն պարսաւորութիւնն է, որ դրւած է Իտալիայի վերայ՝ օգնել Վերմանիային Ֆրանսիայի դէմ՝ սոցա հետ պատահելիք մի պատերազմի ժամանակ: Բայց բանը սա է, որ ոչ Վերմանիայի հաշիւները Ֆրանսիայի հետ նւիրական են իտալացւոց համար և ոչ էլ իտալական հաշիւներն են նւիրական գերմանացւոց, և մանաւանդ աւստրիա-ունգարացւոց համար: Թէև երկուսի՝ թէ Իտալիայի և թէ Վերմանիայի ոյժերը լարւած են Ֆրանսիայի դէմ, բայց մէկի ձգտումների առարկան միւսի

ձգտումների առարկան չէ, իսկ Աւստրիա-Ռենգարիան խօսք բոլորովին բնական բարեկամ չի կարող համարել Ռուսիայի համար և Ռուսիան՝ Աւստրո-Ռենգարիայի համար, քանի որ թէ իրար սահմաններում և թէ Ադրիատիքական ծովի, ուրեմն անուղղակի կերպով նաև Միջերկրական ծովի վերայ և նոյն իսկ Բալկանեան թերակղզում՝ Դալմաթիայում, նոքա հէնց իրանք իրար հետ վիճելի առարկաներ ունեն: Զարմանալի չէ ուրեմն, որ նոյն իսկ Ռուսիայում բաւականին զօրեղ ձայներ են լսուած Ռուսիայի՝ դաշնակցութեան դէմ Գերմանիայի և Աւստրիա-Ռենգարիայի հետ, և պահանջներ են լսուած՝ բարեկամանալ Ֆրանսիային, որի հետ թէ պատմական, թէ կուլտուրական և թէ անտեսական շատ յարգելի շահերով կապուած են այդ երկու բոմանական երկիրները: Բացի այդ՝ Ռուսիան այնպիսի դրութեան մէջ է, որ Ֆրանսիան կարողանում է Ռուսիայի թշնամութեանը պատասխանել զօրեղ հարւածներով մանաւանդ Ֆինանսական և առևտրական ասպարէզներում, չը խօսած այն քաղաքական թշնամութիւններին, որ Ֆրանսիան ինչ և իցէ, բայց էլի շարունակ կարողանում է անել Ռուսիային Միջերկրականում:

Վերը առաջ բերած հանգամանքների շնորհիւ Ռուսիայի դիրքը բաւականաչափ ապահով չի կարող համարել: Կապուած լինելով միմիայն Գերմանիայի և Աւստրիա-Ռենգարիայի հետ, և այդպիսով իւր վերայ դարձնելով Ֆրանսիայի թշնամութիւնը, Ռուսիան աւելի է կորցնում, քան նա վաստակում է, այսինքն քան նա կարող է զօրեղ պաշտպանութիւն գտնել Գերմանիայից և Աւստրիա-Ռենգարիայից, որը մինչև անգամ չարախնդաց է Ռուսիայի անաջողութիւններին:

Ղորանից է ահա այն բարեկամութիւնը, որին տարիներ առաջ ձգտում էր Ռուսիան հաստատել Անգլիայի հետ: Անգլիան այն պետութիւններիցն է, որոնք ամենամեծ շահ ունին Միջերկրական ծովի նկատմամբ: Այն ժամանականից, երբ Սուէզի պարանոցը, որ բաժանում էր Միջերկրականը Կարմիր ծովից, ուրեմն և Հնդկական Ովկիանոսից, այն ժամանականից, ասում եմ, երբ այդ պարանոցի միջով անցկացրեց նաւարկելի մեծ ջրանցք—Սուէզի ջրանցքը— Անգլիայի համար Միջերկրականը դառաւ ուղիղ ճանապարհ դէպի Հնդկաստան և Ասիական ուրիշ կալւածները: Բոլորը, ինչ վերաբերում է Միջերկրականին, վերաբերում է նաև Անգլիային, որը ամեն

ջանք գործ է գրել այդ ծովի բանալիները իւր ձեռքը զցել՝ մի ծայրում ունենալով Ջիբրալտար բերդաքաղաքը, որով նա իշխում է Ջիբրալտար նեղուցի վերայ, միւս ծայրում ձեռք բերելով Սուէզի ջրանցքի նկատմամբ եթէ ոչ բացարձակ իշխանութիւն, գոնէ ամենամեծ ազդեցութիւն: Նոյն այդ շահերի համար Անգլիան թանկ գնահատում է իւր ձեռքում գտնուող Մալտա փոքրիկ կղզին Միջերկրականի մէջտեղում և այն բացառիկ ազդեցութիւնը, որ ձեռք է բերել Եգիպտոսում, որտեղ նա, իբր թէ միայն Խեյիւին օգնելու համար, Անգլիան իւր սեպհական զօրքն է պահում, զրդսելով իւր դէմ Պրանսիայի բացարձակ ահաճութիւնը և բողոքները, որոնց սակայն Անգլիան բաւարարութիւն չի տալ և չի էլ ուզում տալ: Ահա այդ՝ Պրանսիայի հետ ընկած Անգլիային է որի հետ ձգտում է բարեկամութիւն հաստատել Իտալիան, բարեկամութիւն, որի հիմունքները որոշած էին 1887 թւականին և որոնք երևի աւելի որոշել են այժմ, տեղիք տալով անցեալ ամսում երկար բացատրութիւնների անգլիական պարլամենտում՝ մինրստրութեան և Պրանսիայի բարեկամութիւնը գնահատող պատգամաւորների մէջ:

Այլ նոր համաձայնութիւնը Իտալիայի և Անգլիայի մէջ ունեցաւ այն հետեւանքը, որ Պրանսիան, տեսնելով որ եռապետական դաշնակցութիւնը նորոգւեց երկար տարիներով, և ուրեմն կտրելով իւր յոյսը Իտալիայից, յետոյ տեսնելով Անգլիային առանձին բարեկամական չարաբերութիւնների մէջ Իտալիայի հետ, — Պրանսիան, ասում եմ, ամեն կողմից յոյսերը կտրւած տեսնելով, բարեկամների ընտրութիւն չունենալով՝ աւելի մեծ վստահութեամբ պէտք է փաշփայէր Ռուսաստանի բարեկամութիւն, այն Ռուսիայի, որի դէմ է զլիսաւորապէս լարւած եռապետական դաշնակցութիւնը: Պրանսիական էսկադրին չը լուծ հանդէսների փառահեղութեամբ ընդունելը — արտայայտութիւն էր երկար տարիներով ծրագրած մի գաղափարի իրագործման, ծրագիր, սակայն, որը հանգամանքների հարկադրութեան ծնունդ է և ոչ բացորոշ կուլտուրական պահանջների և բնական ու չարասեւ համակրութեան:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ՅԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ԽՄԲԱԳԻՐ, Թույլ տւեք ալս իմ երկտող գրութիւնը զե-տեղել ձեր պատւական ամսաթերթի էջերում ի գիտութիւն ընթերցող հասարակութեան:

Աչքի առաջ ունենալով մի մանկավարժական թերթի կարևորութիւնը մեր դպրոցական շրջաններում, մտադիր եմ հրատարակել «մանկավարժական գրադարան» վերնադրով մանկավարժական մի ժողովածու երկու հատորով, որի իրազործումն հազիւ եկող տարւալ չունարին կարող պիտի լինեմ գլուխ բերել: Երկու հատորի համար բաժանորդագիճն է երկու ռուբլի:

«Մանկավարժական գրադարանի» բովանդակութիւնը պիտի կազմեն:

1 Դասական մանկավարժների կենսագրութիւնը և ուս-մունքը ըստ ժամանակագրական կարգի:

2 Թարգմանութիւններ դասական մանկավարժների ընտիր երկերից, լինեն դոքա ուսումնական թէ կրթական:

3 Գիտնական չօղւածներ մանկավարժութեան և նորա օժանդակ գիտութիւնների բոլոր ձիւղերի վերաբերեալ:

4 Նկարագրութիւններ նշանաւոր դպրոցների կազմակեր-պութիւնների:

5 Կրթական և դպրոցական գրութիւնը քաղաքակրթւած ազգերի մէջ:

6 Ընդհանուր տեսութիւն մանկավարժութեան չառաջա-դիմութեան վերալ և տեղեկութիւններ մանկավարժական աշ-խարհից:

7 Քննարանութիւն և գրախօսութիւն հաջերէն մանկա-վարժական, ժողովրդական կրթական և դպրոցական երկասի-րութիւնների վերալ և ալ՝ ինչ կարող է օգտակար լինել մեր դպրոցական և ժողովրդական կրթութեան:

Առաջին հատորի նիւթերը չանձնած լինելով արդէն տպագրութեան Մոսկւայում պ. Մ. Բարխուղարեանի տպարա-

նին, չոյս ունեմ, որ հալ հասարակութիւնը, նամանաւանդ զպրոցական գործի նախանձախնդիր անձինք կը ջանան թէ բաժանորդ գրեւելով և թէ բարոյական օժանդակութեամբ նպաստել այս ժողովածուի հրատարակութեան, ըստ որում մանկավարժութեան հմուտ անձինքներից պիտի սիրով և շնորհակալութեամբ ընդունելն մանկավարժական թէ ինքնուրոյն և թէ թարգմանական ընտիր գրեւածներ:

Գործակցութիւն և բաժանորդագրութիւն չանձնաւնողները թող զիմնն հետևեալ հասցէին՝ Тифлисъ, Сіонскій переулокъ № 5, домъ А. Бархударіанца.

Հրատարակիչ՝ Յովհաննէս Բարխուդարեանց.

ՎՐԻՊԱԿՆԵՐ: «Մուրճ»-ի № 7—8, Երես 870, ներքեկից երկրորդ տող, տպւած է՝ որ ի պէտք է լինի օգի: Երես 875, ներքեկից 10-րդ տող, տպւած է՝ մեր երեխաների, պէտք է լինի իւր երեխաների:

III SUPԻ “ՄՈՒՐՃ” III SUPԻ
”

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀՍՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

1891

ԹԻԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է

- «ՄՈՒՐՃ» ամսագիրը կը հրատարակուի 1891 թվականին նոյն ծրագրով որպէս և նախկին տարիներում:
- «ՄՈՒՐՃ»-ը կը հրատարակուի ամէն ամիս 8-11 թերթ մեծութեամբ: «ՄՈՒՐՃ»-ի ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԸ ձրի կը ստանան ՏԻԿԻՆ Մ. ՄԱՐԻՍԵԱՆԻ «ՀԵՂԻՆԷ» վէպի 1890 թվականի «Մուրճ»-ում տպւած բոլոր գլուխները, այն է՝ վէպի առաջին հատորը, բաղկացած մօտ 200 մեծադիր երեսներից: «Հեղինէ» վէպի շարունակութիւնը աւարտուելու է 1891 թ. ընթացքում:
- «ՄՈՒՐՃ»-ի նոր բաժանորդները, բացի զորանից, արտօնութիւն կ'ունենան ստանալու «Մուրճ» ամսագրի 1889 և 1890 թվականների բոլոր 24 համարները 14 բուբլիով, մինչդեռ ոչ-բաժանորդներին կը ծախուի նոյնը 24 բուբլիով:
- «ՄՈՒՐՃ»-ի գրականական մասը ապահովուած է մասնակցութեամբ բազմաթիւ աշխատակիցների, որոնց թիւը մինչ այժմ անդադար աճած է:
- «ՄՈՒՐՃ»-ի վրայական բաժինը առանձին ձոխութիւն կը ստանայ:

«ՄՈՒՐՃ»-ի բաժանորդագրինն է տարեկան 10 բուբլի, որ կարելի է վճարել նաև մաս-մաս, ստորագրելիս առնազն 5 բուբլի և մինչ յունիսի 1-ը ամբողջը վճարելու պայմանով:

Ուսուցիչները և ուսանողները վճարում են 8 բուբլի, ստորագրելիս առնազը 3 բուբլի և մինչ յունիսի 1-ը ամբողջը վճարելու պայմանով:

ԹԻՖԼԻՍՈՒՄ գրում են բաժանորդ «Մուրճ»-ին՝

1) «Մուրճ»-ի խմբագրատանը:

2) Կենտրոնական գրավաճառանոցում, Գոլովինսկի պրոսպեկտ, տուն Միրիմանովի:

3) Խիզեկելի պաւլիսոնում, Ալեքսանդրեան այգու և Բարխաթինսկի փողոցի վերին անկիւն:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԱՏՊԻԱՆՆԵՐ «ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻՑ

	Բ. Կ.
1. «ՄՈՒՐՃ» ամսագիր, 1889 թ., երկու հատորով . . .	12 —
Նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . . .	7 —
2. «ՄՈՒՐՃ» ամսագիր 1890 թ. Լազարյանի, երկու կազմած հատորներով	12 —
Նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . . .	7 —
3. ՊԹՇԵԱՆՅ, ՊԵՐՃ.— «ՅԵՅԵՐ» (վէպ)	1 —
4. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ, ԳՐԻԳՈՐ (ՂՂարցի)՝ «Մանուկների մարտողութեան գործարանների մի քանի հիւանդութիւնները»	— 05
5. ԱՏԲՊԵՏԵԱՆ, ՍԱՐԳԻՍ.— «ԽԵԻ-ԿԱՐԱՊԵՏ», վէպ հայ-կաթողիկեների կեանքից	1 —
6. ԼԷՍ.— «ԿՈՐԱԾՆԵՐ» (վէպ)	— 50
7. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ, ՍՈՂՈՄՈՆ.— «ՀԱՅ ԳԻՒՂԱՅՈՒ ՍԵՒ ՕՐԸ»: (Կեանքից պատկեր)	— 40
8. ՍԱՐԳՍԵԱՆՅ, ԼԵՒՈՆ.— «ԱՅՅ ԹԻՐՔԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ»	— 60
9. ՊԹՇԵԱՆՅ, ՊԵՐՃ.— «ԲՂԴԵ», վէպ	1 20
10. ՓԱՓԱԶԵԱՆՅ, Վ.— «ԽԱԹ-ՍԱԲԱ» (հայ բռնան. կեանքից	— 15
11. ՄԱՐԻՍԵԱՆ, ՊԻԿԻՆ Մ.— «ԷԲԴԻՆԵ» (մեծ վէպ), ա. մասը	— 50
12. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆՅ, ՅԱՐՈՒԹԻՒՆ.— «ՍԵԻ-ԼԵՌՆՅԻՔ» (տոհմագրական պատկեր)	— 15
13. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ.— «ՀԱՐԵԻԱՆՆԵՐ»	— 03
14. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ.— «ՄԻՆԱՍԻ ԵԶԸ»	— 03
15. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ.— «ԵԶԻԴ ԱՂԶԻԿԸ»	— 05
16. ՆՈՅՆԸ.— «ԾԱՆՐ ՔԱՐԸ»	— 03
17. ՔԻՇՄԻՇԵԱՆՅ, ԱԼ.— «ԲՈՅՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԸ»	— 15
18. ԲԱԼԱՂԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ.— «ՄԻԿՐՈՒՆԵՐԸ»	— 10

Վերոյիշեալ գրքերը ստանալու համար ցանկացողները թող զիմեն ուղղակի՝ ВЪ Редацію журнала „МУРՃ“. Վճարել կարելի է նաև պոստի մարկաներով:

ՀՈՅՍ ՏԵՍԱԻ

Ա. Արաւսիանեանցի

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԶԳԵՐԻ

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Զարդարած Հին եգիպտական, փիւնիկական և ասորական գրութիւններով և Արևելքի Հին պետութիւնների քարտեզով):

281 երես, յատաշարան եւ նիւթերի ցանկ

արած է 800 օրինակ, փայլուն թղթի վերայ

Գինն է ճանապարհածախսով միասին 1 րուբլի

Պէտք է դիմել կամ Հեղինակին՝ Тифлисъ, въ редакцію журнала „МУРЧЪ“, և կամ՝ Въ центральный книжный магазинъ.

1892 թ. յունւարից լոյս կը տեսնէ Մոսկուայում պ. Մ. Բարխուդարեանի տպարանից

„ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ“

Բաժանորդագինն է երկու հատորին միասին 2 րուբլի, իսկ իւրաքանչիւր հատորի գինն է 1 ր. 50 կոպէկ:

Հրատարակիչ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՅ:

«Թիֆլիզի Անկերութեան Հայոց զրքերի հրատարակութեան»
խմբագրական մասնաժողովը սրանով յայտարարում է, որ տպագրու-
թեան համար ընդունում են հետևեալ բովանդակութեան ինքնու-
րոյն և թարգմանական գրւածքներ.

1. Գեղարւեստական:

2. Գիտնական. զուտ գիտնական գրւածքներից կը տպագրեն
միայն այնպիսիները, որոնք վերաբերում են հայոց կեանքի հետա-
զօտութեան, իսկ գիտութեան միւս ճիւղերից միայն ժողովրդակա-
նացրած զրքեր:

3. Գասագրքեր, նամանաւանդ ընդհանուր գրականութեան,
ընդհանուր պատմութեան, հայոց գրականութեան, բնական պատ-
մութեան և ֆիզիկայի ձեռնարկներ, կազմած մեր թեմական զըպ-
րոցների համար:

4. Մանկական ընթերցանութեան համար:

5. Նիւթեր մեր ժողովրդի կեանքի ուսումնասիրութեան վե-
րաբերեալ (աւանդութիւններ, երգեր, սովորութիւններ և այլն):

Մանօթութիւն. մանրամասն ծրագիր վերոյիշեալ նիւթերի
ժողովուր համար կը տպագրուի յետոյ: Անկերութեանս խմբ. մասնա-
ժողովը իրան է վերապահում ներկայացրած նիւթերից ընտրութիւն
և քաղւածք անել, եթէ ուղարկողը նախօրօք որոշ պայմաններ չէ
գնում:

Տպագրւած զրքերի համար վարձատրութիւն տրւում է մի
տպագրական թերթին՝ ինքնուրոյն գրւածքների համար՝ 20—25 ռ.,
իսկ թարգմանական գրւածքի համար՝ 15—20 ռուբլի:

Բացառիկ դէպքերում վարձատրութիւնը կարող է և աւելի
լինել խմբ. մասնաժողովի հայեցողութեամբ:

Հասցէն՝ Тифлисъ, Правленію Тифлискаго Общества изданія ар-
мянскихъ книгъ.

Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Անկերութիւնը յայտնում է
սրանով, որ ընկերութեանս 1891 թ. անդամները կարող են ստանալ
Կենտրոնական գրավաճառանոցից Անկերութեան հետևեալ հրատա-
րակութիւնները.

1. Տղատոյ. — «Ատուած գիտէ արդարն ու մեղաւորը»:

2. Վալդնէր — «Հաւատարիմ Սաւիտրին»:

3. Պէտտալոցցի. — «Ինչարդ և Գէրորդ»:

4. «Նալ և Գամայեանտի»:

5. Ռօզընհայն. — «Նաւի փոքրաւորը»:

6. Սպիրի. — «Ուռենց Յովսէփ»:



„Մ Ո Ւ Ր Ճ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ – ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՅԻԱՅ Է

Հրատէր եհ.ք կարգում հայ հասարակութեան՝ բաժանորդ գրել մեր միակ քաղաքական-հասարակական-գրական տնտաւրին և միշտ տայ նրան այս 1891 թւականին ցանկալի ճոխութեամբ հրատարակել:

Տարեկան գինն է 10 ռ.

ԳՐԻՆԸ, ԿԱՐԵԼԻ Է

Թիֆլիսում՝

1) Խմբագրատան մէջ:

Բաքում՝

1) Թաւաչեանցի գրավաճառ անոցում, 2) պ. Աւետիք Կաթիկեանցի մօտ (Վարդապետական Բնակարանի ընթերցարանում):

Երևանում՝

1) Արախան Տէր-Վարապետեանցի գրասենեակում:

Խմբագրութիւնը գտանում է Վիկտորինեան փողոց, տան Թանդոջեանի, պրօզիննաղի զինաց:

Ուրիշ տեղերից պէտք է գրակ՝ Тифлисеъ, Редація журнала „МУРЧЪ“

Արատահամանից՝ Tiflis, Rédaction de la Revue MOURTCH